Cover page

№1 Մինի սերիաներ
Քայլեր դեպի անձնական վերածնունդ

ՔԱՅԼԵՐ ԴԵՊԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Նոր ստանդարտ հրատարակություն՝ լրացուցիչ փորձառություններով

Լցված Սուրբ Հոգով
Ինչպե՞ս եք դա զգում:

ՀԵԼՄՈՒՏ ՀԱՈՒԲԵՅԼ

Հրատարակիչ՝
Բնօրինակ՝ «Schritte zur persönlichen Erweckung»
TOP Life Wegweiser-Verlag GmbH, Վիեննա
Austrian Publishing House
Verlagsarchivnummer՝ 040 415
ISBN՝ 978-3-903002-14-2

Անգլերեն հրատարակություններ - Տպված են՝
2015 թվականից մինչև 2019 թվականի հոկտեմբերը տպագրվել են 23 հրատարակություններ՝ Գերմանիայում, Հարավային Կորեայում, ԱՄՆ-ում, Ֆիլիպիններում, Զամբիայում, Ավստրալիայում, Հնդկաստանում, Մեծ Բրիտանիայում

Հայեցակարգ՝ Սայմոն Էյցենբերգեր, www.desim.de
Արտադրող՝ Konrad Print & Medien, www.konrad-medien.de
Ծրագրի կառավարում՝ Քրիստիան Շտրոկ

Կապ և պատվեր օտար լեզուներով՝
© Helmut Haubeil, RosenheimerstraЯe 49
D-83043 Bad Aibling / Oberbayern – Germany
Էլ-փոստ՝ helmut@haubeil.net
Հեռախոս՝ +49 (0) 8061 4900 712
Լեզուներ ՝ գերմաներեն և անգլերեն

Թարգմանություններ:
Եվրոպական լեզուներ. բուլղարերեն, խորվաթերեն, չեխերեն, դանիերեն, հոլանդերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն (բնօրինակ), գրենլանդերեն, հունգարերեն, իտալերեն, լատվիերեն, նորվեգերեն, լեհերեն, պորտուգալերեն-Բրազիլիա, պորտուգալերեն-Պորտուգալիա, ռումիներեն, ռուսերեն, սերբերեն, սլովեներեն, իսպաներեն, շվեդերեն, ուկրաիներեն:

Ասիական լեզուներ. Bahasa-Indonesia, պարզեցված և ավանդական չիներեն, Հնդկաստան՝ հինդի, odia, mizo, telugu, ճապոներեն, կորեերեն, մոնղոլերեն, տագալո-ֆիլիպիներեն, թայերեն-Թաիլանդ, ուրդու-Պակիստան, վիետնամերեն, հայերեն

Նախապատրաստման փուլում են՝ բահասա-Մալայզիա, բենգալերեն/Բանգլա-Բանգլադեշ, բիրմերեն-Մյանմար, պարսկերեն (Իրան), սինգալերեն-Շրի Լանկա, Տոնգա-Խաղաղ օվկիանոսի Տոնգա կղզիներ

Աֆրիկական լեզուներ. ամհարերեն-Եթովպիա, կիրունդի-Բուրունդի, կինյարվանդա-Ռուանդա, սուահիլի-Քենիա, Տանզանիա, Զսուլու-Հարավային Աֆրիկա

Կայք:
www.steps-to-personal-revival.info և www.schritte-zur-persönlichen-erweckung.info
Կան և անվճար կլինեն թարգմանված բոլոր լեզուներով՝ կարդալու, տպելու, ընկերներին ուղարկելու համար: Մենյու-ցանկի կետերը. «Առաջնորդ»՝ ինչպե՞ս առաջացնել հետաքրքրություն: «Կիսվեք դրանով», զարգացում (ո՞ր ճանապարհով է Տերը զարգացնում գրքերի տարածումը), «Վկայություններ» (100-ից ավելի վկայություններ), «Կապ»: Կա նաև շարունակության՝ «Մնացեք Հիսուսում» գիրքը:

ՔԱՅԼԵՐ ԴԵՊԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

USA
Remnant Publications
649 E. Chicago Rd
Coldwater MI, 49036
Phone 800-423-1319
or 517-279-13043
Web address for orders:
www.remnantpublications.com
Available at your Adventist Book Centers

Canada
Lucas Jurek
118 G First Avenue North
Williams Lake, BC
V2G 1Y8
Email:lucasjurek@gmail.com
Mobile number: 250 983 – 2650

Australien
Colin Hone
Booklets in English
colin.hone@murrayhone.com.au

Philippines
Allan D. Faina
Email: berevived7.14@gmail.com
SDA church
Fidela Herrera Subd
Bgy. Santol, Tanza, Cavite-4108
Phones: (63) 926 054 1175

Russia
Source of Life Publishing House
Vostochanya St. 9, Zaoksky 301000
Tula Region, Russia
Tel. +78 73 42 01 01
www.lifesource.ru

Europe - Russian-language literature
Christa Medien GmbH
Pulverweg 6
D-21337 Lьneburg (Germany)
Tel. +49 (0)4131 9835-580
www.christa-medien.eu
und www.christa-shop.eu
E-Mail: info@christa-medien.eu

Germany and abroad
Wertvoll leben
Im Kiesel 3, D-73635 Rudersberg

www.wertvollleben.com
Email: info@wertvollleben.com
Phone: +49 (0)7183 - 3071332
Phone: +49 (0)7183 – 3099847

Austria
TOP Life Wegweiser-Verlag
Prager Str.287, A-1210 Wien/Vienna
www.toplife-center.com
Email: info@wegweiser-verlag.at
Phone +43 (0)13199301-0

Austria and Germany
Adventist Book Center
Bogenhofen, A-4963 St.Peter/Hart
www.adventistbookcenter.at
Email: info@adventistbookcenter.at
Phone +43 (0)2294000

Switzerland
Advent-Verlag
Leissigenstr. 17, CH-3704 Krattigen
www.av-buchshop.ch
Email: info@adventverlag.ch
Phone +41 33 654 1065

ՍԵՄԻՆԱՐՆԵՐԸ ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ՝

ԱՄՆ-ը և շատ երկրներ. www.spiritbaptism.org -սկզբնական էջում ոլորել ներքև
Գերմանիա, Ավստրիա, Շվեյցարիա, եվրոպական երկրներ.
www.steps-to-personal-revival.info -սեղմեք գերմանական տարբերակը- Kontakt էջում ոլորել ներքև
Ֆիլիպիններ. Allan D. Faina, էլ. Փոստ՝: allan@lightingtheworld.org, ՅՕԱ եկեղեցի.
Fidela Herrera Subd, Bgy. Santol, Tanza, Cavite-4108, Phones: (63) 926 054 1175

ՔԱՅԼԵՐ ԴԵՊԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Լցված Սուրբ Հոգով

ՀԵԼՄՈՒՏ ՀԱՈՒԲԵՅԼ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
ՔԱՅԼԵՐ ԴԵՊԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ
Լցված Սուրբ Հոգով

9
ՆԱԽԱԲԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ և ԱՊԱԳԱ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԲԱՁՄԱՊԱՏԿԵԼՈՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

14
ԳԼՈՒԽ 1
ՀԻՍՈՒՍԻ ԱՄԵՆԱԹԱՆԿ ՊԱՐԳԵՎԸ
Ի՞ՆՉ Է ՀԻՍՈՒՍՆ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ
Ծանո՞թ եք Հիսուսի ամենահզոր ուղերձին

23
ԳԼՈՒԽ 2
Ո՞ՐՆ Է ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՔԸ
Կա՞ արդյոք հոգևոր պատճառ մեր խնդիրներին: Արդյո՞ք այդ պատճառը Սուրբ Հոգու անտեսումը չէ:

45
ԳԼՈՒԽ 3
ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է ԱՐԴՅՈՔ ԳՏՆԵԼ ՆՐԱՆՑ ԼՈՒԾՈՒՄԸ: Ի՞ՆՉՊԵՍ

Ինչպե՞ս կարող ենք երջանիկ ուժեղ քրիստոնյաներ դառնալ:
Ինչպե՞ս կարող Սուրբ Հոգին լցնել մեր կյանքը :

60

ԳԼՈՒԽ 4

ԻՆ՞Չ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱԿՆԿԱԼԵԼ *Ի՞նչ առավելություն* ունենք, երբ մեր կյանքը լցված է Սուրբ Հոգով:

Ի՞նչ ենք մենք կորցնում, երբ չենք աղոթում Սուրբ Հոգու մասին:

79

ԳԼՈՒԽ 5

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈՐՁԻ ԲԱՆԱԼԻՆ

Ինչպե՞ս կարող եմ իրականացնել Աստծո ծրագիրը ինձ համար:
Ինչպե՞ս կարող եմ աղոթել, որ վստահ լինեմ, որ լցված եմ Սուրբ Հոգով:

92

ԳԼՈՒԽ 6

Ի՞ՆՉ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՄԵԶ ՍՊԱՍՈՒՄ ԱՌՋԵՎՈՒՄ

Անձնական փորձառություններ, ինչպես նաև եկեղեցիների, կոնֆերենցիաների և միությունների փորձառությունները

101

ԳԼՈՒԽ 7

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ուրախությունը՝ որը մենք շնորհում ենք ուրիշներին՝ կրկին մեզ է վերադառնում: (Գերմանական ասացվածք)

Ինչպե՞ս կարող եմ օգնել ուրիշներին զգալ «Կյանքը առատությամբ» (Հովհ. 10,10)

110
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՏՔԵՐ

111
ՀԱՎԵԼՎԱԾ

Առաջարկություն հետագա ուսումնասիրության համար

ՏԵՐՆ ԻՆՔՆ Է ՊԱՏՎԻՐԱՆ ՏՎԵԼ: 1

ԹՈՒՅԼ ՏՎԵՔ, ՈՐ ՀՈԳԻՆ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՐԵՆ ԵՎ ԲԱՀՄԻՑՍ ԿՐԿԻՆ ԼՑՆԻ ՁԵՁ 2

1. «Հիսուսի լեռան քարոզը» 20.3 (egwwritings.org)
2. Johannes Mager, Auf den Spuren des Heiligen Geistes (Lüneburg, 1999), Seite 101

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՔԱՅԼԵՐ ԴԵՊԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Լցված Սուրբ Հոգով

Ի՞նչը դրդեց այսպիսի խորը ուսումնասիրել «Ապրել սուրբ հոգով» թեման:

2011-ի օգոստոսի 14-ին, երբ ես Շվեյցարիայի Բերնի լեռնաշխարհում գտնվող Քանդերգրունդ համայնքում էի, ես հանկարծ մի կարևոր ճշմարտություն հայտնաբերեցի: Ես ըմբռնեցի հոգևոր պատճառը, թե ինչո՞ւ է մեր երիտասարդության մի մասը հեռանում աշխարհ: Դա ինձ խորությամբ հուզեց: Ես հիշեցի իմ երեխաներին և թոռներին: Այդ ժամանակից ի վեր ես շարունակում եմ լրջորեն ուսումնասիրել այս թեման:

Այժմ ես համոզված եմ, որ այս նույն հոգևոր պատճառը բերում է շատ այլ խնդիրների, մասնավորապես անձնական խնդիրների՝ ինչպես տեղական համայնքներում, այնպես էլ համաշխարհային եկեղեցու մասշտաբներով: Դա Սուրբ Հոգու պակասությունն է :

Եվ եթե դա իսկապես այդպես է, ապա մենք պետք է շտապ անդրադառնանք այս խնդրին: Եթե պատճառը կարելի է վերացնել կամ զգալիորեն նվազեցնել, ապա շատ խնդիրներ կդառնան աննշան կամ ընդհանրապես կլուծվեն:

Ի՞նչ են ուրիշները ասում այս բացթողման մասին.

* **ԷՄԻԼ ԲՐՈՒՆՆԵՐԸ՝** Ավետարանական բարենորոգված աստվածաբան գրել է, *որ Սուրբ Հոգին «Միշտ քիչ թե շատ եղել է աստվածաբանության խորթ զավակ»*: 1

* **Դ. ՄԱՐՏԻՆ ԼՈՅԴ-ՋՈՆՍ.** *«Ձեր թույլտվությամբ ես անձնական կարծիք կհայտնեմ. ոչ մի այլ աստվածաշնչյան ուսմունք անցյալում կամ ներկայումս այնքան արհամարհված չէ, որքան Սուրբ Հոգու ուսմունքը: Ես վստահ եմ, որ դա է ավետարանական հավատքի թուլության պատճառը»*: 2

* **ԼԵՌՈՅ Ե. ՖՐՈՒՄ.** «Ես համոզված եմ, որ Սուրբ Հոգու բացակայությունը մեր ամենադժվար խնդիրն է»: 3

* **ԴՈՒԱՅՏ ՆԵԼՍՈՆ**. *«Մեր եկեղեցին մինչև ուժասպառություն աշխատում է մշակել հրաշալի ձևաչափեր, նախագծեր և ծրագրեր, բայց եթե մենք վերջապես չընդունենք մեր հոգևոր սնանկությունը (Սուրբ Հոգու բացակայությունը)՝ որը հաղթահարել է մեզանից շատ ծառայողներին և ղեկավարներին, ապա մենք երբեք չենք կարողանա դուրս գալ մեր «ֆորմալ քրիստոնեության» շրջանակներից»*: 4

Մենք ցանկանում ենք սկզբում ոգեշնչվել Աստծո խոսքով՝ թե ինչքան բազմաթիվ արդյունքներ են հնարավոր մեր կյանքում:

Դրանից հետո եկեք նայենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի կոչը՝ Սուրբ Հոգու վերաբերյալ:

1. Johannes Mager, *Auf den Spuren des Heiligen Geistes*, (Lüneburg, 1999), Cover
2. D. Martin Lloyd-Jones, *Vollmacht, Telos-Taschenbuch* Nr. 385, Marburg 1984, p. 72
3. E.G. White, *The Coming of the Comforter* (Hagerstown, 1949), p. 94
4. Editor Helmut Haubeil, *Missionsbrief Nr. 34 (Bad Aibling, 2011)*, Seite 3

ՆԱԽԱԲԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՊԱԳԱ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԱՁՄԱՊԱՏԿԵԼՈՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սիրելի՛ ղեկավար,

Ցանկանու՞մ եք, որ ձեր համայնքը աճի հոգեպես և քանակական: Բայց արդյո՞ք դա հնարավոր է այսօր: Այո, դա միանշանակ հնարավոր է: Ինչպե՞ս:

«Ոչ թէ զօրութիւնով, և ոչ թէ ոյժով, այլ իմ հոգովը, ասում է Զօրաց Տէրը» (Զաք. 4.6):

Ինչպե՞ս է դա տեղի ունենում: Կարծում եմ՝ թե մենք բոլորս դեռ պետք է այդ սովորենք այստեղ: Մենք ցանկանո՞ւմ ենք սովորել նաև ուրիշների փորձառություններից: Ես համոզված եմ դրանում: Թող Տերը Իր Հոգու միջոցով ցույց տա մեզ բոլորիս այդ ուղին:

«Քայլեր դեպի անձնական վերածնունդ»-ում զետեղված վկայությունները ցույց են տալիս, որ այս գրքույկը կարող է շատ արժեքավոր օգնություն ցուցաբերել: Սակայն հոգեւոր և քանակական աճը պահանջում է ավելին, քան պարզապես գրքույկի մեկ անգամ ընթերցելը կամ դրա տարածելը: Անհրաժեշտ է կյանքի կոչել վերածննդի ներկայացված տարրերը: Որպեսզի դա անել, դուք պետք է ներգրավված լինեք սրտով: Ես համարձակվում եմ ասել. «Ձեր գործունեության ոլորտը կտարածվի միայն այնքանով, ինչքանով դուք եք առաջադիմել: Ոչ ոք չի կարող առաջնորդել մեկ ուրիշին, եթե նա ինքը նախկինում չի անցել այդ ճանապարհով: Մեր կյանքը, մեր աղոթքները, մեր վկայությունները, մեր խոսակցությունները, մեր ազդեցությունը և մեր քարոզները կօգտագործվեն Աստծո կողմից: Ի դեպ, լուծումը, կարծես թե, բազմակի ընթերցման մեջ է՝ գիտամանկավարժական հետազոտությունները ցույց են տվել, որ կյանքի համար այսպիսի կարևոր թեմա հասկանալու համար հարկավոր է այն կարդալ վեցից տաս անգամ՝ դա լիովին հասկանալու համար: Փորձեք այն գոնե մեկ անգամ: Արդյունքը կհամոզի ձեզ:

Երկու վկայություն ԱՄՆ-ի միություններից մեկի հովիվից և բաժնի ղեկավարից, որոնք այժմ թոշակառու են.

1-ի վկայություն - ... ես կարդացի ձեր գիրքը «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» երեք անգամ: Ես երբեք չեմ մտածել, որ այսպիսի նոր պատկերացում կգտնեմ աղոթքի վերաբերյալ: Աղոթքի, որը հիմնված է Աստծո խոստումների վրա, ինչպես դուք եք բացատրում: Այդ ժամանակից ի վեր **Աստված իմ կյանքում այնպիսի հաղթանակների է հասել, որոնք ես երբեք հնարավոր չէի համարել**: Ինձ հրավիրել են քարոզելու ճամբարային հանդիպման ժամանակ: Թեման ես թաղեցի ձեր գրքից: 2017թ. 26 հունիս, - F.S. կրճատած հապավում

2-րդ վկայություն - ...Երբ ես սկսեցի կարդալ ձեր գիրքը (ես կարդացի այն 6 անգամ, ինչպես խորհուրդ եք տալիս), և սովորեցի թե ինչպես կարելի է աղոթել խոստումներով, իմ կյանքը ամբողջովին փոխվեց:..Տերը ինձ առաջնորդեց, որպեսզի պատրաստեմ ճամբարային հանդիպումների համար քարոզ մեր մեծագույն կարիքի՝ Աստծո Հոգու թարմացնող անձրևի մասին: **Բոլոր այն տարիներին, որ ես նվիրել եմ ծառայության, ես երբեք չեմ զգացել որ Սուրբ Հոգին նման զորությունով գործի մարդկանց մեջ, ինչպես դա տեղի է ունեցել այդ ժողովին ներկա գտնվող 3000 մարդկանց հետ:** - Կինս իմ մեջ խորը փոփոխություններ նկատեց: Նույնիսկ ես ինքս զարմացած եմ ինձանով: 2017թ. 25 հուլիսի, - F.S. կրճատած հապավում

40-օրյա հայեցակարգ՝ 17-ից 65 անդամ

Գերմանիայի Քյոլն-Կալկ փոքր եկեղեցին բաղկացած էր գերմանացի, իսպանացի և պորտուգալացի 17 անդամից: Հովիվ Ջ. Լոտզը հրավիրեց նրանց իրականացնել 40-օրյա հայեցակարգ: Նրանք ուսումնասիրում էին «40 օր» գիրքը երկու հոգուց բաղկացած խմբերով, որոնցից յուրաքանչյուրը ամեն օր աղոթում էր հինգ անհավատ ընկերների մասին և նրանց հետ անձնական կապ էին պահպանում: 40-րդ օրը նրանք կազմակերպեցին շաբաթօրյա ծառայություն այցելուների համար, և դրանից հետո սկսեցին 14-օրյա ավետարանական արշավ: Նրանք կարողացան կարճ ժամանակահատվածում մկրտել 13 մարդ: Նրանք և՛ս մի քանի անգամ կրկնեցին 40-օր հայեցակարգը և 4 տարվա ընթացքում նրանց համայնքը աճել է մինչև 65 անդամ: (40-օրյա հայեցակարգի մասին տե՛ս «40 օր» գիրքը, իսկ Քյոլնից փորձի մասին ավելին իմանալու համար անցեք «Փորձառություններ» բաժնում թիվ 19 փորձառությանը):

Լուգանո, Շվեյցարիայի իտալախոս տարածք՝ շատ աշխարհիկ բնակչությունով:

Հովիվ Մաթիաս Մաագը՝ որպես Հարավային Աֆրիկայում միսիոներ, ունեցավ հիանալի փորձառություններ Դենիս Սմիթի «40 օր» գիրքը կարդալուց: Վերադառնալով Շվեյցարիա, նա անմիջապես սկսեց աշխատել այս հայեցակարգով: Առաջին տարում կատարվեց տեղի ունեցավ 15 մկրտություն (ինչը շատ արտառոց է այս տարածաշրջանի համար): Մի տիկին 15 տարի շարունակ այցելում էր եկեղեցին, սակայն որոշում կայացրեց մկրտվելու միայն «40 օր» ծրագրի ընթացքում:

Երիտասարդություն. Իմ անունը Ալինա վան Ռենսբուրգ է, ես Ավստրալիայում Հարավային Քուինսլենդի միաբանության (որտեղ մոտ 12 200 անդամ կա) երիտասարդական բաժնի ղեկավարն եմ: Այս տարվա սկզբում *մի* երիտասարդ *ինձ ներկայացրեց «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գիրքը, որը ցնցեց ինձ մինչև հոգու խորքը: Այնտեղ ուսումնասիրվում է այն թեման, որը վաղուց հուզում էր իմ ամուսնուն և անձամբ ինձ՝ Սուրբ Հոգու միջոցով արթնությունը:* Ես կարող էի պատմել ձեզ շատ պատմություններ, բայց, ըստ էության <*կարճ ասած*>, այդ փոքրիկ գիրքը *մեզ բերեց մե՛ծ օրհնություններ*: Գրեգ Պրատը (ՀՔԿ-ի աշակերտության և հոգեւոր զարգացման *բաժնի ղեկավար*) ևս 300 գիրք *բերեց*, որոնք ես բաժանեցի երիտասարդական բաժնի բոլոր ղեկավարներին՝ այս տարվա սկզբին մեր հանդիպումների ժամանակ, և արձագանքը բացարձակապես *արտառոց* էր: Այժմ ես ուզում եմ հայթայթել ևս 150 գիրք, որպեսզի *բաժանեմ* մեր երիտասարդներին վրանային ճամբարի *ժամանակ,* որպեսզի այն *միասին* ուսումնասիրենք *խմբերով*:

366 մկրտություն + 35 մկրտությանը նախապատրաստող դասերի այցելուներ

Բուրունդի միության (130,000 անդամ, 100,000 գիրք «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» կիրունդի լեզվով) քարտուղար Փոլ Իրակոզեն ասաց, որ, **ընդհանուր առմամբ գրքույկի ազդեցության *շնորհիվ* վերադարձան *մոտ 320 նախկին* անդամներ**: Նրանք ընդունվեցին *կրկնակի մկրտություն* 2017 թվականի մարտին:

Խուլ մարդիկ կարդացին գրքույկը երեք անգամ, այնուհետև <ապա> նրանք կիսվեցին իրենց *փորձառություններ*ով այլ լսողության խնդիրներ *ունեցող* մարդկանց հետ: *Արդյունքում՝* 2017 *թվականի մարտին* մենք մկրտեցինք 25 խուլ մարդ*:*

Բանտարկյալներ-Մենք բաժանեցինք գրքույկը մեր Եկեղեցու անդամներին Մփիմբայի բանտում: *Նրանք, առաջնորդվելով Սուրբ Հոգով՝ սկսեցին կիսվել իրենց* հավատքով*:* Վերջին շաբաթ օրը 21 բանտարկյալ մկրտվեց, և 35-ը պատրաստվում են մկրտության: Սա «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գրքույկի պտուղներն են: Կրճատված

Ուսուցման ժամանակաշրջան / աղոթքի շաբաթ

2017 թվականի նոյեմբերին Բուրունդիի միությունը իր 130000 անդամների համար աղոթքի շաբաթ է անցկացրել՝ կրկին օգտագործելով «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գիրքը: Այս թեմայի վերաբերյալ մեր քարտուղարի քարոզները նաև հեռարձակվել են ամեն երեկո adv.radio-ով:

Ուսանողները*. Էնդրյուսի համալսարանի գլխավոր քարոզիչներից մեկը՝ հովիվ Դուայթ Նելսոնը խոստովանել է, որ այս* փոքրիկ գիրքը. *«Փոխեց իմ ներսը, և ես ուզում եմ նույնն անել նաև ձեզ համար»: 2017 թվականի սեպտեմբերի 2-ին նա սկսեց "Պայթյունի էպիկենտրոնում և* նոր վերափոխումը. Ինչպե՞ս մկրտվել Սուրբ Հոգով» *քարոզների շարք:* Նա մեջբերումներ է անում «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գրքից և այն խորհուրդ է տալիս բոլորին: Դա հանգեցրեց 4000 ներբեռման և գրքույկի հազարավոր պատվերների: Հղում դեպի այդ քարոզներին և նրա բլոգին՝ https://www.pmchurch.tv/sermons

Մի գերազանց գաղափար՝ ԱՄՆ-ից՝ երեկ ես լսում էի Դվայթ Նելսոնի քարոզների շարքը: Այս շաբաթ օրը իմ եկեղեցուն ներկայացնելով «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գիրքը, ես կսպասեմ առաջին 5 րոպեն այն հույսով, որ գրքի վերաբերյալ նրա վկայությունը որոշակի հետաքրքրություն կառաջացնի: Ընթրիքից հետո, իմ հովիվների թույլտվությանբ, մենք ցույց կտանք քարոզի մնացած մասը նրանց, ովքեր հետաքրքրված են: Դ. Վ.

Ավետարանչություն - Դվայթ Նելսոնը 2017 թվականի հոկտեմբերի 11-ին իր բլոգում գրում է (կրճատված և խմբագրված է)

Ինսուլինմեկ «հյուր» (ինչպես անվանում են նրանց) միացավ Զագրեբի ադվենտիստներին՝ գիշերային ինսուլն րոպեանոց ծրագրին: ... Ձեր բարեխոս աղոթքների համար երախտագիտությամբ, ես պետք է վկայեմ, **որ այն բոլոր տարիների ընթացքում, որ ես մասնակցել եմ ավետարանության, ես չեմ ունեցել հրապարակային ավետարանական քարոզի փորձ՝ Զագրեբում տեղի ունեցածին նման**: Ինչպես ես ասել եմ այստեղ գտնվող պիոներ հովիվներին, ես միանգամայն համոզված եմ, որ դա եղել է և մնում է՝ ի պատասխան համաձայնեցված աղոթքների՝ Սուրբ Հոգու այդ քաղաքում օր ու գիշեր լիարժեք միջամտության պտուղը: Ես հիշեցնում եմ ձեզ, որ մեզանից շատերը դեռևս սեպտեմբերին սկսեցինք փնտրել Աստծուն՝ ամեն օր Սուրբ Հոգով մկրտվելու համար (ինչպես Քրիստոսը հրավիրում է մեզ դա անել Ղուկաս 11.13-ում): Ահա թե ինչու ես կարող եմ վստահ լինել, որ այն, ինչ ես անձամբ զգացել եմ և ինչի ականատես եմ եղել Զագրեբում՝ Նրա անմիջական աշխատանքն է: Այս ամենը ոչինչ չի ասում իմ մասին, բայց ասում է ամեն ինչ Հիսուսի «Բայց դուք զօրութիւն կ՚առնէք՝ երբոր Հոգին ձեզ վերայ կ՚գայ, եւ իմ վկաները կ՚լինիք...» (Գործք 1:8) խոստման ճշմարտացիության մասին: Ուստի, ինչ էլ որ մենք անենք, եկեք չզուլանանք ամեն օր առավոտյան Աստծո Հոգու թարմ, քաջալերող մկրտությունը որոնելուց:

Հաշտեցում. Անհատների և ընտանիքների շատ լավ փորձառությունները տե՛ս փորձեր №№ 2/17; 3/31; 3/35; 3/40; 4/52; 4/56: Ամբողջ եկեղեցիների փորձառությունները՝ սկսած լարվածությունից, վեճերից, բաժանումներից, վնասվածքներից, չներողամտությունից, զգացմունքային բռնկումներից և անձնական հարձակումներից մինչև սիրող և խաղաղ ներողամտությունը և հաշտեցումը տե՛ս փորձեր №№ 1/10; 7/84:

Երիտասարդ մայր - երեխաներ - ԱՄՆ. Ես մեծ պատասխանատվություն եմ զգում, դաստիարակելով երեք փոքր տղա: Ես տեսնում եմ, որ միակ հույսը, որը ես կարող եմ ունենալ, դա ամեն օր խնդրեմ, որ Սուրբ Հոգին մշտապես տիրի ինձ: Ձեր գիրքը կարդալուց ի վեր ես տեսա, թե ինչպիսի փոփոխություններ է այն առաջացրել իմ տղաների վարքագում: Ես համբերություն եմ ցուցաբերում այնտեղ, որտեղ սովորաբար չունեի համբերություն, ես սեր և կարեկցանք եմ ցուցաբերում այնտեղ, որտեղ հիասթափություն ունեի: Նրանք ավելի հաճախ են ցուցաբերում նվիրված սիրտ: Մենք ակնհայտ աճում ենք, և այժմ ես ավելի պարզ եմ հասկանալու այն ճշմարտությունը, թե ինչպես կարող է Հիսուսն ապրել իմ մեջ: D.W.

«**Ինչպե՞ս հետաքրքրություն առաջացնել»:** Մենյուի այս կետում դուք կգտնեք արժեքավոր առաջարկներ: Մի բան, որը շատ հեշտ է սկսել՝ «Համակարգված ընթերցանության» առաջարկն է: Ամենաուժեղ դրդապատճառը «սեմինար» անցկացնելն է: Դուք կարող եք անցկացնել այն ինքնուրույն, կամ ունենալ հաղորդավար (կամ կարող եք օգտագործել տեսանյութ, որը հասանելի է միայն որոշ լեզուներով): Դուք կարող եք էլ ավելի ընդլայնել սեմինարի ընկալումը, եթե սեմինարից առաջ կամ հետո անցկացնեք «Համակարգված ընթերցանություն»:

Իմ խնդրանքը. Կարո՞ղ եմ ես՝ որպես ավելի մեծ եղբայր, խորհուրդ տալ ձեզ. աղոթեք և մի քանի անգամ կարդացեք գրքույկը ձեր կողքին գտնվող մեկի հետ: Սա էապես կազդի ձեր խմբի, եկեղեցու կամ միության առաջընթացին:

Կարո՞ղ է հաջորդ քայլը լինել ձեր գաղափարներն ու փորձառությունները կիսել հովիվների, երեցների և այլ առաջատար անդամների հետ: Շատ կարևոր է տպավորություն թողնել նրանց սրտերի վրա: Այդպես սկսվեց Եթովպիան: 2017 թվականի հուլիսին՝ վերածննդի շաբաթվա ավարտին, 500 հովիվներ ստացան գրքույկը ամհարերեն լեզվով: Հյուսիսային Ֆիլիպինների միությունում 2017 թվականի հունիսին՝ աղոթքի համաժողովում՝ գրքույկը Ֆիլիպիններեն լեզվով ներկայացվեց 1500 երեցների:

Փորձառություններ

Դուք կկիսվե՞ք վկայություններով անձամբ և մեր հրատարակությունների միջոցով: Նրանք շատ ոգեշնչող են: Անհրաժեշտության դեպքում, վկայությունները կարող են օգտագործվել նաև www.steps-to-personal-revival.info - Testimonies կայքից:

Հարգելի՛ առաջնորդ:

Եկեք աճենք Սուրբ Հոգով: Տերն ինքն է պատվիրան տվել (ՀԼՔ 20.3):

«Լցուեցէք Հոգով» (Եփես. 5:18):

- Մեզանում բնակվող Քրիստոսը և Սուրբ Հոգին, մեզ դարձնում են«Սիոնի աւետաբերներ» (Ես. 40:9):

Մի մոռացեք Հիսուսի վերջին խոսքերը երկրի վրա.

«Բայց դուք զօրութիւն կ՚առնէք՝ երբոր Հոգին (կարողությունները, միջոցները, գերբնական ուժը) **ձեզ վերայ կ՚գայ**» (Գործք 1:8):

Ձեր եղբայրը Քրիստոս Յիսուսով՝
Հելմուտ Հաուբայլ

ԳԼՈՒԽ 1

ՀԻՍՈՒՍԻ ԱՄԵՆԱԹԱՆԿ ՊԱՐԳԵՎԸ

Ի՞ՆՉ Է ՀԻՍՈՒՍՆ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ

Ծանո՞թ եք Հիսուսի ամենահզոր ուղերձին

Առաջին անձնական վկայություններից մի քանիսը.

Վերադառնանք մեր «առաջին սիրուն». մի քույրս գրել է ինձ. «Ես և իմ ընկերն <Մենք ընկերուհու հետ> արդեն երրորդ անգամ ենք ուսումնասիրում «40 օր» գիրքը՝ «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գրքույկի հետ փոփոխական: Անկեղծ ասած, մեր հավատքն ու աղոթքի կյանքը՝ նախքան այս նյութը հայտնաբերելը՝ այլևս այն չեին, ինչ նախկինում: **Մենք փափագում էինք կրկին գտնել մեր «առաջին սերը»:** Մենք գտա՞նք այն: Մենք սրտանց շնորհակալ ենք Աստծուց: Ինչ հիանալի կերպով է մեր սիրող Աստվածը պատասխանում աղոթքներին, և ցույց տալիս, թե ինչպես է Նրա Հոգին գործում մեր և այն մարդկանց վրա, ում համար մենք աղոթում ենք»: - Մ.Ս.

Հիսուսը մտավ մեր կյանք. Մեկ այլ մարդ գրեց այս գրքերի մասին. «... նրանք դարձել են մեծ և երկար սպասված օրհնություն իմ կյանքում: Մեր եկեղեցու շատ այլ անդամներ և հատկապես մի քույր զգացել են, որ մեր հավատքի փորձի մեջ ինչ-որ բան միշտ պակասում էր, սակայն հիմա մենք իսկապես զգացինք, թե ինչպես **Հիսուսը մտավ մեր կյանք** և սկսեց վերափոխել մեզ: Նա շարունակում է աշխատել մեզ վրա, և քայլ առ քայլ մեզ ավելի է մոտենում Իրեն»: - Ս.Կ.

Արդյո՞ք Հիսուսի աշակերտները հարցնում էին իրենք իրենց՝ թե ինչպե՞ս կարող է Հիսուսը ունենալ այդքան մեծ ազդեցություն. Գուցե բանն Նրա աղոթքի կյա՞նքն է: Ահա թե ինչու նրանք հարցրին նրան. *«Տե՛ր, սովորեցրու մեզ աղոթել»*: Եվ Հիսուսը արձագանքեց նրանց խնդրանքին:

Ղուկաս 11.1-13 - ում նրա աղոթքի դասը բաղկացած է երեք մասից՝ «Տերունական աղոթքը», կեսգիշերին եկած ընկերոջ առակը, և որպես գագաթնակետը՝ Սուրբ Հոգու համար շարունակական խնդրանք:

Առակում (5-8 համարներում) այցելուները կէս գիշերին գալիս են մարդու մոտ, և նա **ոչինչ չունի**, որ առաջները դնե: Ձգալով կարիքը՝ նա անմիջապես գնում է իր բարեկամի մոտ՝ բացատրելով, որ **«նա ոչինչ չունի»** և հաց է խնդրում նրանից: Նա շարունակում է հայցնել, մինչև որ վերջապես ստանում է հացը: Եվ այժմ նա ունի հաց՝ կյանքի հաց՝ իր և իր բարեկամների համար: Եվ նա ունի ինչ-որ բան և ներկայիս արդեն գտնվում է այնպիսի իրավիճակում, որ կարող է կիսել այն:

Այսպիսով Հիսուսը շաղկապում է այս առակն ու (դրա խնդիրը՝ Ես ոչ մի բան չունեմ) Սուրբ Հոգու խնդրանքի հետ, ասելով. «Եւ ես ասում եմ ձեզ, Խնդրեցէք՝ եւ կտրուի ձեզ» (Ղուկաս 11:9): Դրան հետևում է.

Հիսուսի հատուկ կոչը՝ «Ուստի խնդրեցէք՝ **Սուրբ Հոգին»**

Կա մի հատուկ աստվածաշնչյան հատված է, որտեղ Հիսուսը վճռականորեն պատվիրում է մեզ խնդրել Սուրբ Հոգի: Ես չգիտեմ որևէ այլ հատված, որտեղ Հիսուսն այդքան սիրով հորդորում էր մեզ ինչ-որ բանում: Այս հատվածները գտնվում են Ղուկասի 11-րդ գլխի Նրա աղոթքի դասում: Այնտեղ նա 10 անգամ ընդգծում է, որ մենք պետք է խնդրենք Սուրբ Հոգին. Ղուկաս 11: 9-13.

*«Եւ ես ասում եմ ձեզ, **Խնդրեցէք**՝ և կտրուի ձեզ, **որոնեցէք** և կ՚գտնէք, դուռը **թակեցէք**՝ և կ՚բացուի ձեզ: Որովհետեւ ամեն ով որ **խնդրում** է՝ առնում է, և ով որ **որոնում** է՝ գտնում է, և ով որ դուռը թակում է՝ բացվում է նորան: Եվ ձեզանից ո՞ր հօրիցն իր որդին հաց **ուզէ**, մի՞թէ քար կ՚տայ նորան. Կամ եթէ ձուկ՝ մի՞թէ ձկան տեղ օձ կ՚տայ նորան: Եվ կամ ձու ուզէ, մի՞թէ կարիճ կ՚տայ նորան: Արդ եթէ դուք, որ չար էք՝ գիտէք բարի պարգեւներ տալ ձեր որդկանցը, էլ ո՞րքան աւելի երկնաւոր Հայրը Սուրբ Հոգին կ՚տայ նորանց, որ **ուզում** են նորանից»*:

Այս մի քանի համարներում Հիսուսը վեց անգամ օգտագործում է «խնդրել/ուզել» բառը. այնուհետև նա փոխարինեց այն երկու ակտիվ գործողություն ցույց տվող բայերով՝ «որոնել» - երկու անգամ՝ և՝ երկու անգամ՝ «թակել» բայերով:

Մի՞թե նա մեզ պարզ ցույց չի տալիս, որ՝ որպեսզի լցվենք Սուրբ Հոգով՝ մեզ պետք է անել որոշ գործողություններ: Վերջին նախադասության մեջ գտնվող «ուզել» բայը հունարեն բնօրինակում օգտագործվում է շարունակական ժամանակում: Դա նշանակում է, որ մենք պետք է խնդրենք ոչ միայն մեկ անգամ, այլև անընդհատ: Այսպիսով, Հիսուսը կարեւորում է այն, որ պետք է խնդրել ոչ միայն հրատապության դեպքում, այլև Նա ակնկալում է, որ մենք դա կանենք անընդհատ : Իհարկե, այս սրտառուչ հրավերով Նա նաեւ ցանկանում է արթնացնել մեր Սուրբ Հոգու ծարավը : Այս հրատապ կոչը ցույց է տալիս Հիսուսի վստահությունը, որ մենք բաց կթողնենք ինչ-որ կարեւոր բան, եթե անընդհատ չխնդրենք Սուրբ Հոգու թափելու մասին: Նա ակնհայտորեն գրավում է մեր ուշադրությունը այն փաստի վրա, որ մենք Սուրբ Հոգու անշուշտ պահանջարկ ունենք: Այսպիսով, Նա ցանկանում է, որ մենք մշտապես ստանանք Սուրբ Հոգու առատ օրհնությունները:

«Քրիստոսի առակները» գրքում ասվում է. «Աստված չի ասում, թե խնդրեք մեկ անգամ և կստանաք: Նա պատվիրում է մեզ խնդրել: Անխոնջ համառել աղոթքում: Յամառ խնդրանքն ավելի ջերմեռանդ է դարձնում խնդրողին, ավելի մեծ ցանկություն է առաջացնում ստանալու այն, ինչ խնդրում է»: 1

Այնուհետև Հիսուսը տալիս է երեք օրինակ, որոնք արտացոլում են այնպիսի վարքագիծը, որը անհնար պատկերացնել նույնիսկ մեղավոր երկրային հայրերի համար: Նա ուզում էր մեզ ցույց տալ, որ երկնային Հոր համար նույնիսկ ավելի անհավանական է մերժել Սուրբ Հոգու վերաբերյալ մեր խնդրանքները: Հիսուսը ցանկանում է, որ մենք վստահ լինենք, որ մենք կստանանք Սուրբ Հոգին, եթե համապատասխան ձևով խնդրենք «Նրա կամքի պէս»: Այսպիսով, հիմնվելով այս և այլ խոստումների վրա, մենք կարող ենք հավատքով խնդրել՝ իմանալով, որ մենք արդեն առնում ենք մեր խնդրվածքները (տես Ա Հովհ. 5:14,15, թեման ավելի մանրամասն ուսումնասիրվում է 5-րդ գլխում):

Այս հատուկ հրավերը մեզ բացում է, որ ըստ Հիսուսի, եթե մենք համառորեն չենք խնդրում Սուրբ Հոգին, ապա կորցնում ենք ինչ-որ էական: Նա մեր ուշադրությունը հրավիրում է այն փաստին, որ մենք ոգգում ենք Սուրբ Հոգու բացարձակապես պահանջ, և ցանկանում է, որ մենք շարունակաբար ստանանք Սուրբ Հոգու հարուստ օրհնությունները:

Նրա աղոթքի դասի այս մասը եզակի գործընթաց է: Սուրբ Հոգին Աստծո մեծագույն պարգևն է, որը միավորում է մնացած բոլոր պարգևները: Սուրբ Հոգին դարձավ Հիսուսի պսակային պարգևը Իր աշակերտներին և Նրա սիրո վառ ապացույցը: Կարծում եմ՝ մենք ըմբռնում ենք, որ հնարավոր չի նման արժեքավոր պարգև որևէ մեկին տալ պարտադրանքով: Այն տրվում է միայն նրանց, ովքեր հայտնում են իրենց ցանկությունը ստանալ այս պարգեւը եւ գնահատում այն:

Նա կտրվի նրանց, ովքեր իրենց կյանքը հանձնել են Հիսուսին, ովքեր ապրում են շարունակական նվիրվածությամբ: (Հովհաննես 15:4-5) Այս վիրվածությունն արտահայտվում է հետեվյալում.

---

1. Է. Գ. Ուայթ «Քրիստոսի առակները՞ (1900), էջ. 145.3

* Վստահել Աստծուն *(«Եթէ մէկը ծարաւ է»* Հովհ. 7:38)

* Հավատք առ Աստված *«Ինձ հաւատացողը, ինչպէս գիրքն ասում է»* Հովհ. 7:39)

* *Ամբողջությամբ* հանձնվել *Նրան վստահությամբ («ձեր մարմինները ներկայացնէք կենդանի, սուրբ եւ Աստուծոյ ընդունելի պատարագ» (Հռոմ. 12:1):*
* *Հետևեք Աստծուն ամեն ինչում («իրան հնազանդողներին» (Գործք 5:32):*
* Հրաժարվել սեփական ճանապարհից, գնալ Աստծո ուղիով և անել դա Աստծո կամքի համաձայն *(«Ապաշխարեցէք՝ եւ ձեզանից ամեն մէկը թող մկրտուի»* Գործք 2:38)

* Չպլանավորել ոչ մի *անօրինություն «Եթե սրտումս մեղք տեսնեի, Տերն ինձ չեր լսի»* Սաղ. 66:18)
* Գիտակցել և ընդունել մեր մեծ կարիքը *(«Ես բան չունեմ»* Ղուկ. 11:6)
* Անդադար խնդրել Սուրբ Հոգին (Ղուկաս 11: 9-13)

Մի՞թե այս ակնկալիքներից, որ Աստված ունի մեր հանդեպ, հստակ չի երևում, որքանո՞վ է արժեքավոր այդ պարգևը: Երբ մտածեք այս բոլոր նախադրյալների մասին, ապա անշուշտ ձեր մեջ թերություններ կգտնեք:

Ես սովորություն եմ դարձրել ամեն օր աղոթել Սուրբ Հոգին ստանալու ցանկության մասին. Հովհ. 7: 37 *" Եթէ մէկը ծարաւ է, թող ինձ մօտ գայ, եւ խմէ"*: 2

Մենք կարող ենք աղոթել. «Տեր Հիսուս, ես ամբողջովին «այո» եմ ասում Սուրբ Հոգին ստանալու բոլոր նախադրյալներին: Ես անկեղծորեն խնդրում եմ, որ հիմա՝ այսօր, կատարես դրանք իմ մեջ»: Մեր հիանալի հրաշալի Աստվածը նույնիսկ այնտեղ է՝ մեզ համար նախադրյալները կատարելու համար:

Սուրբ Հոգին կենդանի կյանքի աղբյուր է

Ինչո՞ւ, Ըստ Հիսուսի, նա եկավ այս երկիր: Նա ասաց. *«Ես եկայ որ կեանք ունենան, եւ էլ աւելի ունենան»* (Հովհ. 10:10):

Հիսուսը ցանկանում է, որ մենք այժմ էլ զգանք այս նոր կյանքը և շարունակենք վայելել այն բոլորովին այլ հարթության մեջ՝ Նրա երկրորդ գալստից հետո՝ հավերժական կյանք Աստծո արքայության մեջ:

- Նա նաև մեզ ցույց է տալիս, որ այդպիսի օրհնյալ կյանքի աղբյուրը Սուրբ Հոգին է. *«...Եթէ մէկը ծարաւ է, թող ինձ մօտ գայ, եւ խմէ: Ինձ հաւատացողը, ինչպէս գիրքն ասում է, Նորա փորիցը կենդանի ջրերի գետեր կ՚բղխին»*: Բայց սա նա խոսեց Հոգու մասին ...» (Հովհ. 7:37-39):

«Կենդանի ջրերի գետեր». Մի՞թե դա առատ կյանքի լավ նկարագրությունը չէ:

---

2. Արժե աղոթել խոստումներով: Եթե ցանկանում եք ավելին իմանալ դրա մասին, ապա խնդրում ենք կարդալ «Քայլեր դեպի անձնական Վերածնունդ» գրքի 4-րդ գլուխը

Հիսուսը այստեղ երկրի վրա ապրելիս տվե՞ց մեզ համապատասխան օրինակ:

Մենք գիտենք, որ Մարիամը հղիացավ Հիսուսին Սուրբ Հոգու միջոցով: (Մատթ. 1:18): Մենք գիտենք, որ Իր մկրտությունից հետո Նա աղոթում էր, *«Եվ Սուրբ Հոգին մարմնաւոր տեսիլքով աղաւնու պէս իջաւ նորա վերայ....»* (Ղուկաս 3:22): Նման հանգամանքներում արդյո՞ք անհրաժեշտ և կարևոր էր, որ նա ամեն օր ստանա Սուրբ Հոգի: *Թույլ տվեք* մեջբերում White-ից:

«Ամեն առավոտ նա հաղորդակցվում *էր Իր երկնային Հոր հետ՝ նրանից ամեն օր ստանալով Սուրբ Հոգու մկրտություն»: 3*

«***Acts of the Apostles***» *գրքում կան հետևյալ բառերը. «Նվիրյալ աշխատողի համար* կա հրաշալի մխիթարություն *նրանում, որ նույնիսկ Քրիստոսը, իր երկրային կյանքի ընթացքում, ամեն օր խնդրում էր Հորը այն շնորհը, որի կարիքն ուներ ...»: 4*

Հիսուսը, իսկապեսոք, եղել է մեզ համար օրինակ այս հարցում: Մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. Եթե Հիսուսը ինքն ամեն օր Սուրբ Հոգուց ամրապնդվելու կարիք ուներ, ապա որքա՞ն ավելի կարևոր է դա մեզանից յուրաքանչյուրի համար:

- Պողոս առաքյալն ճիշտ էր հասկացել Հիսուսի գաղափարը: Եփեսոսի եկեղեցուն ուղղված իր ուղերձում (գլուխ 1:13), Պողոսը հորդորում է, որ հավատացյալներ երբոր հաւատացին՝ խոստմունքի Սուրբ Հոգովը կնքուեցին: 3:16-17 գլխում նա խրախուսում է նրանց զօրութեամբ հաստատվել Հոգում, իսկ 5:18-ում Պողոսը, որպես իրավասու առաքյալ, կոչ է անում Եփեսացիներին և մեզ. *«... լցուել Հոգով»* այսինքն *«թույլ տվեք, որ Սուրբ Հոգին անընդհատ և շարունակաբար լցնի ձեզ»:* 5 Այսպիսով, նույնիսկ եթե մենք ստացել ենք Սուրբ Հոգին վերստին ծնվելու ժամանակ, մենք միևվնույն է կարիք ունենք ամենօրյա թարմացման: Քրիստոնյայի կյանքի և հոգևոր աճի համար կարևոր նշանակություն ունի Սուրբ Հոգու ամենօրյա մկրտությունը:

Շաբաթօրյա դպրոցի ձեռնարկներից մեկում Եփ: 5:18 վերաբերյալ գրված է հետևյալը. «Ի՞նչ է նշանակում «մկրտված լինել» Սուրբ Հոգով: Հիսուսն անձամբ դա բացատրեց այսպիսի զուգահեռ արտահայտությամբ: Անձը «մկրտվում է» Սուրբ Հոգով (Գործք 1:5), երբ Սուրբ Հոգին նրանց «վրա է գալի» (հ. 8): Մկրտվել նշանակում է ամբողջ մարմնով ընկղմվել ինչ-որ բանի մեջ՝ սովորաբար ջրի մեջ: Սուրբ Հոգով մկրտվել նշանակում է ամբողջովին լինել սուրբ Հոգու ազդեցության տակ՝ լիովին «լցված» լինել Նրանով: Սա ոչ թե մեկանգամյա իրադարձություն է, այլ մի բան, որը պետք է անընդհատ կրկնվի: Պողոսը առաքյալը Եփ. 5:18b հենց այս իմաստով է ոգտագործում հունական «լցված» բայը: 6

---

3. E.G. White, *Signs of the Times,* November 21, 1895, par. 3
4. E.G. White, *The Acts of the Apostles,* (1911) p. 56.1
5. Johannes Mager, Auf den Spuren des Heiligen Geistes, (Lüneburg, 1999), Seite 101

Հիսուսի հրաժեշտի խոսքերը և Սուրբ Հոգին

Հիսուսը Իր հրաժեշտի խոսքերի մեջ տալիս է և հույս՝ ասելով, որ Իր փոխարեն կգա Սուրբ Հոգին: Հովհ. 16:7-ում Հիսուսն իր աշակերտներին զարմանալի մի բան է ասում.

> *«Բայց ես ճշմարտութիւնն եմ ասում ձեզ, թէ լաւ է ձեզ համար, որ ես գնամ. Որովհետեւ եթէ չ՚գնամ, Մխիթարիչը չի գալ ձեզ մօտ. բայց եթէ գնամ, նորան կ՚ուղարկեմ ձեզ մօտ»:*

Նոր լավագույն լուծում

Հիսուսն ասաց իր աշակերտներին զարմանալի մի բան. «***լաւ է ձեզ համար, որ ես գնամ***»: Սա նշանակում է, որ այդ նոր **լուծումը**, որ Հիսուսը մեզ հետ մնա Սուրբ Հոգու միջոցով, նույնիսկ ավելի լավն է, քան եթե Քրիստոսը անձամբ ներկա լիներ: Այս կերպ Նա սահմանափակված չէ, այլ կարող է լինել յուրաքանչյուր անձի կողքից, անկախ նրանից, թե որտեղ է Նա ներկայումս գտնվում:

Մի ուսուցչի և նրա աշակերտներից մեկի անձնական վկայությունը.

Երբ մոտ մեկ տարի առաջ իմ համայնքում յուրաքանչյուրիս բաժանեցին Հ. Հաուբեյլի "Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գրքույկը, ես շատ արագ կարդացի այն: Անգամ ընթերցանության ժամանակ ես ավելի շատ փորձառություններ եմ ունեցել Աստծո հետ, քան երբևէ նախկինում՝ և դա հրապուրեց և քաջալերեց ինձ:

Գրքույկի հավելվածում ես գտա հետևյալ խորհուրդը.

«Մանկավարժական հետազոտությունները ցույց են տվել, որ՝ որպիսի լիովին հասկանալ կենսական կարևոր թեման՝ անհրաժեշտ է այն վեցից տասը անգամ կարդալ կամ լսել»:

Իմ ուշադրությունը գրավեցին այս հուսադրող խոսքերը.

«Փորձեք գոնե մեկ անգամ: Արդյունքները ձեզ կզարմացնեն»:

---

6. Sabbath School Study Guide July 17, 2014

Ես ուզում էի զգալ դա և արդեն երրորդ ընթերցումի ժամանակ այն գրավեց ինձ, և ես այնպիսի մեծ սեր զգացի մեր Քավիչի հանդեպ, որի մասին երազում էի իմ ամբողջ կյանքը: Երկու ամսվա ընթացքում ես կարդացի գրքույկը վեց անգամ և արդյունքն արժեր դրան:

Կարծես հասկացա, թե ինչպես ես զգում, երբ Հիսուսը մոտենում է քեզ, և մենք կարող ենք նայել Նրա մաքուր, բարի և սիրող աչքերի մեջ: Այդ ժամանակվանից ի վեր ես այլևս չէի ուզում մնալ առանց մեր Փրկչով այս ուրախության:

Առավոտյան արթնանալիս՝ ես արդեն փափագում էի անցկացնել ժամանակս Աստծո հետ, որպեսզի կրկին զգայի Աստծո հետ ընկերակցությունը, իսկ օրվա ընթացքում ես լուռ աղոթում էի, որ Սուրբ Հոգին առաջնորդի իմ մտքերը մարդկանց հետ խոսելիս, օգնի ինձ լավ օրինակ ծառայել ուսուցանելիս և շփվելիս:

Երբ իմ աշակերտներից որևէ մեկը սկսում է ուշադրություն գրավել վատ պահվածքով, Աստված ինձ ուժ և իմաստություն է տալիս կարգավորել այդ խնդիրը:

Այդ ժամանակից ի վեր իմ աշխատանքային օրերը հագեցած են Արարչի ներկայությամբ: Նա բառացիորեն օգնում է ինձ առօրյա կյանքում: Այժմ՝ առավոտյան ժամերին և ցանկացած ազատ րոպեին, ես աղոթում եմ Սուրբ Հոգու թափելու համար: Ասես դու ավելի մոտ ես երկնքին և արդեն կարող ես ճաշակել՝ թե ինչպես կզգաս այնտեղ:

Գրքույկի ընթերցանության ժամանակ, մոտս մի այն միտք առաջացավ, որ դպրոցի իմ սաները նույնպես կարիք ունեն նմանատիպ փորձ ապրելու. Ես դասավանդում եմ 10-15 տարեկան երեխաներին Վորարլբերգում (Ավստրիա) գտնվող մեր «Եղիա» ադվենտիստական դպրոցում: Ես աղոթում էի, որ Աստված տա ինձ նման հնարավորություն: Շատ շուտով դրանից հետո ես ստացա իմ ամենահրաշալի փորձառություններից մեկը՝ տեսնելով, թե ինչպես է Սուրբ Հոգին գործում երիտասարդների սրտերում:

13-ամյա խուլիգանը և Սուրբ Հոգին

Այս փորձառությունն սկսվել էր Սուրբ Հոգու մասին գրքույկը կարդալուց մեկ տարի առաջ: Մեր դպրոց եկավ մի նոր աշակերտ և մի քանի օրվա ընթացքում մեր խաղաղ օազիսը վերածվեց կոպիտ հակամարտության սենյակի: Տղան այն ժամանակ 13 տարեկան էր, նա բոլոր երեխաներից ամենամեծն էր և, համապատասխանաբար ուժեղ: Թվում էր, թե այն ամենը, ինչ ուսումնասիրել էի ուսումնական տարվա ընթացքում և հասել հրաշալի արդյունքների, անհետացան ակնթարթորեն:

Թող նա ինքն պատմի իր մասին. «Երբ ես եկա այս դպրոց, ես գաղափար նույնիսկ չունեի, թե ինչ էր ինձ սպասում: Նոր դպրոցում գտնվելու արդեն երկրորդ օրը ես թույլ տվեցի որ ինձ հրահրեն, հարվածեցի դասընկերներիցս մեկին և ծեծկռտուք սկսեցի նրա հետ: Ես ապտակում էի նրան, չնայած որ նա ինձանից շատ ավելի թույլ էր, հայհոյում և սպառնում նրան:

Ավելի ուշ ես գիտակցեցի իր սխալը և ներողություն խնդրեցի, ինչպես այն անում էի միշտ նախկինում: Այդ դեպքից հետո տեխի ունեցավ լուրջ զրույց դպրոցի տնօրենի հետ: Բայց հաջորդ ամիսներին ինձ հետ ինչ-որ անսովոր բան սկսեց կատարվել: Զարմանալին այն է, որ դա տեղի է ունեցավ միայն հիմա, չէ որ ես մեծացել եմ հովվի ընտանիքում: Ես սկսեցի ավելի շատ ժամանակ անցկացնել Հիսուսի հետ»:

Ես հասկացա, որ այս տղան հատուկ ուշադրության կարիք ունի: Նա գիտակցում էր իր ձախողմները, զղջում էր նրանց համար և փորձում դրանք շտկել, սակայն սեփական ջանքերով նա չէր հասնի երկարատև հաջողության: Սկզբում մի օր էլ չէր անցնում, որ նա կռիվ չսկսեց, բայց աստիճանաբար իրավիճակը բարելավվեց:

6 ամիս անց նա ասաց, որ իր կարծիքով միայն աղոթքների շնորհիվ նա ավելի մոտեցավ Աստծուն: Մինչդեռ նա սկսել էր առավոտները խնդրել Աստծուն զորության համար: Նրա զայրույթի պոռթկումները ու ծեծկռտուքների դարձել էին ավելի ու ավելի հազվադեպ:

Այն ժամանակից ի վեր, երբ նա եկել է մեր դպրոց, անցել է տասնմեկ ամիս: Եվ այսօր մենք կարող ենք տեսնել նրա մեջ մեծ դրական փոփոխություններ: Բայց զայրույթի, հայհոյանքների և դաժանության դեմ տարած հաղթանակը նրան հեշտ չէր տրվել:

Դա միանգամայն բնական էր, քանի որ նա փորձում էր հաղթանակ տանել իր ուժերով և հասկացողությամբ, որոնք երբեմն աշխատում էին, իսկ երբեմն ընդհանրապես ձախողվում էին: *Մեր աղոթքները որոշակի հաջողությանը բերեցին, սակայն նրա սխալ մտածելակերպը դեռևս թույլ չեր տալիս, որ գործի Սուրբ Հոգու թարմացնող ուժը:*

Կարո՞ղ է ինչ-որ լավ բան ստացվել, երբ մարդը տեսնում է իր սխալները, փորձում է վերահսկել իր բնավորությունը և հաջորդ պահին կրկին ձախողվում է: Եվ հենց այն պահին, երբ ես պատրաստ էի հուսահատվել, ինձ նվիրեցին այս գիրքը: Դա տեղի ունեցավ ամենա ճիշտ պահին: Ես վերջապես հասկացա, թե ինչն է մեզ պակասում: Դա Սուրբ Հոգու զորությունն էր: Մենք նույնիսկ չե՛նք խնդրել Նրան օգնել մեզ:

Քանի որ «Քայլեր դեպի անձնական վերածնունդ»-ի լուրը ազդեցություն ունեցավ ինձ վրա, ես համարձակությամբ հարցրեցի տղային, թե արդյոք նա երբևէ աղոթել էր Սուրբ Հոգու համար: Ոչ, նա երբեք դա չի արել: Այդ ժամանակ ես փորձեցի նրա մեջ հետաքրքրություն առաջացնել գրքույկի նկատմամբ: Սակայն ես նրան չտվեցի գրքույկը: Նա պետք է ինքը դա ցանկանա: Եվ շատ շուտով նա, իրոք, խնդրեց գրքույկը:

Իր խոսքերով՝ «2012-ի նոյեմբերին ուսուցիչս ինձ տվեց «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գրքույկը: Ես սկսեցի կարդալ այն մեծ հետաքրքրությամբ: Այդ ժամանակ ես գաղափար չունեի, թե ինչպես է գործում Սուրբ Հոգին»:

Առաջին իսկ օրվա ընթացքում նա արդեն կուլ տվեց գրեթե երկու գլուխ, իսկ հետո ինձ էր հարցնում, թե քանի անգամ եմ կարդացել այն: Նա անմիջապես սկսեց կրկին կարդալ այդ գլուխները, որպեսզի կատարի գրքում առաջարկվածը և կարդա այն 6-10 անգամ:

Այդ ժամանակից ի վեր շատ բան է փոխվել: 2012-ի դեկտեմբերից ի վեր այլևս ոչ մի բռունցքային մարտեր, ոչ էլ կռիվներ, անհնար է դրան հավատալ: Տղաները, որոնց նա ամեն օր ծեծում էր, այժմ դարձել են նրա ընկերներ, նրանք խաղաղ յոլա են գնում:

Նա ամբողջովին փոխվել է, նա քաղաքավարի և նույնիսկ բարեհամբույր է դարձել, իսկ խաղաղասիրությունը գերակշռեց իրա ագրեսիվ բնավորությանը: Նրա դասընկերները կարող են հաստատել, որ սա Աստծո աշխատանքն էր: Դրա պտուղները դրսեւորվում են ամեն օր: Ի փառս Աստծո, ուզում եմ նշել, որ տղան որոշել էր մկրտվել 2013 թվականի հունիսին: Մի թե դա Սուրբ Հոգու ազդեցությունը չէ...

22

Ես միշտ մտածում էի, որ կարող եմ առաջնորդել երեխաներին և համոզել նրանց վարվել իմաստուն: Այո՝ համբերությունը, ուշադրությունը և շփումը կարող են դա անել, պարզապես դա չի գործի երկարաժամկետ հեռանկարում: Աստված ստիպված էր միջամտել և սովորեցնել ինձ, որ միայն Իր Հոգին կարող է անհնարինը հնարավոր դարձնել:

Եթե մի օր այս տղան հայտնվի երկնքում, ես վստահորեն կարող եմ ասել, որ դա Տերն է արել: Երբ ես սպառեցի իմ իմաստությունը և հասկացա, որ այլևս չեմ կարող առաջնորդել նրան՝ Աստված սկսեց արմատապես աշխատել նրա հետ: Այս ամենը օգնեց ինձ հասկանալ, որ Աստծո համար անլուծելի դեպքեր չկան»: - Ս.Ր.

Աղոթք. Երկնային Հայր, շնորհակալ եմ Հիսուսի համառ հրավերի՝ Սուրբ Հոգին խնդրելու, համար: Ես ցավում եմ Սուրբ Հոգու պակասի պատճառով կրած անհաջողություններիս համար: Ես աստվածային առաջնորդության կարիքն ունեմ, որպեսզի Հիսուսը կարողանա գործել ինձանում: Ես նրա օգնության կարիքն ունեմ իմ կյանքի բոլոր ոլորտներում: Շնորհակալ եմ, որ Սուրբ Հոգին կարող է փոխել իմ բնավորությունը և ինձ համապատասխանող դարձնել Աստծո արքայության համար: Ես լիովին հանձնվում եմ Քեզ և ինքս ինձ և այն ամենը, ինչ ունեմ: Շնորհակալ եմ, որ ընդունեցիք ինձ և Քո օրհնությունները թափեցիք ինձ վրա: Օգնիր ինձ աճել Սուրբ Հոգու ճանաչման մեջ: Ամեն.

ԳԼՈՒԽ 2
Ո՞ՐՆ Է ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՔԸ

Հոգևոր պատճառ կա՞ մեր խնդիրներին:
Արդյո՞ք այդ պատճառը Սուրբ Հոգու անտեսումը չէ.

ԲԱՑԹՈՂՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Աստվածաշունչը պատասխանում է. *«Ցանկանում էք եւ չ՚ունիք որովհետեւ չէք խնդրում: Խնդրում էք և չէք առնում, որովհետեւ չար կերպով էք խնդրում»* (մարմնավոր մտքով՝ Հռոմ. 8:5-7) *«որ ձեր ցանկութիւններումը վատնէք»* (Հակ. 4:2-3):

Մեր Տեր Հիսուսը սիրով և համառորեն հրավիրում է մեզ խնդրել Սուրբ Հոգի (Ղուկ. 11:9-13): Մենք հասկանում ենք, որ դա պետք է անենք շարունակաբար: Երրորդ գլխում մենք ավելի մանրամասն կանդրադառնանք դրան:

> *«Նրանք խոսում են Քրիստոսի և Սուրբ Հոգու մասին, սակայն դրանից ոչ մի օգուտ չեն ստանում, որովհետև իրենք չեն հանձնում իրենց հոգին Աստծո առաջնորդության և ղեկավարության»:* [1]

Մենք արդեն որոշ ժամանակ աղոթում ենք վերածննդի համար: Սա շատ արժեքավոր է: Դա շատ արժեքավոր /օգտակար/ է: Է. Ուայթն ասում է. «Մեր եկեղեցիներն այսօր Սուրբ Հոգով մկրտության կարիքն ունեն»: [8]

---

7. Է. Ուայթ. «Դարերի փափագը», էջ. 672
8. E. White, Manuscript Releases, vol. 7, p. 267.

«Ինչո՞ւ մենք չենք քաղցում և ծարավում Հոգու պարգևի համար, քանի որ սա այն միջոցն է, որով մենք պետք է ստանանք զորություն: Ինչու չենք խոսում դրա մասին, չենք աղոթում դրա համար, չենք քարոզում դրա մասին»: 9

Լավ է, որ մենք աղոթում ենք վերածննդի համար, բայց մենք ոչ միայն պետք է աղոթենք դրա համար, այլ, ինչպես ասում է Մարկ Ֆինլին՝ **«մենք պետք է գործնականում կիրառենք աստվածաշնչյան վերածննդի տարրերը»**:

10 Թույլ տվեք հրավիրել ձեզ կատարել քայլեր դեպի հոգևոր վերածնունդ: Ձեզանից շատերին նրանք կհանգեցնեն ավելի հարուստ և օրհնված /լիարժեք/ կյանքի:

Նախ, եկեք վերլուծենք խնդիրը: Մենք կմոտենանք այդ հարցին ամենայն լրջությամբ, որովհետև հակառակ դեպքում այդ փոփոխությունները չեն դիտվի որպես կարևոր ու անհրաժեշտ: Դրանից հետո մենք կդիտենք Աստծո որոշումը, որն առաջարկում է մեզ անսահման մեծ օրհնություններ և, վերջապես, կմտածենք այն մասին, թե ինչպես կիրառել այս ճշմարտությունները կյանքում:

Սուրբ Հոգու բացակայությունը մեր կյանքում չի նշանակում, որ այն ամենը, ինչ մենք արել և անում ենք, ապարդյուն է: Միշտ էլ եղել են և այսօր էլ կան բազմաթիվ լավ ծրագրեր ու նախագիծեր: Տերը, անշուշտ, օրհնում է մեր մարդկային ջանքերը: Բայց որքան շատ ավելի մեծ կարող էին լինել արդյունքները, և որքանով լավ կարող էր լինել մեր վիճակը, եթե մենք իսկապես ապրեինք Սուրբ Հոգով, իրականում մտերիմ լինեինք Նրա հետ՝ դա գիտի միայն Աստված :

Հենրի Տ. Բլեքեբին արտահայտեց այս կերպ.

«Նա (Աստված) կարող է վեց ամսվա ընդացքում նվիրված մարդկանց հետ գործելիս անել ավելին, քան մենք կարող ենք անել առանց Նրան՝ վաթսուն տարվա ընթացքում»: 11

Իմաստը նրանումն է, որ անմիջապես հետևենք ճշմարիտ ուղուն՝ Աստծո առաջնորդության ներքո և, այդպիսով, շատ ավելի մեծ հաջողության կհասնենք: Հենց Սա է տեղի ունենում, երբ մենք լցված ենք Սուրբ Հոգով:

Դիտարկենք մի օրինակ՝ ինչ-որ մեկը քարոզում է: Ահա նա ավարտեց խոսել և գուցե ոմանք նրա լուրը ընդունեցին կամ շատերը, կամ անգամ բոլորը ընդունեցին, գուցե և ոչ ոք ջընդունեց: Եթե բոլորն կամ առնվազն շատերը ընդունեցին այդ լուրը եւ կիրառեցին կյանքում, ապա դա կարելի է դիտարկել որպես մեծ հաջողություն: Սա է այն, ինչ տալիս է Սուրբ Հոգին.

---

9. E.G. White, Testimonies for the Church Vol. 8 (www.egwwritings.org), p. 22
10. Mark A. Finley, Revive us again, p. 25
11. Henry T. Blackaby, Den Willen Gottes erkennen und tun (Experiencing God: Knowing and Doing the Will of God), (Kassel, 2002), p. 31

ՄԱՐԴԿԱՆՑ ԵՐԵՔ ԽՈՒՄԲ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՍՏԾՈ ՀԵՏ

Աստծո խոսքը տարբերակում է մարդկանց երեք խմբերի՝ ըստ Աստծո հետ իրենց անձնական հարաբերությունների: Յուրաքանչյուր խումբն ունի իր բազմաթիվ նրբությունները, կախված ծնողական դաստիարակությունից, բնավորությունից, ինքնազարգացումից, տարիքից, մշակույթից, կրթությունից և այլն: Սակայն նույնիսկ այդ բոլոր տարբերություններով հանդերձ, մնում է ընդամենը **երեք հիմնական վերաբերմունք Աստծո նկատմամբ:**
* Ոչ մի հարաբերություն. Աստվածաշունչը սա անվանում է **շնչավոր** մարդ:
* Լիարժեք, իրական փոխհարաբերություններ. Աստվածաշունչն այս մարդուն անվանում է **հոգևոր**:
* Բաժանված կամ կեղծավոր ձևական հարաբերություններ. Աստվածաշունչը նկարագրում է որպես **մարմնի մարդ կամ մարմնավոր**:

Տվյալ դեպքում Աստծո Խոսքի մեջ «շնչավոր», "հոգևոր» և «մարմնավոր» կատեգորիաները վերջնական սահմանումներ չեն: Նրանք պարզապես նկարագրում են մարդու անձնական փոխհարաբերությունները Աստծո հետ:

Այս երեք խմբերը նկարագրված են Ա Կորնթացիս 2:14-16 և Ա Կորնթացիս 3:1-4 համարներում: Հիմա մենք միայն մի փոքր կանդրադառնալ շնչավոր մարդու մասին հարցին: Նա ապրում է այս աշխարհում: Սակայն նույնիսկ արագ հայացքը եկեղեցում գտնվող այս երկու խմբերին՝ կօգնի մեզ հասկանալ, թե որտեղ է թաքնված գլխավոր խնդիրը: Ամենակարևորը՝ գիտակցել, թե որ խմբին եք պատկանում: Այսպիսով, մեր ուսումնասիրությունը կօգնի նաև որոշակի ինքնաքննությանը: Միայն եկեք անդրադառնանք ոչ թե ուրիշների կյանքին այլ մեր սեփական կյանքին:

Որո՞նք են այս կամ այն խմբին դասելու չափանիշները: Մենք կհամոզվենք, որ բոլոր երեք խմբերից յուրաքանչյուրին պատկանումը կապված է Սուրբ Հոգու հետ իրենց անձնական հարաբերություններից:

Շնչաւոր մարդ

*«Բայց **շնչաւոր** մարդն Աստուծոյ Հոգու բաները չէ ընդունում. որովհետեւ նորանք յիմարութիւն են նորա համար. եւ չէ կարող էլ գիտենալ՝ որովհետեւ հոգեւոր կերպով են քննվում»:* (1 Կորնթացիս 2:14):

Շնչաւոր մարդը բացարձակապես ոչ մի կապ չունի Սուրբ Հոգու հետ: Նա ապրում է աշխարհում և կամ ընդհանրապես չի խորհում Աստծո մասին, կամ մտածում է խորհել Աստծո մասին միայն հազվադեպ:

Հոգևոր և մարմնավոր մարդիկ եկեղեցում

Այս երկու խմբերը հիմնականում ներկայացվում են Ա Կորնթացիս 2-րդ և 3-րդ գլուխներում, ինչպես նաև Հռոմեացիս 8:1–17 և Գաղատացիս 4 և 6 գլուխներում: Հարկ է նշել, որ **այդ երկու խմբերի գնահատման չափանիշը՝ նրանց հարաբերությունն է Սուրբ Հոգու հետ**: Դա իրոք այդպես է, քանի որ Աստված սահմանել է, որ Սուրբ Հոգին է մեր միակ կապն երկնքի հետ (տե՛ս «Դարերի փափագը», էջ 322; Մատթ. 12:32) «Սիրտը պետք է բաց լինի Հոգու ազդեցության համար, հակառակ դեպքում մենք չենք կարող ստանալ Աստծո օրհնությունը»: **12**

Եկեղեցու հոգևոր անդամ

Եկեք կարդանք 1 Կորնթացիս 2:15-16:

*«Բայց **հոգեւոր** մարդը ամեն բան քննում է, եւ ինքը ոչ ոքից չէ քննվում: Որովհետեւ ո՞վ գիտաց Տիրոջ միտքը, որ բան սովորեցնէ նորան (տեքստում մեջբերվում է Ես. 40.13). **բայց մենք Քրիստոսի միտքն ունինք»**:*

Հոգևոր մարդը ճշմարիտ քրիստոնյա է: Նա կոչվում է «հոգևոր», քանի որ նա լցված է Սուրբ Հոգով: Այստեղ նույնպես տեսնում ենք, որ հոգեւոր անձի հիմնական չափանիշն է՝ իրա հարաբերությունները Սուրբ Հոգու հետ: Նա ունի լավ և զարգացող հարաբերություններ Սուրբ Հոգու հետ: Հիսուսը գտնվում է «իր կյանքի կենտրոնում», կամ, ինչպես երբեմն ասում ենք. Հիսուսը թագավորում է իր սրտում: Հոգեւոր մարդը լիովին և անմնացորդ նվիրված է Յիսուսին և դա, որպես կանոն, հաստատում է ամեն օր՝ ամեն առավոտ հանձնելով Հիսուսին ինքն իրեն և այն ամենը, ինչ որ ունի: Լաոդիկեայիներին ուղղված հաղորդագրության մեջ նա կոչվում է «տաք», իսկ տաս կույսերի առակում՝ «իմաստուն»: Հռոմեացիս 8:1-17 և Գաղատացիս 5 նույնիսկ ավելին մանրամասն է ասում նրա մասին: Նա ապրում է կյանք «ավելի առատորեն» (Հովհ. 10:10), կամ, ինչպես Պողոսն է ասում. «որ Աստուծոյ ամեն լիութիւնովը լցուիք»(Եփես. 3:19; Կող. 2:9):

Եկեղեցու մարմնավոր անդամ

Մարդը կարող է լինել Եկեղեցու անդամ կարճ ժամանակ կամ երկար տարիներ շարունակ և միևնույն է մնալ մարմնավոր քրիստոնյա: Եթե, ի զարմանս ձեզ, դուք հայտնաբերեցիք, որ ներկայումս մարմնավոր քրիստոնյա եք, մի հուսահատվեք, այլ ընդհակառակը, ուրախացեք, քանի որ դուք հնարավորություն ունեք անմիջապես փոխել այն: Դուք կզգաք անսահման ուրախություն՝ ապրելով Սուրբ Հոգով:

---

12. «Քայլեր դէպի Քրիստոս», 95.1 (www.wwritings.org)

27

Համոզված եմ, որ մարմնավոր քրիստոնյաների մեծամասնությունն գտնվում է այդ վիճակում անգիտակցաբար և ցանկանում են ունենալ շատ ավելի ամուր հավատք: Հաճախ նրանք նման անտեղյակությունը անգամ իրենց մեղքով չե: Միայն մտածեք, թե ինչ մեծ ուրախություն կունենաք, երբ Հիսուսը Սուրբ Հոգու միջոցով կբնակվի ձեր սրտում: (Հիսուսն ասում է Հովհ. 15:11. *"ձեր ուրախությունը լցուած լինի"*): Այս փոփոխության միջոցով դուք քայլ առ քայլ առատ կյանք կունենաք (որը Հիսուսը ինքն էր խոստացել Հովհ. 10:10-ում՝ այս մասին կխոսենք ավելի ուշ) և դուք ամուր հույս կունենաք հավերժական կյանքի:

Աղոթք. Երկնային Հայր, օգնիր ինձ, որ ցանկանամ ինքց ինձ տալ այս հարցերը: Եվ եթե ես մարմնավոր քրիստոնյա եմ, օգնիր ինձ անմիջապես գիտակցել դա: Օգնիր ինձ պատրաստ լինել այն ամենին, ինչը Դու ես ցանկանում: Խնդրում եմ, առաջնորդիր ինձ դեպի երջանիկ առատությամբ կյանքի կյանքի, որը խոստացել է Քրիստոսը և հավերժական կյանքի: Խնդրում եմ՝ վերափոխի իմ սիրտը: Շնորհակալ եմ, որ պատասխանեցիք իմ աղոթքին: Ամեն

Եկեք կարդանք, թե ինչ է ասում Պողոս առաքյալը եկեղեցու մարմնավոր անդամներին Ա Կոր. 3:1-4-ում. *«Եւ ես, եղբարք, չ՚կարողացայ ձեզ հետ խօսել ինչպէս հոգեւորների հետ, այլ ինչպէս մարմնավորների հետ, ինչպէս մանուկների հետ Քրիստոսումը. Կաթ խմեցրի ձեզ, և ոչ թէ կերակուր. որովհետեւ տակավին չէիք կարող, այլ հիմա էլ դեռ չէք կարող: Որովհետև տակավին մարմնավոր էք. վասնզի տակավին նախանձ և կռիվ և բաժանումներ կան ձեզանում. Չէ՞ որ մարմնավոր էք եւ մարդկօրէն էք վարվում: Որովհետեւ երբոր մէկն ասէ, Ես Պօղոսեան եմ, եւ միւսը Ես Ապողոսեան. Չէ՞ որ մարմնավոր էք»:*

Նկատեցիք այստեղ հստակորեն, որ այս խմբին դասելու չափանիշն է կայանում անձնական հարաբերությունները Սուրբ Հոգու հետ: Այս մի քանի հատվածներում Պողոս առաքյալը չորս անգամ նշում է, որ նրանք մարմնավոր են: Ի՞նչ է նշանակում մարմնավորը: Դա նշանակում է, որ այդ մարդն ապրում է մարմնով, բնական ունակություններով, որոնցով օժտված է յուրաքանչյուր մարդ: Ավելին, դա նշանակում է, որ նա լցված չէ Սուրբ Հոգով, կամ լցված է Սուրբ Հոգով անբավարար չափով:

Ոմանք կարծում են, որ այս խումբը բաղկացած է միայն այն մարդկանցից, ովքեր ապրում են բացահայտ մեղքի մեջ: Բայց սա այդ խմբի բազմաթիվ երանգներից միայն մեկն է: Ես ուզում եմ ևս մեկ անգամ շեշտել, որ այս խմբերից յուրաքանչյուրի մեջ կան շատ տարբերություններ:

Պողոսը դիմում է մարմնավոր մարդկանց՝ որպես *«սիրելի եղբայրներ»*, ինչը խոսում է այն մասին, որ նա գրել է **եկեղեցու անդամներին**: Պողոսը չէր կարող խոսել նրանց հետ, *«ինչպէս հոգեւորների հետ»:* Սա նշանակում է, որ նրանք **լցված չէին Սուրբ Հոգով, կամ լցված էին Սուրբ Հոգով անբավարար չափով:** Նա ստիպված էր խոսել նրանց հետ *«ինչպէս մանուկների հետ Քրիստոսումը»*: Սա ցույց է տալիս, որ նրանք չէին աճել հավատքում, ինչպես հարկ էր: Մարդը կարող է ունենալ ընդարձակ աստվածաշնչյան գիտելիքներ և դեռևս հոգեվոր աճ չունենալ: Հոգևոր աճը նշանակում է, որ մենք ամբողջովին նվիրվել ենք Յիսուսին և շարունակական ապրում ենք Սուրբ Հոգով:

Շատ մարմնավոր քրիստոնյաներ զգում են դժգոհություն, հիասթափություն, անարժեքություն, կամ անընդհատ անհաջող փորձեր են անում ինչ-որ բան շտկելու իրենց հոգևոր կյանքում:

Եկեղեցու այլ մարմնավոր անդամները ընտելացել են այս վիճակին, կամ անգամ բավարարված են դրանով: Նրանք անգամ կարող են ասել. «Մենք պարզապես մեղավոր մարդիկ ենք: Մենք ոչինչ չե՞նք կարող անել»:

Կան նաեւ այլ մարմնավոր քրիստոնյաներ, որոնք ուրախ են, որ գիտեն աստվածաշնչյան ճշմարտությունը: Եկեղեցու մարմնավոր անդամները կարող են շատ ակտիվ լինել և նույնիսկ ղեկավարող պաշտոններ զբաղեցնել տեղական եկեղեցում, կամ նույնիսկ եկեղեցու վարչակազմում: Նրանք կարող են նույնիսկ մեծ գործեր ձեռնարկել Աստծո համար:

> **Մթ. 7:22-23**. *«Շատերը կ՚ասեն ինձ այն օրը, Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ քո անունովը մարգարէացանք, եւ քո անունովը դեւեր հանեցինք, եւ քո անունովը շատ զօրութիւններ գործեցինք: Եւ ես այն ժամանակ պարզ կ՚ասեմ նորանց, թէ երբէք ձեզ չեմ ճանաչել. ինձանից դէն գնացէք, ով անօրէնութիւն գործողներ»:*

Ո՞րն է խնդիրը: Հիսուսն ասաց, որ ինքը չի ճանաչում նրանց: Նրանք երբեք չեն ունեցել իրական փոխհարաբերություններ Հիսուսի հետ, հակառակը՝ այն եղել է միայն կեղծավոր: Նրանց կյանքում կա՛մ տեղի չի ունեցել իրական նվիրվածություն, կա՛մ նրանք չկարողացան պահպանել այն: Հիսուսը չէր բնակվում նրանց սրտերում Սուրբ Հոգու միջոցով: Ուստի նրանք չեն ունեցել անձնական փոխհարաբերություններ Քրիստոսի հետ: «Քրիստոսի հետ կարող է լինել բացահայտ կապ...»: **13** Ինչո՞ւ Քրիստոսը մեզանում չէ: Վերջերս ես մի քանի լուրջ խոսքեր կարդացի այս մասին: Նախքան դրանց մասին հիշատակելը, ես ուզում եմ նշել, որ մենք կարող ենք զերծ մնալ այս ամենից, եթե մենք ապրում ենք կյանքը Սուրբ Հոգով.

> «Քրիստոսի Հոգուն հակառակ հոգին հերքում է Նրան՝ չնայած պաշտոնական ճանաչմանը: Մարդիկ կարող են հերքել Քրիստոսին՝ չարախոսությամբ, հիմար խոսակցություններով, կեղծ կամ անազնիվ խոսքերով: Նրանք կարող են հերքել Նրան՝ խուսափելով կյանքի բեռը կրելուց և ձգտելով մեղավոր հաճույքների:

---

13. Է. Գ. Ուայթ «Դարերի փափագը», (1898), էջ. S 676

Նրանք կարող են ժխտել Նրան՝ հարմարվելով աշխարհին, անբարեխիղճ պահվածքով, *ինքնավստահությամբ*, արդարացնելով իրենց, փայփայելով կասկածը, վերցնելով դժվարությունները իրենց վրա և *գերադասելով խավարը*: ***Այս ամենը վկայում է*, որ Քրիստոսը նրանց մեջ չէ**»: **14**

Այս ամենը Աստծո շնորհով կարող է արագ փոխվել: Մենք կաբդրադառնանք այս մտքին երրորդ և հինգերորդ գլուխներում.

Ինչո՞ւ է կարևոր մեր կյանքը հանձնել Աստծուն և նվիրվել Նրան:
Աստծո Խոսքն ասում է. «Արդ աղաչում եմ ձեզ, եղբարք, Աստուծոյ ողորմութիւնովը, որ ձեր մարմինները ներկայացնէք կենդանի, սուրբ եւ Աստուծոյ ընդունելի պատարագ, որ է ձեր բանաւոր պաշտօնը»: (Հռոմ. 12:1)

«Աստված ցանկանում է բժշկել և ազատել մեզ (մեր էգոյի բռնակալությունից և մեղքի գերությունից): Սակայն, քանի որ դա պահանջում է արմատական վերափոխում և մեր ամբողջ էության թարմացում, մենք պետք է լիովին հնազանդվենք Նրան»: **15** Մեր էգոն վիրավորված է, դժգոհ է, վրդովված է, զայրացած է և այլն և այլն: Աստված ուզում է մեզ ազատել այդ զգացմունքներից:

«Նա (Աստված) մեզ կոչ է անում հանձնվել Իրեն, որպեսզի Նա կարողանա իրականացնել Իր մտադրությունը մեր կյանքում: Մեզ մնում է ընտրել, թե արդյո՞ք կազատվենք մեղքի կապանքներից, որպեսզի հաղորդակից լինենք Աստծո զավակների ազատությանը»: **16**

Ի պատասխան մեր նվիրվածության, Աստված մեզ վերստին ծնունդ կտա (Հովհ. 3:1-21): Դրանից հետո մնում է պահպանել այդ նվիրվածությունը (Հովհ. 15:1-17): Այս մասին մենք ավելի մանրամասն կխոսենք երրորդ գլխում:

---

14. Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը» (1898) էջ 357.2 - Das Leben Jesu, 349 [357]
15. Է. Գ. Ուայթ, «Քայլեր դէպի Քրիստոս» (1892), 43.2
16. Է. Գ. Ուայթ, «Քայլեր դէպի Քրիստոս» (1892) p. 43.4

Մորիս Վենդենը այսպես է գրում մեր կյանքը Աստծուն հանձնելու մասին.

«Չկա մասնակի հանձնումը հասկացություն. Մասամբ նվիրված լինելը նույնքան հնարավոր է, որքան հնարավոր է լինել մասամբ հղի: Մարդը կամ նվիրված է, կամ ոչ: Միջին տարբերակ չկա»: **17**

Էլեն Ուայթը հետևյալն է գրում է ամենօրյա նվիրվածության մասին.

«Միայն նրանք կճանաչվեն որպես Աստծո որդիներ և դուստրեր, ովքեր կդառնան Քրիստոսի համագործակիցներ, միայն նրանք, ով կասեն՝ Տե՛ր, այն ամենը, ինչ ես ունեմ՝ Քոնն է, և ես ինքս միայն Քոնն եմ»: **18**

Ուստի, մարդը կարող է լինել եկեղեցում և լինել, այնուամենայնիվ, կորած: Որքա՜ն ողբերգական է այդ: (Ահա այս մասին է ասվում 10 կույսերի առակում և Լաոդիկեին ուղղված ուղերձում):

Ինչո՞ւ է այդքան դժվար տարբերակել մարմնավոր քրիստոնյաներին.

Քանի որ մարմնավոր մարդու կյանքը լի է «կրոնով», նա հաճախ նույնիսկ չի էլ գիտակցում, որ նրան որևէ կարևոր բան է պակասում՝ սերտ և փրկարարական հարաբերություններ Աստծո հետ: Եթե մարդը թույլ չի տալիս Քրիստոսին կառավարել իր կյանքը, ապա Քրիստոսը կանգնում է դռան առաջին և թակում (Հայտն. 3: 20): Եվ Նա ասում է. «Եթե ոչինչ չփոխվի, ես կփսխեմ ձեզ»:

Այստեղ մեկ այլ բան էլ է դեր խաղում: Աստվածաշնչի վրա հիմնված մեր հզոր վարդապետական հիմքի շնորհիվ, մենք ունենք ամուր համոզմունքներ: (Միևնույն ժամանակ, մենք դեռևս ցանկանում ենք հետագայում էլ իմաստություն ստանալ): Մենք համոզված ենք մեր հայացքների ճշմարտացիության մեջ, և սա ոգեշնչում է մեզ: Մենք ունենք շատ գիտելիքներ, մենք ճիշտ բաներ ենք խոսում: Ահա թե ինչու է այդքան դժվար է սահմանել տարբերակել մարմնավորներին: Արդյո՞ք ես երբևէ իսկապես ապրել եմ Սուրբ Հոգու հետ: Եթե ոչ, ապա ինչպե՞ս կարող եմ նկատել տարբերությունը:

Մի հովիվ գրում է. «Ինձ հենց նոր զանգահարեց մի քույր, ով մասնակցում էր «40 օր» ծրագրին: (Մանրամասներ «40-օր» աղոթքի ծրագրի մասին՝ 5րդ գլխում): Նա ասաց, որ այն փոխել է իր ամբողջ կյանքը: **Իր ողջ կյանքի ընթացքում նա փորձում էր հասկանալ, թե ինչ է պակասում իր հոգևոր կյանքում, և հիմա նա գիտեր այդ՝ Սուրբ Հոգին:** Կցանկանայի, որ դուք լսեք նրա փորձը: Նա ասաց, որ կյանքում առաջին անգամ է զգում, որ կապ ունի Աստծո հետ: ...Շրջապատն էլ էր նկատել փոփոխություններ նրա կյանքում»: **19**
Այսպիսով, մենք տեսնում ենք, որ մարդը կարող է զգալ, որ ինչ-որ բան պակասում է, բայց չգիտենալ, թե ինչն է: Շատերը ձգտում են ունենալ ինչ-որ ավելի մեծ բաներ, բայց չգիտեն, թե ինչ է դա, և ինչպես ստանալ այն:

---

17. Morris Venden, 95 Theses on Righteousness by Faith (Pacific Press, 1987), p. 63
18. Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը» , էջ 523
19. Email an H. Haubeil – received on February 15, 2012

Ես երախտապարտ եմ, որ Ա Կոր. 3:1-4-ում երեք անգամ է օգտագործվում *«դեռ»* բառը: *«Որովհետև **դուք** դեռ մարմնավոր եք»*: Սա ցույց բացատրում է մեզ, որ մարմնավոր մարդը հնարավորություն ունի դառնալ հոգեւոր: Ոչ ոք ստիպված չէ մարմնավոր մնալ: Քանի որ նա եկեղեցում է, նա լավ հնարավորություն ունի գիտակցել դա և փոխել իր կյանքը: Ավելի ուշ մենք կխոսենք այն մասին, թե ինչպես դուք կարող եք դառնալ հոգեւոր:

Հարկ է նաև ուշադրություն դարձնել նախանձին ու բաժանությանը վերաբերվող պահերին, քանի որ Աստվածաշունչը ասում է. *«Սակաւին նախանձ եւ կռիւ եւ բաժանումներ կան ձեզանում»*: Այսպիսի վարքագիծը ապացուցում է Պողոսին, որ եկեղեցու մարմնավոր անդամները չեն ապրում Աստծո Հոգով, այլ ավելի շուտ գործում աշխարհիկ ձևով, ինչպես ուրիշները: Նրանք կարող են գործել այնպես, ինչպես բնական մարդիկ, թեև փաթեթավորված կրոնական փաթաթանով: Արդյո՞ք սա չի նշանակում, որ եկեղեցում հակասությունները տեղի են ունենում մարմնական հավատացյալների պատճառով: (Հուդա 19): Միթե Հիսուսի ժամանակներում Փարիսեցիներն ու Սադուկեցիները չէին վիճում միմյանց հետ: Սա նշանակում է, որ դեռևս այն ժամանակներում տարաձայնություններ կար պահպանողականների և լիբերալների միջև: Մի խումբը շատ խստապահանջ էր, իսկ մյուսները ազատ էին վերաբերվում շատ հարցերի: Բայց երկուսն էլ համոզված էին, որ ճիշտ են մեկնաբանում Աստվածաշնչը և գործում են ճշմարտությամբ: Սակայն Հիսուսը ցույց տվեց մեզ, որ երկու խմբերն էլ մարմնավոր են, այսինքն՝ չեն լցված Սուրբ Հոգով: Նման բան հնարավոր է նաև այսօր: Նույնիսկ պահպանողական քրիստոնյաները կարող են լինել մարմնավոր:

Ցավոք, մարդիկ այսօր հաճախ նայում են «պահպանողական կամ լիբերալ» ակնոցների միջով: Սրա առավելությունն այն է, որ ցանկացած արարք կարելի է այս կամ այն կերպ արդարացնել: Այնուամենայնիվ, աստվածաշնչյան այս «մարմնավորների և հոգևորների» դասակարգումը պահանջում է խորը հոգևոր ուսումնասիրություն կատարել: Մենք դա պետք է անենք ի շահ մեզ: Մտածեք, թե ինչ է Աստված հստակ ասում մեզ Գաղատացիս 6: 7-8.

> *«...Որովհետեւ ինչ որ մարդ սերմէ, այն էլ կ՚հնձէ. իր մարմնի մէջ սերմողը մարմնիցն ապականութիւն կ՚հնձէ. Եւ Հոգու մէջ սերմողը Հոգուցն յաւիտենական կեանք կ՚հնձէ»:*

Մարմնավոր մարդը ցանկանում է հետեւել Հիսուսին և հաճո լինել Նրան, բայց նա չի հանձնել իր ամբողջ կյանքը Հիսուսին, կամ եթե հանջնել էր, ապա հետո ինչ-որ կերպ նահանջել է (Գաղ. 3:3, Հայտն. 2:4, 5): Սա նշանակում է, որ նա, նույնիսկ անգիտակցաբար ցանկանում է ապրել միաժամանակ և՛ Աստծո կամքով, և՛ իր իսկ սեփական **միաժամանակ**: Բայց դա հնարավոր չէ: Ի վերջո, մարդը ամեն ինչ իր ձեռքն է վերցնում: Ինչպես ասվում է, նրա կրծքում երկու հոգի են ապրում: Կարո՞ղ է Աստված նման իրավիճակում ուղարկել Սուրբ Հոգին: Պատասխանը տրված է Հակոբոս 4:3. *«Խնդրում էք եւ չէք առնում, որովհետեւ չար կերպով էք խնդրում»:* Ես եկել եմ այն եզրակացության, որ դա նշանակում է խնդրել մարմնավոր մտադրություններով: Արդյոք նման խնդրանքին պատասխանը չի ամրապնդի մարդկային էգո-ն: Հետևաբար, եկեղեցու այս անդամը ապրում է նորմալ մարդկային իմաստության համապատասխան և գործում է իր ուժերի միջոցով: Հայտն. 3:16-ում սա կոչվում է *«գաղջ»* և Մատթ. 25 *«հիմար»:*

32

Ինչո՞ւ է Հիսուսը եկեղեցու մարմնավոր անդամներին անվանում է գաղջ:

Ինչո՞ւ այդքան շատ հավատացյալներ չունեն Սուրբ Հոգու հետ հարաբերությունների փորձ: Այս հարցին պատասխանելու համար մենք նախ պետք է դիտարկենք Լաոդիկեաի երևույթը: Ինչո՞ւ է Հիսուսը Լաոդիցեաի եկեղեցու անդամներին գաղջ անվանում: Նա մեզ հստակ ուղեցույց տվեց. «Ահա ես դռան առաջին կանգնած եմ եւ թակում եմ» (Հայտն. 3:20): Հիսուսը ոչ թե հավատացյալների կյանքի կենտրոնն էր, այլ կանգնած էր դրսում՝ մուտքի դռան դիմաց: Ինչո՞ւ Քրիստոսը չի կարող մտնի ներս: Քանի որ Նրան չեն հրավիրում: Փրկիչն չի պարտադրում հարկադիր իրեն ներս թողնել, քանի որ հարգում է մեր ազատ ընտրության իրավունքը:

Իսկ ինչո՞ւ հավատացյալները դռնից ներս չեն հրավիրում Հիսուսին: Դրա համար կան տարբեր պատճառներ: Ոմանք իրենց հոգեւոր կյանքում առաջնորդվում են զուտ իրենց ինտելեկտով և ճանաչողական գիտությունով, ինչպես դպիր Նիկոդեմոսը: Նրանք չեն հասկանում քրիստոնեական կյանքի էությունը (Հովհ. 3:1-10): Մյուսների համար աշակերտության «գինը» չափազանց բարձր է, չե որ նրանք պետք է հրաժարվեն չափազանց շատ բաներից, ինչպես «հարուստ երիտասարդ տիրակալը»: (համեմատի՝ Մատթ. 19:16-24): Հիսուսին հետևելու համար պահանջվում է անձնազոհություն և պատրաստակամություն, փոխել կյանքը (տես Մատթ.16: 24-25) և լիովին /ամբողջովին/ հանձնվել Աստծուն (Հռոմ. 12:1): Հիսուսին ներս չթողնելը կարող է պայմանավորված լինել մաքուր անփութությամբ, երբ մարդը չի հատկացնում բավարար ժամանակ Հիսուսի հետ անձնական ընկերակցության համար:

Կրկնեմ՝ Հայտն. 3:20-ում ասվող գաղջ լինելու պատճառը հետևյալն է. *«Ահա ես դռան առաջին կանգնած եմ»*: Հիսուսը ոչ թե այդպիսի հավատացյալների կյանքի կենտրոնում է, այլ դրսում կամ ճամփեզրի վրա: Այսպիսով, գաղջությունը վերաբերում է Քրիստոսի հետ անձնական հարաբերություններին: Այլ ոլորտներում շահագրգիռ անձը հաստատ հարկ չունի գաղջ լինել:

Օրինակ. մարդը մեծ ջանքեր է գործադրում իր մասնագիտական կոչման մեջ, և միևնույն ժամանակ անտեսում է իր կնոջը: Նա նվիրված է իր աշխատանքին, բայց գաղջ է ընտանեկան հարաբերություններում: Այդ անձը կարող է նույնիսկ լինել եկեղեցու օրինակելի անդամ, եկեղեցու ջանասեր առաջնորդ կամ հովիվ կամ բաժնի ղեկավար և միևնույն է՝ գաղջ լինել Քրիստոսի հետ ունեցած հարաբերությունների մեջ: Մարդը այնքան նվիրված է բազմաթիվ խնդիրների կատարմանը, որ անտեսում է իր անձնական հարաբերությունները Քրիստոսի հետ: Հիսուսը ցանկանում է հեռացնել մեզանից այդ գաղջությունը: Ցավալի է գիտակցել, որ մարդը կարող է այնքան զբաղված լինել Աստծո գործով (եկեղեցում և միսիոներական ծառայության մեջ), որ նա անտեսում է գործի Տիրոջը:

ՏԱՍԸ ԿՈՒՅՍԵՐԻ ԱՌԱԿԸ

Ի՞նչ է ցույց տալիս Հիսուսի տասը կույսերի մասին առակը հոգևոր և մարմնավոր եկեղեցու անդամների վերաբերյալ:

* Բոլոր 10-ը կույս էին
* Բոլորն ունեին մաքուր աստվածաշնչյան գիտելիքներ
* Բոլորը լապտերներ ունեին
* Բոլորը Աստվածաշունչ ունեին
* Նրանք բոլորը դուրս եկան փեսային դիմավորելու
* Բոլորն անհամբեր սպասում էին 2-րդ գալստին
* Բոլորը գնացին քնելու
* Բոլորը լսեցին աղաղակը և արթնացան
* Բոլորը պատրաստեցին իրենց լապտերներ
* Բոլորի լապտերները վառվեց
* Նրանց կեսը նկատեցին, որ նրանց լապտերները հանգչում են

Նրանք բոլորը պատրաստել էին իրենց լապտերները, **և բոլոր լապտերները վառված էին, բայց վառվող լուսատուներին յուղ է պահանջվում: Էներգիան սպառվել էր:** Կարճ ժամանակ անց նրանցից հինգը նկատեցին, **որ լապտերները հանգչում են**: Հիմար կույսերի լապտերները, որոնք միայն կարճ ժամանակով այրվեցին, ցույց են տալիս, որ նրանք Սուրբ Հոգուց ինչ-որ բան ունեին: Բայց դա բավարար չէր: Յուղը շատ քիչ էր: **Դա է միակ տարբերությունը:**

Երբ հինգը եկան խնդրելու որ իրենց ներս թողնեն, Հիսուսը պատասխանեց. ***«Ես չեմ ճանաչում ձեզ»***: Նրանք չափազանց ուշ ուշադրություն դարձրեցին յուղին՝ դուռը արդեն կողպված էր:

Հիսուսի խոսքերը մեզ ցույց է տալիս, որ մեր անձնական հարաբերությունները Նրա հետ ինչ-որ կերպ կապված են Սուրբ Հոգու հետ: Նա, ով թույլ չի տալիս, որ Սուրբ Հոգին առաջնորդի իրեն, չի կարող ճանաչվել Հիսուսի կողմից: Հռովմեացիս 8:8-9-ում ասվում է. *«Եւ նորանք՝ որ մարմնով են, չեն կարող Աստուծուն հաճոյ լինիլ:... եթէ մէկը Քրիստոսի Հոգին չ՛ունի՝ նա նորանը չէ»*:

Ի դեպ, մենք ունենք **իրական** անձնական փոխհարաբերություններ Հիսուսի հետ միայն Սուրբ Հոգու միջոցով: Ա Հովհաննես 3:24-ը ասում է. *«Եւ սորանում եւ սորանից գիտենք, թէ նա [Հիսուսը]* ***բնակվում է մեզանում՝ այն Հոգուցը որ տուաւ մեզ****»:* Դա նշանակում է, որ եթե ես համոզված եմ, որ Սուրբ Հոգին լցնում է ինձ, ես միևնույն ժամանակ կարող եմ վստահ լինել, որ ես Հիսուսում եմ, և նա ինձանում է:

Սա է հենց այն փորձառությունն, որն ունեցել է մի քույր, ով մասնակցել է «40-օր» աղոթքի ծրագրին: Իր կյանքում Սուրբ Հոգու ներկայության շնորհիվ, նա բոլորովին նոր հարաբերություն ձեռք բերեց Աստծո հետ, և նույնիսկ շրջապատում նկատեցին այդ փոփոխությունները նրա կյանքում:

Հարավային Գերմանիայից քույրերից մեկը գրել է հետևյալը. «Այս գրքույկն և Դենիս Սմիթի «40 օր. Աղոթքներ և նվիրվածություն՝ երկրորդ գալուն նախապատրաստվելու պատրաստվելու համար» գրքույկը միասին ուսումնասիրելը դարձան մեծ և երկար սպասված օրհնություն իմ կյանքում: Մեր եկեղեցու շատ այլ անդամներ ինչպես և մեր եկեղեցու քույրերից մեկը զգացել են, որ ինչ-որ բան միշտ բացակայում էր մեր հոգևոր կյանքում, և այժմ մենք ունենք արտոնություն տեսնելու, թե ինչպես Հիսուսը մտավ մեր կյանք և սկսեց մեզ փոխել: Նա /դեռ/ շարունակում է աշխատել մեզ հետ, և քայլ առ քայլ մեզ մոտենում է Իրեն»:

Մեկ այլ եղբայր գրել էր հետևյալը. «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գրքույկը խորապես հուզեց ինձ: Տաս կույսերի մասին գլուխը և հատկապես Հռովմեացիների 8.9b հատվածը. *«եթէ մէկը Քրիստոսի Հոգին չ՛ունի՝ նա նորանը չէ»* զգալիորեն ցնցեց ինձ: Հանկարծ ես սկսեցի կասկածել, թե արդյոք ես ունեմ Սուրբ Հոգին, և արդյոք Նա գործում է ինձանում, որովհետև իմ կյանքում ակնհայտ էր համապատասխան «պտուղների» պակասը: Այս շաբաթ օրը ես ավարտեցի, և անսահման խորը տխրությունը լցրեց ինձ: Այնուհետև ես կարդացի 89-րդ էջի աղոթքը և իմ մեջ մեծ ցանկություն առաջացավ՝ ստանալու Սուրբ Հոգին, որպեսզի իմ սիրտը վերափոխվի և որ Երկնավոր Հայրը փոխի ինձ իր կամքի համաձայն: … Շնորհակալ եմ գրքույկի և այն խոսքերի համար, որոնք խորապես հուզեցին ինձ»: A.P.

Մարմնավոր քրիստոնյայի ամենամեծ ողբերգությունն այն է, որ նա չի ստանա հավերժական կյանք, եթե նրա վիճակը չփոխվի, ինչպես գրված է Հռոմ. 8:9 *«իսկ եթէ մէկը Քրիստոսի Հոգին չ՛ունի՝ նա նորանը չէ»*:

Ամփոփենք. Հոգևոր և մարմնավոր եկեղեցու անդամի հիմնական տարբերությունը կայանում է իրենց կյանքում Սուրբ Հոգու ներկայության մեջ: Հոգևոր քրիստոնյան լցված է Սուրբ Հոգով, մինչդեռ մարմնավոր քրիստոնյան չի լցված կամ բավարար չափով չի լցված Սուրբ Հոգով:

Անգամ եթե գիտակցել եք, որ մարմնավոր քրիստոնյա եք, մի վրդովվեք: Աստված ձեզ առաջարկում է միջոց՝ Սուրբ Հոգին:

Որոշ շրջանակներում Սուրբ Հոգու որոշ պարգևները չափազանց են շեշտադրվում, մյուս կողմից, այլ շրջանակներում Սուրբ Հոգին անտեսված է: Թող մեր սիրելի Տերը օգնի մեզ հետևել իր սուրբ Խոսքին, և չշեղվել ոչ աջ և ոչ ձախ:

20. 2013 թվականի մարտի 31-ի էլ. փոստից

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ. ՎԱՂ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Համեմատելով վաղ եկեղեցին ներկայիս ժամանակի եկեղեցու հետ, մենք գալիս ենք այն եզրակացության, որ վաղ եկեղեցին, ըստ երևույթի, հիմնականում բաղկացած էր հոգևոր հավատացյալներից: Գործք Առաքելոց գիրքը ցույց է տալիս, որ հենց դա է եղել իրենց արագ և հաջողակ զարգացման պատճառը: Նրանք չունեին ինչ-որ օժանդակ միջոցներ, սակայն նրանք ունեին Սուրբ Հոգին: Այսօր մենք առատ միջոցներ ունենք բայց և ունենք Սուրբ Հոգու անբավարարություն:

> Հիշենք Ա. Վ. Թոզերի խոսքերը. «Եթե այսօր Սուրբ Հոգին վեր առնվեր մեր եկեղեցուց, մեր արածի 95%-ը կշարունակվեր առանց փոփոխությունների, և ոչ ոք չէր նկատի տարբերություն: Իսկ եթե Սուրբ Հոգին վեր առնվեր վաղ եկեղեցուց, ապա նրանց գործողությունների 95%-ը (այսինքն՝ գրեթե ամեն ինչը) կանգ կառներ, և բոլորը կնկատեին այդ տարբերությունը»: **21**

Մենք սովորե՞լ ենք ապրել առանց Սուրբ Հոգու: Մի՞ թե այսօր Եկեղեցին հիմնականում կազմված է մարմնավոր քրիստոնյաներից:

Արդյո՞ք դրա հետևանքը չէ, որ մենք հաճախակի անզոր ենք և չունենք զգալի հաղթանակներ: Արդյո՞ք մեր մարմնավոր վարվելակերպը չի բերել այն փաստին, որ շատ տեղերում մենք ունենք եկեղեցու թույլ աճ: Արդյո՞ք բազմաթիվ լուրջ խնդիրներ տարբեր ոլորտներում արմատավորված չեն մարմնավոր վարվելակերպում: Մենք ավելի ու ավելի շատ կնկատենք, որ մեր հիմնական անձնական և համընդհանուր խնդիրը կայանում է Սուրբ Հոգու բացակայության մեջ: Անձնական հարաբերությունների ոլորտում մենք դա կարող ենք արագ փոխել՝ Աստծո օգնությամբ:

Եկեղեցու ծառայողներին ուղղված հետևյալ ուղերձը իրականում վերաբերում է մեզանից յուրաքանչյուրին:

Յոհաննես Մագերն ասում է. «Պողոսը տարբերություն է դնում հոգևոր և մարմնավոր քրիստոնյաների միջև, նրանց, ովքեր լցված են Սուրբ Հոգով և նրանց, ովքեր իրենց կյանքում տեղ չունեն Սուրբ Հոգու համար. մկրտված են Սուրբ Հոգով, բայց լցված չեն Սուրբ Հոգով:

---

21. Dr. S. Joseph Joseph Kidder, Anleitung zum geistlichen Leben (Էնդրյուզի համալսարան), PPP Folie 2

Կարելի է սովորել քարոզել, հրապարակայնորեն աղոթել, կազմակերպել եկեղեցու կյանքը, պատրաստել ավետարանչական ծրագրեր, անցկացնել հովվական խորհրդատվություններ և գործնականում իրականացվել այս ամենը առանց Սուրբ Հոգու: Էլեն Գ. Ուայթը հետևյալ ձևով է նկարագրել այս վտանգավոր իրավիճակը. «Աստծու Հոգու այդքան քիչ դրսևորման պատճառն այն է, որ ծառայողները սովորել են գործել առանց Նրա» (Էլեն Գ. Ուայթ. «Վկայություններ եկեղեցու համար», հատոր 1, էջ 383): Որքան էլ կարևոր է քարոզիչի համար հիմնական կրթությունը և շարունակական ուսուցումը, նրա համար նույնիսկ ավելի կարևոր է, որ նա թույլ տա իրեն անընդհատ լիցքավորել Սուրբ Հոգով:

Յոհաննես Մագերը երկար տարիներ եղել է հովիվ, ավետարանչական և համակարգված աստվածաբանության պրոֆեսոր: Նրա վերջին աշխատանքը եղել է Եվրո-աֆրիկյան դիվիզիոնի (ներկայումս՝ Միջեվրոպական դիվիզիոն) ծառայողական բաժնի քարտուղարի պաշտոնում՝ Շվեյցարիայի Բեռն քաղաքում: Այժմ նա թոշակառու է և ապրում է Գերմանիայի Ֆրիդենսաու քաղաքում: **22**

Ամփոփելով՝ լինել մարմնավոր նշանակում է ապրել սովորական՝ մարդկային ուժերով և կարողություններով, առանց Սուրբ Հոգու կամ ունենալով Սուրբ Հոգի անբավարար չափով:

ՄԱՐՄՆԱՎՈՐ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշնչյան այնպիսի մեծ սկզբունքները՝ ինչպիսիք են սիրել թշնամուն, միշտ ներել մարդկանց, հաղթահարել մեղքը և այլն, հնարավոր է հասնել միայն Սուրբ Հոգու զորությամբ, այլ ոչ թե մարդկային ջանքերով: Սա մեզ ցույց է տալիս, որ մարմնավոր քրիստոնեության հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ նրանք ապրում են կյանքով, որը հիմնված է բացառապես մարդկային ուժի վրա: Մենք չենք կարող կատարել Աստծո կամքը միայն մեր ուժերով: Եկեք կարդանք այս թեմային վերաբերող մի քանի աստվածաշնչյան համարներ:

Ես. 64:6 *«եւ դաշտանի շորի պէս է մեր ամեն արդարութիւնը»*,

Երեմ. 13:23 *«Մի՞թէ Եթէովպացին կփոխէ իր մորթը, կամ ինձը՝ իր խայտուցները, որ դուք էլ կարողանայիք բարութիւն անել, որ սովորած էք չարութիւն անելու»*:

Եզեկ. 36:26-27 *«Եւ ես ձեզ նոր սիրտ պիտի տամ, եւ նոր հոգի պիտի դնեմ ձեր միջումը, . . . Եւ իմ հոգին պիտի դնեմ ձեր միջումը, եւ պիտի անեմ, որ իմ օրէնքների մէջ վարուիք եւ իմ դատաստանները պահէք եւ նորանց կատարէք»*:

---

22. Johannes Mager, *Auf den Spuren des Heiligen Geistes (Following the Steps of the Holy Spirit),* (Luneberg, 1999), pages 102-103.

Rom. 8:7 «Որովհետեւ մարնի խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. Որովհետեւ Աստուծոյ օրէնքին չէ հնազանդում, **եւ կարող էլ չէ**:

Էլեն Ուայթը շատ պարզ և ճշգրիտ ասում է.

«Նա, ով փորձում է հասնել դրախտ իր գործերով՝ օրենքը պահելով, փորձում է անել անհնարինը: Մարդը չի կարող փրկվել առանց հնազանդվելու, բայց **նրա գործերը չպետք է լինեն ինքն իրենից. Քրիստոսը պետք է աշխատի իր մեջ՝ ըստ Իր կամքի և բարի հաճության**»: 23

Կարծում եմ, որ այս մեջբերումները բավականաչափ համոզիչ կերպով ցույց են տալիս, որ մենք առանց Սուրբ Հոգու ունակ չենք կատարել Աստծո կամքը: Մեր հիմնական խնդիրն այն է, որ միշտ որոշենք հետևել Աստծո կամքին, և նա մեզ ուժ կտա կատարելու այն: Հավատի միջոցով արդարության ուսմունքի այս ընկալումը չափազանց կարևոր է և ազատություն տվող: Այնուամենայնիվ, մենք այստեղ չենք կարող մանրամասն անդրադառնալ դրան:

Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼ, ԵՐԲ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ ՓՈՐՁՈՒՄ Է ԱՆԵԼ ՄԻ ԲԱՆ, ՈՐ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է ԻՐ ՈՒԺԵՐԸ

Ինչ է տեղի ունենում, երբ մենք հաճախ մտածում ենք. «Ես չկարողացա՛ դա անել: Ես կրկի՞ն ձախողվեցի»: Կարծում եմ, որ ինչ-որ չափով հիասթափություն ենք ապրում:

Կարծում եմ, որ այս խնդիրը շատ ավելի նկատելի է երիտասարդ սերնդում, քան ավագ: Ավագ սերնդի մոտ ավելի է զարգացած պատասխանատվության զգացումը, նրանք ավելի հարմարվող են ընտանիքի, դպրոցի և աշխատանքի հարցերում: Այնպես որ, նրանք այնքան հեշտ չեն ընկնում հուսահատության մեջ, որքան երիտասարդները: Բայց խնդիրը հավասարապես առկա է թե երիտասարդների, թե ավագ սերնդի մոտ: Միայն թե, ավելի երիտասարդը ավելի զգայուն է դրա նկատմամբ: Յուրաքանչյուր մարմնավոր քրիստոնյայի գլխավոր խնդիրն է՝ ճանապարհորդել հավատքի ճանապարհով սեփական ուժերով, անկախ այն բանից, նա գիտակցում դա, թե ոչ:

Ինչպե՞ս ենք փորձում լուծել այս խնդիրը: Մեկը սկսում է ավելի շատ աղոթել, խնդրել Աստծո օգնությունը և ավելի շատ ջանքեր գործադրել: Մեկ այլ մարդ կարծում է, որ մենք չպետք է այդքան կարճամիտ լինենք: Այսուհետև նա սկսում է գործերին ավելի թեթևամտորեն մոտենալ և իրեն ավելի ազատ է զգում: Մեկ ուրիշը լիովին հրաժարվում է իր հավատից և կարծես թե իրեն նույնիսկ ավելի լավ է զգում: Միակ խնդիրն այն է, որ այս թվացյալ լուծումները կեղծ լուծումներ են, քանի որ վաղ թե ուշ կհանգեցնեն ցավալի հետևանքների: Ճիշտ ուղին Աստծո օրենքները լրջորեն ընդունելն է, քանի որ դրանք տրվել են մեզ սիրով և մեր իսկ բարիքի համար: Սակայն դրա համար մեզ Աստծո զորությունն է անհրաժեշտ: Ճիշտ ուղին Սուրբ Հոգու զորությամբ ապրելն է՝ աճելով ուրախության, մոտիվացիայի, ուժի, պտղաբերության և հաղթանակի մեջ:

---

23. Է.Գ. Ուայթ, «Review and Herald», 1 հուլիսի, 1890

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Կարծում եմ, որ մեզ համար արդեն ակնհայտ է, որ այս խնդիրը նախեւառաջ մարմնավոր քրիստոնեությանն է վերաբերում: Ավելի պարզ չէ դառնում, թե ինչո՞ւ Հիսուսը չի ցանկանում գաղջ հետևորդներ ունենալ: Նրանք չեն ապրում կյանքը առատությամբ, որը Աստված ցանկանում է պարգևել մեզ, և վատ օրինակ են ծառայում, չնայած նրանց մեծ մասը նույնիսկ չգիտի այդ մասին: Խնդիրը շատ ավելի լուրջ է, քան մենք կարծում ենք: «Անվճռական քրիստոնյաները ավելի վատն են, քան անհավատները, քանի որ նրանց կեղծավոր խոսքերը և խուսափողական դիրքը շատերին մոլորեցնում են»: **24**

Արթուր Գ. Դենիելսի «Քրիստոսը մեր արդարությունն է» գրքում կարդում ենք հետևյալը. «Բայց ամենախաբուսիկն և կործանարարը ֆորմալիզմն է: Դա այն թաքնված, անսպասելի ժայռն է, որի վրա դարերի ընթացքում եկեղեցին այդքան հաճախ գրեթե ավերվել է: Պողոսը նախազգուշացնում է մեզ, որ «աստուածպաշտութեան կերպարանքն»՝ առանց Աստծո զորության, կլինի վերջին օրերի վտանգներից մեկը և խորհուրդ է տալիս մեզ ետ քաշվել նրանց խաբուսիկ, հմայիչ ազդեցությունից»: **25**

Մարմնավոր քրիստոնեությանը հանգեցնող գործոնները

Ստորեւ բերված են գործոններ և պատճառներ, որոնք կարող են հանգեցնել մարմնավոր քրիստոնեության.

1. **Անփութություն՝** - Մենք բավարար չափով չենք նվիրվել «Սուրբ Հոգով կյանքը» խնդրին, կամ չենք գտել այն գործնականում կիրառելու բանալին:

2. **Անհավատությունը կամ հավատքի պակաս՝** - Սուրբ Հոգով լցված լինելու անհրաժեշտ նախադրյալն է՝ մեր կյանքը ամբողջությամբ հանձնել Հիսուս Քրիստոսին: Դա նույնպես կարող է պատահել անտեղյակության պատճառով, կամ գուցե այն պատճառով, որ մենք վախենում ենք, որ Տերը մեզ այլ կերպ է առաջնորդելու, քան մենք ենք ուզում: Սա նշանակում է, որ մենք լիովին չենք վստահում Աստծո սիրոն և իմաստությանը:

---

24. Է. Գ. Ուայթի Նամակ 44, 1903, մեջբերված Adv. *Bible Commentary*, Vol.7, էջ 963, Հայտն. 3:15-16

25. Arthur G. Daniells, *Christ our Righteousness,* էջ 30, - Christus unsere Gerechtigkeit (Hamburg 1962), S.20

3. Սխալ հասկացություններ՝ - Մարդը կարող է մտածել, որ լի է Սուրբ Հոգով, թեև իրականում Նա մեզանում կա՛մ չկա, կա՛մ կա, բայց անբավարար չափով: Այս խնդիրը՝ կարծես թե, ամենատարածվածն է:

4. Լինելով շատ զբաղված՝ - Մարդիկ այնքան ծանրաբեռնված են, որ կարծում են, որ Քրիստոսի հետ հարաբերություններ պահպանելու համար ընդհանրապես ժամանակ չունեն, կամ շատ քիչ ժամանակ ունեն դրա համար: Կամ նրանք գտնում են այդ ժամանակը, բայց որևէ առաջընթաց չեն ունենում Աստծո հետ կապերը ամրացնելու մեջ:

5. Թաքնված մեղքերը՝ հնարավոր է՝ կործանված կապերը՝ սա նման է կարճ միացման, որը նշանակում է Աստծո զորության հետ կապի բացակայություն:

6. Գործում են հիմնականում ըստ իրենց զգացմունքների: Աստծո Խոսքն ասում է. «Արդարը հաւատքից կ՚ապրի»: Արդյոք ես որոշումներ եմ կայացնում Աստծուն վստահելով, թե՛ իմ զգացմունքներով առաջնորդվելով: Ինձ շատ տպավորեց Ռոջեր Մորնիերի այս մեջբերումը. *«Հոգիները դրդելու են մարդկանց ավելի շատ ուշադրություն դարձնել իրենց զգացմունքներին, քան լսել Աստծո մարգարեների խոսքերը: Հոգիների համար չկա ավելի հուսալի միջոց վերահսկել մարդկանց կյանքը, ընդ որում անձը ինքը անգամ չի էլ հասկանում, թե ինչ է տեղի ունենում»*: **26**

Ինչո՞ւ ես պետք է խնդրեմ Սուրբ Հոգի, նույնիսկ արդեն լցված լինելով Սուրբ Հոգով:

Մի կողմից, Սուրբ Հոգին տրվում է մեզ, որպեսզի բնակվի մեր մեջ: Մյուս կողմից, մենք պետք է հավատքով անդադար խնդրենք Սուրբ Հոգի: Ինչպե՞ս լուծել այս թվացյալ հակասությունը:

Մի կողմից:
Հիսուսն ասել է Հովհաննես 14.17-ում. ***«Որովհետեւ ձեզ մօտ է մնում եւ ձեզ հետ կ՚լինի»*** Գործք 2:38 ասում է. *«Ապաշխարեցէք՝ եւ ձեզանից ամեն մէկը թող մկրտուի …, եւ Սուրբ Հոգու պարգեւը կ՚ընդունիք»**:***

Մյուս կողմից:
Երբ Հիսուսն ուսուցանում եր աղոթքի մասին, Նա ասաց Ղուկաս 11.9-13. *«Խնդրեցէք՝ եւ կտրուի ձեզ. . . ո՞րքան աւելի երկնաւոր Հայրը Սուրբ Հոգին կտայ նորանց, որ ուզում են նորանից»*: Եփ. 5.18-ում ասվում է. *«... այլ լցուեցէք Հոգով»:* Երկու դեպքում էլ հունարեն բնօրինակում այս տեքստերը արտահայտում են շարունակական խնդրանք:

Լուծում.

Է. Գ. Ուայթն ասում է. «Հոգու գործողությունները միշտ ներդաշնակ են գրված խոսքի հետ՝ ինչպես բնության մեջ, այնպես էլ հոգևոր աշխարհում: Կենսաբանական կյանքը ամեն պահ պաշտպանվում է Աստծո զորությամբ, սակայն այն պահպանվում է ոչ թե հրաշագործ ձևով, այլ մեր հասանելիության սահմաններում գտնվող օրհնությունների միջոցով: Այսպիսով, հոգևոր կյանքը ապահովվում է այն միջոցներով, որոնք տրամադրել է Աստվածային նախախնամությունը: Եթե Քրիստոսի հետևորդը ցանկանում է աճել «մինչեւ որ կատարեալ մարդ Քրիստոսի կատարեալ հասակի չափովը» (Եփես. 4.13), նա պետք է ուտի կյանքի հացը և խմի փրկության ջուրը: Նա պետք է արթուն մնա, աղոթի և աշխատի, բոլոր բաներում հնազանդվելով Աստծո խոսքում տրված խորհրդներիր»: **27**

Մեր ծննդյան ժամանակ մենք ստացանք կյանք: Այս կյանքը պահպանելու համար մենք պետք է ուտենք, խմենք, մարզվենք և այլն: Նույնը տեղի է ունենում մեր հոգեւոր կյանքում: Մենք ստանում ենք Սուրբ Հոգին, երբ մկրտվում ենք ջրից և Հոգուց (վերստին ծնունդ), և այդ հոգևոր ուժը պահպանվում է մեր ողջ կյանքում: Այս հոգևոր կյանքը պահպանելու համար անհրաժեշտ է օգտագործել Աստծո կողմից տրված հոգևոր միջոցները՝ Սուրբ Հոգին, Աստծո Խոսքը, աղոթքը, մեր ավետարանչությունը և այլն:

Հովհաննես 15:4-ում Հիսուսն ասում է. *«Կացէք ինձանում՝ եւ ես ձեզանում»*: Է. Գ. Ուայթը այս մասին ասում է. «Կենալ Քրիստոսում նշանակում է նրա Հոգու մշտապես ընդունում, Նրան ծառայելու անվերապահ հնազանդության կյանք»: **28**

Ահա թե ինչու մենք պետք է ամեն օր հավատքով խնդրենք Սուրբ Հոգին և ամեն առավոտ հանձնենք Տիրոջը ինքներս մեզ այն ամենը, ինչ ունենք:

ՈՐՏԵ՞Ղ ԵՄ ԵՍ

Այժմ ամենակարևորն է, պարզել այն, թե որ խմբին եմ պատկանում ես: Որտե՞ղ եմ ես:

Երբ իմ սիրելի մայրը 20 տարեկան էր, նա, պատասխանելով մի տղամարդու հարցին, ասեց, որ իրեն չի հետաքրքրում հավատքը: Այնուհետև տղամարդը հարցրեց. «Ի՞սկ եթե այս երեկո Դուք մահանաք»: Այս դիտողությունը ծանր հարվածեց նրան, սակայն հեպագայում շատ դրական ազդեցություն ունեցավ: Հարցը հանգեցրեց նրան, որ մայրս որոշում ընդհունի հետևել Հիսուսին և միանալ եկեղեցուն: Մի գուցե նման հարցը կարո՞ղ է և ձեզ օգնել:

Ենթադրենք... դուք այսօր մահանո՛ւմ եք .... (սրտի կաթվածի՞ց, վթարի՞ց)
Դուք համոզված եք, որ հավերժական կյանք կստանաք Հիսուսի հետ:
Մեք մնա անորոշության մեջ:

27. Է. Գ. Ուայթ, «The Acts of the Apostles», (1911), p. 284.2
28. Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը», (1898), էջ 676.2

Ինչ-որ անհանգստացնող բան

Սկսելով հասկանալ այդ խնդրի լրջությունը ես սկսեցի ավելի շատ տագնապ զգալ: Ես շատ էի մտածում և աղոթում, թե արդյոք պետք է գրել այս պարբերությունը: Բայց որոշեցի օգտվել այդ հնարավորությունը, քանի որ դա երջանկության խնդիր է ինչպես այս կյանքում, այմպես էլ հավերժության մեջ: Եվ նա հատուկ ազդեցություն է թողնում ինչպես ամուսնության և ընտանիքի վիճակի վրա, այմպես էլ եկեղեցու առաքելության և գործունեության վրա: Ես չգիտեմ, թե ում կվերաբերի այս հաղորդագրությունը, բայց ուզում եմ օգնություն ցույց տալ այն անձանց, ովքեր ինչ-որ բանով մտահոգված են, քանի որ այն նույնպես օգնել է ինձ: Յուրաքանչյուր մարմնավոր մարդուն շատ կարևոր է գիտակցել դա, այլապես նա չի կարող օգտվել Աստծո զորությունից և վերափոխվել: Աստված իր մեծ սիրով ցանկանում է առատորեն օրհնել մեզ, որպեսզի մենք Սուրբ Հոգու միջոցով սերտ հարաբերություններ ունենալ Հիսուս Քրիստոսի հետ: Դրա արդյունքում մենք կկարողանանք խուսափել մեծ կորուստներից և կզգանք մեծ օրհնություններ: Եվ առավել ուշագրավն այն է, որ Աստծո օգնությամբ մենք շատ արագ կարող ենք շտկել իրավիճակը (ավելի մանրամասն՝ 3-րդ և 5-րդ գլուխներում):

Մարմնավոր քրիստոնեության Խնդիրը Աստվածաշնչում նկարագրվում է տարբեր ձեւերով: Առանձին խմբեր և ալդ խմբի յուրաքանչյուր անձ կարող է ունենալ տարբեր ուղղություններ, սակայն կենտրոնական խնդիրը մնում է նույնը: Տարբեր ուղղություններն են.

* «**մարմնով վարվող կամ մարմնավոր»՝** - Հռոմ. 8:1-17; Ա Կոր. 3:1-4, Գաղ. 5:16-21 և այլ տեղեր
* «**Հիմար**»՝ - Տաս կույսերի առակը Մատթ. 25:1-13
  «Հիմար կույսերի կերպարով ներկայացված եկեղեցու վիճակը կարելի է անվանել նաև լաոդիկական վիճակ»: **29**
* «**Գաղջ**»՝ - ուղերձ Լաոդիկեին Հայտն. 3: 14-21
* «Ո՛հ թէ ցուրտ լինէիր կամ տաք:» (Հայտն. 3:15): Զարմանալի՛ է: Հիսուսը նախընտրում է սառը գաղջին: Ո՞րն է դրա պատճառը: «Անվճռական երկմտող քրիստոնյաները հեթանոսներից ավելի վատն են, քանի որ նրանց կեղծավոր խոսքերը և խուսափողականական դիրքորոշումը շատերին մոլորեցնում է: Հեթանոսը չի թաքցնում իրա ով լինելը: Գաղջ քրիստոնյան երկու կողմին էլ խաբում է՝ նա ո՛չ լավ աշխարհիկ մարդ է, ո՛չ էլ լավ քրիստոնյա: Սատանան օգտագործում է նրան անել այնպիսի մի աշխատանք, որը ոչ ոք չի կարող անել». **30**:
* «**չը ծնվել վերստին**» կամ չի մնացել այս վիճակում (Հովհ. 3:1-21)

«Վերստին ծնունդը հազվադեպ փորձ է աշխարհի այս դարաշրջանում: Սա է պատճառը, թե ինչու եկեղեցիներում այդքան շատ տարակուսանքներ են առաջանում: Այդքան շատերը, ովքեր ընդունում են Քրիստոսի անունը, սրբագործված չեն և ամբարիշտ են: Նրանք մկրտվել են, բայց թաղվել են կենդանի: Սեփական «ես»-ը չի մեռել, և, հետևաբար, նրանք հարություն չեն առել Քրիստոսում նոր կյանքի համար»: **31**

---

29. Է. Գ. Ուայթ, *Review and Herald,* Aug. 19, 1890
30. Է. Գ. Ուայթ, Letter 44, 1903, quoted in the *Seventh Day Adventist Bible Commentary*, Vol.7, p. 963 on Rev. 3: 15.16
31. Է. Գ. Ուայթ, MS 148, 1897, quoted in the *Seventh Day Adventist Bible Commentary* Vol.6, p. 1075 Many buried alive

* **աստուածպաշտության կերպարանք՝ -** «Որ աստուածպաշտութեան կերպարանքն ունին, բայց նորա զօրութիւնն ուրացած են»: 2 Տիմ. 3:5: Արթուր Գ. Դանիելսը այս մասին ասում է հետևյալը. «… Բայց ֆորմալիզմը ծայրաստիճան խաբուսիկ և կործանարար է: Դա այն թաքնված, անսպասելի ժայռն է, որը դարերի ընթացքում բազմաթիվ անգամ եկեղեցուն սպառնացել է նավաբեկությամբ: Պողոսը նախազգուշացրեց մեզ, որ այս «աստուածպաշտության կերպարանքը» (Բ Տիմոթ. 3:5) առանց Աստծո զորության (առանց Սուրբ Հոգով լցվելու) կլինի վերջին օրերի վտանգներից մեկը և հորդորում է մեզ խուսափել դրա հարմարավետ և մոլորեցնող ազդեցությունից»: **32**

Եվս մի քանի ցնցող մեջբերումներ Էլեն Ուայթի աշխատանքներից.

* **Քչերը, շատ քչերը**

«Իմ երազում մի նշանակավոր շենքի դռան մոտ կանգնած էր պահապանը և հարցնում էր բոլորին, ով մոտենում էր մուտքին. «Դուք ստացել եք Սուրբ Հոգին»: Ձեռքին մի չափիչ փայտ կար, և միայն քչերին, շատ քչերին էր թույլ տրվում մտնել շենք»: **33**

* **Քսան հոգուց անգամ մեկը պատրաստ չէ**

«Ինձ տրվել է հանդիսավոր հայտարարություն, որը ես ուղղում եմ եկեղեցուն, որ քսան հոգուց, որոնց անունները գրանցված են եկեղեցական գրքերում, անգամ մեկը պատրաստ չէ երկրային պատմության ավարտին, և աշխարհում կլինի նույնքան առանց Աստծո և առանց հույսի, որքան սովորական մեղավորը»: **34**

* **Ինչո՞ւ ենք այդքան քնկոտ:**

«Ինչո՞ւ են Քրիստոսի զինվորները այդքան քնկոտ և անտարբեր: Որովհետև որ նրանք այնքան թույլ իրական կապ ունեն Քրիստոսի հետ, որովհետև որ նրանք հեռու են Նրա Հոգուց»: **35**

* **Մեծագույն վտանգը**

«Ես այստեղ կանգ չեմ առնի կյանքի կարճության և անորոշության վրա: Սակայն կա մի սարսափելի վտանգ, վտանգ՝ որը բավարար չափով չի հասկացվում, խոսքը Աստծո Սուրբ Հոգու աղաչող ձայնին հանձնելուն ձգձգելու մասին է, մեղքի մեջ ապրելու ընտրություն կատարելու մասին է, քանզի նման հապաղումը իրականում տեղ ունի»: **36** Ո՞րն է մեղքի էությունը: *«Որովհետեւ ինձ չեն հաւատում»* (Հովհ. 16:9): Այն բանի նշանը, որ մենք իսկապես հավատում և վստահում ենք Հիսուսին, այն է, որ մենք լիովին հանձնվում ենք Նրան: Դա պայմանավորված է մեր լիակատար նվիրումով, մեր պատրաստակամությամբ ամեն ինչում հետևել Նրան:

---

32. A. G. Daniells, Christ our Righteousness, p. 20
33. Է. Գ. Ուայթ, Selected Messages, Vol. 1 (1958), p. 109.2
34. Է. Գ. Ուայթ, Christian Service (1925), p. 41.1
35. Է. Գ. Ուայթ, «Մեծ պայքար» (1911), էջ. 507.3
36. Է. Գ. Ուայթ, Selected Messages, Vol. 1 (1958), p. 109.2

43-44

Ուզում եմ ևս մեկ անգամ կրկնեմ. ես առիթը օգտագործեցի ավելացնելու այս շատ լուրջ պարբերությունը, քանի որ դա կապ ունի մեր անձնական երջանկության հետ այս կյանքում և հավերժության մեջ, ինչպես նաև՝ անդրադառնում է մեր ամուսնության, ընտանիքների և եկեղեցիների վրա:

Հարցե՛ր և ավելի շատ հարցեր

Վճռորոշ հարցն այն է, թե արդյո՞ք դուք լցված եք Սուրբ Հոգով, թե ոչ: Բայց ե՞րբ է մարդը լցված Սուրբ Հոգով: Որո՞նք են դրա անհրաժեշտ նախադրյալները: Որո՞նք են Սուրբ Հոգով կյանքի դրական պտուղներ: Ի՞նչ է տեղի ունենում, երբ դուք սխալմամբ մտածում եք, որ լցված եք Սուրբ Հոգով:

Շնորհակալ եղեք ազդանշանների համար

Շնորհակալ եմ Տիրոջից, որ մենք կարողացանք ավելի շատ անդրադառնալ վերածննդի թեմային: Կարծում եմ, որ մեր վեհ ու հրաշալի Աստվածը ունի հիմնավոր պատճառներ, որպեսզի ներկայումս Սուրբ Հոգով տա մեզ վերածննդի ազդակներ: Կարո՞ղ են այդպիսիք լինել ստորև նշվածները.

* Նա ցանկանում է լրացնել մեր անբավարարությունը և դուրս բերել մեզ լաոդիկյան վիճակից:
* Նա ցանկանում է նախապատրաստել մեզ Հիսուսի երկրորդ գալստին և դրան նախորդող հատուկ իրադարձություններին:
* Նա ցանկանում է առաջացնել ողջ աշխարհում մեծ վերջնական վերածնունդ (Հայտն. 18:1-2) նրանց միջոցով, ովքեր *«Աստուծոյ պատուիրանքները պահում են, եւ Յիսուսի [Քրիստոսի] վկայութիւնն ունին»:* (Հայտն. 12:17)

Եկեք նաև Աստծուն շնորհակալություն հայտնենք, որ յուրաքանչյուր մարմնավոր քրիստոնյա կարող է անհապաղ դառնալ հոգևոր քրիստոնյա: Եվ որ յուրաքանչյուր ոք, ով ապրում է Սուրբ Հոգով, կարող է հասնի մինչև Քրիստոսի կատարեալ հասակի չափը: Այժմ սա է մեր հաջորդ քայլը: Այս գլուխի վերջում դիտարկենք ևս մեկ այլ ոգեշնչող փորձ:

Նոր շարժառիթ և ներքին ուրախություն

«Եկեղեցում մի քույր ինձ տվեց «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գրքույկը: Դրա բովանդակությունը ինձ ուղղակի ապշեցրեց: Ես վաղուց էի փնտրում նման բան և վերջապես գտա այն: Սկսելով կարգավորել իմ հոգևոր կյանքը ես հասկացա, որ անհրաժեշտ է ինչ-որ բան փոխել և ամբողջովին հանձնվեցի Հիսուսին: Այդ ժամանակից ի վեր Տերը սկսեց արթնացնել ինձ շատ վաղ առավոտյան և ժամանակ տվեց անձնական երկրպագության համար: Ամեն օր ուսումնասիրում էի մի գլուխ «40 օր» գրքից: Ես հստակ նկատեցի, որ իմ հարաբերությունները Հիսուսի հետ խորացել են և դարձել են ավելի սերտ: Սուրբ Հոգին գործում էր իմ սրտի վրա. «40 օր» գրքի առաջին մասից հետո ես սկսեցի ուսումնասիրել «40 օր» գրքի երկրորդ մասը: Այդ ժամանակվանից ի վեր ես այդ գրքերից յուրաքանչյուրը չորս անգամ եմ ուսումնասիրել: Հիմա ես պարզապես չեմ պատկերացնում իմ օրը առանց Աստծո հետ ընկերակցության: Իմ նոր շարժառիթն ու ներքին ուրախությունը չեն կարող մնալ աննկատ, և ակնհայտ են

դառնում նաեւ ուրիշների համար: Այս ընթացքում ես շատ փորձառություններ եմ ապրել Աստծո հետ: Ես անընդհատ հնարավորություններ եմ փնտրում կիսելու իմ փորձառությունները: Հիսուսի հետ սերտ փոխհարաբերություններ ունենալով հասկանում ես շատ բաների անկարևորությունը, լուծվում են անհարկի հոգսերը: Հուսով եմ և աղոթում եմ, որ դեռ շատերը կվերապրեն այն փորձը, որն ես արտոնություն ունեցա զգալու»: Հ. Ս.

ԳԼՈՒԽ 3

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է ԱՐԴՅՈՔ ԳՏՆԵԼ ՆՐԱՆՑ ԼՈՒԾՈՒՄԸ: Ի՞ՆՉՊԵՍ:

Ինչպե՞ս կարող ենք երջանիկ ուժեղ քրիստոնյաներ դառնալ:
Ինչպե՞ս կարող Սուրբ Հոգին լցնել մեր կյանքը :

Հիսուսն ասաց. «Կացէք ինձանում՝ եւ ես ձեզանում» (Հովհ. 15:4) Քրիստոսում կենալը նշանակում է անընդմեջ մնալ Նրա Հոգում և ապրել, անվերապահորեն հանձնվելով Նրա ծառայությանը» ***37****:*

Մեր հիմնական խնդրի աստվածային լուծումը, որը բաղկացած այս երկու մասից՝ միաժամանակ հանդիսանում է երջանիկ քրիստոնեական կյանքի ուղի: Ինչո՞ւ: Հիսուսը մեկնաբանեց այն հետևյալ խոսքերով. «Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ իմ ուրախութիւնը ձեզանում մնայ, եւ ձեր ուրախութիւնը լցուած լինի» (Հովհ. 15:11): Այս երկու քայլերի միջոցով (շարունակաբար ստանալով Սուրբ Հոգին և լիարժեք նվիրվածությամբ)՝ Քրիստոսը հաստատվում է մեր մեջ, և դա է կատարյալ երջանկության ճանապարհը: Կող. 1:27-ը ասում է փառքի յոյսի մասին, որն է՝ Քրիստոսը ձեզանում: Արդյո՞ք հատկանշական չէ, որ Հիսուսը այս խաղողի որսի առակը ներկառուցեց Հովհաննես 14-ում Սուրբ Հոգու խոստման և Հովհաննես 16-ում Սուրբ Հոգու ազդեցության միջև:

---

37. Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը», (1898), էջ. 676.2

Վճռորոշն այն է, որ մենք (որպես կանոն) ամեն օր հանձնենք Աստծուն ինքներս մեզ և այն ամենը, ինչ մենք ունենք, և որ մենք ամեն օր հավատքով խնդրենք և ստանանք Սուրբ Հոգու արտահոսքը:

ԻՆՉՈ՞Ի Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՄԵՆ ՕՐ ՄԵՋ ՀԱՆՁՆԵԼ ՀԻՍՈՒՍԻՆ:

Հիսուսը ասաց Ղուկաս 9:23-ում. *«Եթէ մէկը կամենում է իմ ետեւից գալ, թող իր անձն ուրանայ եւ **ամեն օր** իր խաչն առնէ եւ իմ ետեւից գայ»*:

Հիսուսն ասաց, որ աշակերտությունը ամենօրյա գործ է: Ուրանալ ինքներս մեզանից նշանակում է ողջ կյանքի ընթացքը հանձնել Յիսուսի վերահսկողության տակ: Խաչ առնելը չի նշանակում, որ մենք օրեցօր պետք է դժվարություններ ունենանք: Ահա թե ինչ է սա նշանակում. Ամեն օր ուրանալ մեր էգոն և ուրախությամբ և պատրաստակամորեն հանձնել Հիսուսին՝ ճիշտ այնպես, ինչպես Պողոսն է ասել իր մասին. «Ես ամեն օր մեռնում եմ»: Հիսուսի ժամանակներում, եթե ինչ-որ մեկը կրում եր խաչը, դա նշանակում էր, որ նա դատապարտված է մահվան և գնում է դեպի մահապատժի վայրը: Հետեւաբար, դա նաեւ կապված է դժվարությունների ընդունման հետ, որոնք առաջանում են Հիսուսին հետեւելուց:

Մենք ստացել ենք մեր ֆիզիկական կյանքը ծնվելու պահին: Մեր կյանքը, ուժերը և առողջությունը պահպանելու համար մենք սովորաբար ամեն օր պետք է ուտենք սնունդ: Մենք ստացանք մեր հոգևոր կյանքը, երբ կրկին ծնվեցինք հոգևոր: Մեր հոգևոր կյանքը ուժեղ և առողջ պահելու համար նույնպես անհրաժեշտ է **ամեն օր** հոգ տանել ներքին մարդու մասին: Եթե դա տեղի չունենա ինչպես մեր ֆիզիկական կյանքում, այնպես էլ մեր հոգևոր կյանքում, ապա մենք կդառնանք թույլ, հիվանդ, կամ նույնիսկ կմահանանք: Եվ ճիշտ այնպես, ինչպես մենք չենք կարող ուտել նախապես այնքան սնունդ, որ պահեստավորենք այն, այնպես ել չենք կարող պահեստավորենք Սուրբ Հոգին:

«Գործք Առաքելոց» գրքում սրա վերաբերյալ կա արժեքավոր խորհուրդ. «Ինչպես բնական աշխարհում է, այնպես էլ հոգևոր աշխարհում է: Բնական կյանքը պահ առ պահ պահպանվում է աստվածային զորությամբ, սակայն դա չի ապահովվում ուղղակի հրաշքով, այլ մեր հասանելիության սահմաններում օգտագործվող օրհնությունների օգտագործման միջոցով: Նույնպես էլ հոգևոր կյանքը պահպանվում է այն միջոցների կիրառմամբ, որոնք ապահովել է Նախախնամությունը»: **38**

«Դարերի փափագը» գրքից այս մեկնաբանությունը տպավորիչ էր ինձ համար. «Մենք օրեցօր պետք է հետևենք Քրիստոսին: Աստված չի ուղարկում մեզ վաղվա օրվա օգնությունը» **39**

---

38. Է. Գ. Ուայթ, «The Acts of the Apostles», (1911), էջ. 284.2
39. Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը», (1898), էջ. 313.4

Է. Գ. Ուայթը գրում է.

«Հիսուսին հետևելու համար պահանջվում է անկեղծ փոխակերպում՝ սկզբից և այս փոխակերպման կրկնություն՝ **ամեն օր**»: **40** «Որքանով էլ ամբողջական լինի մեր նվիրվածությունը դարձի ժամանակ, այն մեզ ոչ մի օգուտ չի բերի, եթե մենք **ամեն օր** չթարմացնենք այն»: **41** Նվիրեք ձեզ Աստծուն ամեն առավոտ՝ թող դա լինի ձեր առաջին գործը: Թող ձեր աղոթքը լինի. «Վերցրու ինձ, ո՛վ Տեր, ես ամբողջովին պատկանում եմ Քեզ: Ես իմ բոլոր պլանները դնում եմ Քո ոտքերի տակ: Օգտագործիր ինձ այսօր Քո ծառայության մեջ: Եղիր ինձ հետ և թող իմ բոլոր գործերը կատարվեն Քեզանով»: Դա պետք է արվի ամեն օր: Ամեն առավոտ նվիրեք ձեզ Աստծուն՝ առաջիկա օրվա համար: Հանձնեք ձեր բոլոր ծրագրերը Նրան, որ նրանք իրականացնեք կամ հրաժարվեք նրանցից այնպես, ինչպես ցույց կտա Աստծո նախախնամությունը: Այսպիսով, դուք կարող եք օրեցօր ձեր կյանքը հանձնել Աստծո ձեռքը, և այն ավելի ու ավելի է կնմանվի Քրիստոսի կյանքին»: **42**

Մորիս Վենդենը գրում է:

«Եթե դուք չեք գիտակցել ամենօրյա փոխակերպման անհրաժեշտությունը, դա կարող է դառնալ լուրջ բեկում ձեր կյանքում: «Քրիստոսի լեռան քարոզը» գրքում (էջ 101) մենք գտնում ենք հետևյալ խոստումը. «Եթե դուք փնտրեք Տիրոջը և ամեն օր դարձի գալու փորձ ունենաք:. ձեր բոլոր տրտնջոցները կդադարեն, ձեր բոլոր դժվարությունները կվերանան և ամենաբարդ խնդիրները կլուծվեն»: **43**

Մնալ Հիսուսում, ամեն օր Իր հետ մեր ուխտը թարմացնելով, նույնքան կարեւոր է, որքան այն ժամանակ, երբ մենք առաջին անգամ ճանաչեցինք Նրան:

Մորիս Վենդենը շարունակում է. «Աստծու հետ մշտական առօրյա հարաբերությունների հաստատումը հանգեցնում է Աստծուն հանձնվելուն, ամեն պահ կախվածության մեջ լինել Նրանից» **44**

Կարող ենք վստահ լինել, որ, եթե մենք ամեն առավոտ գիտակցաբար հանձնվում ենք Հիսուսին, այդպիսով մենք կատարում ենք այն, ինչ Նա է ցանկանում, որովհետև Նա ասաց. *«Ինձ մոտ եկէք…»* (Մատթ. 11:28) և *«… ինձ մոտ եկողին ես դուրս չեմ հանիլ»* (Հովհ. 6:37):

«Տերը պատրաստ է մեծ բաներ անել մեզ համար: Մենք հաղթանակի ենք հասնելու ոչ թե մեր թվով, այլ Հիսուսին հոգով լիակատար հանձնվելով: Մենք պետք է առաջ ընդանանք Իր զորությամբ՝ ապավինելով Իսրայելի հզոր Աստծուն :..» **45**

---

40. Editor Francis D. Nichol, *Adventist Bible Commentary Vol. 1* (Review and Herald, 1976), p. 1113

41. Է. Գ. Ուայթ, Review and Herald, Jan. 6, 1885

42. Է. Գ. Ուայթ, «Քայլեր դեպի Քրիստոս», (1892), էջ 70.1

43. Morris Venden, *95 Theses on Righteousness by Faith* (Pacific Press, 1987), p. 96

44. Morris Venden, 95 *Theses on Righteousness by Faith* (Pacific Press, 1987), p. 233

45. Է. Գ. Ուայթ, «Աստծո որդիներ և դուստրեր», էջ 279.

Ջոն Ուեսլին հետևյալ կերպ է նկարագրվում այն մեծ ազդեցությունը, որը Աստված կարող է ունենալ մեր միջոցով, եթե մենք լիովին հանձնվենք Նրան. «Աստված կարող է ավելին անել մեկ մարդու միջոցով, ով իրեն 100%–ով է նվիրել Աստծուն, քան մարդկանց մի ամբողջ բանակի միջոցով, որոնք միայն 99% -ով են նվիրել իրենց Աստծուն»: **46**

Էլեն Ուայթը գրել է.

«Միայն նրանք, ովքեր կդառնան Քրիստոսի համագործակցողներ, միայն նրանք, ովքեր կասեն. «Տե՛ր, այն ամենը, ինչ ես ունեմ, և ինչ որ ես եմ՝ Քոնն է»՝ կճանաչվեն Աստծո որդիներ և դուստրեր»: **47** «Բոլորը նրանք, ովքեր Աստծուն են նվիրում հոգին և մարմինը, անընդհատ կստանան ֆիզիկական և մտավոր ուժի նոր օժտվածություն … Սուրբ Հոգին գործադրում է իր առավելագույն էներգիան, որպեսզի աշխատի մտքի և սրտի վրա: Աստծո շնորհը ընդլայնում և բազմապատկում է նրանց ունակությունները, և աստվածային բնույթի կատարելությունը օգնում է նրանց հոգիների փրկության գործում. . . Եվ չնայած իրենց մարդկային թուլությանը, նրանք ունակություն են ստանում կատարել Ամենազորի գործերը": **48**

Սա էի ուզում շարադրել ամենօրյա «սրբագործման», "նվիրագործման», "վստահության" և "դարձի» վերաբերյալ:

Ինչո՞ւ պետք է ամեն օր խնդրենք նոր մկրտություն Սուրբ Հոգով:

Խնդրել լցվել Սուրբ Հոգով՝ նշանակում է խնդրել, որ Հիսուսն իմ կողքին լինի: Քանի որ Նա ապրում է իմ մեջ Սուրբ Հոգու միջոցով: Բայց ինչու՞ ամեն օր:

Է. Ուայթը "Գործք Առաքելոց" գրքում գրում է. "Նվիրված աշխատողի հրաշալի մխիթարությունը կայանում է նրանում, որ նույնիսկ Քրիստոսն Իր երկրային կյանքի ընթացքում ամեն օր խնդրում էր Հորն այն շնորհը, որի կարիքն ուներ:.. Նրա սեփական օրինակը հավաստիացնում է, որ Աստծուց աղերսել անկեղծ, համառ հավատք՝ հավատք, որ առաջնորդում է լիարժեք կախված լինել Աստծուց և անձնուրաց ծառայել Իր գործին – օգնում է մարդկանց ստանալ Սուրբ Հոգու օգնությունը մեղքի դեմ պայքարում»: **49**

Եթե դա եղել է ամենօրյա անհրաժեշտություն անգամ Հիսուսի համար, ապա որքա՞ն ավելի կարեւոր է դա մեզ համար.

---

46. Dr. S. Joseph Kidder, Anleitung zum geistlichen Leben (Andrews University), PPP slide 14
47. Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը», (1898), էջ 523.1
48. Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը», (1898), էջ 827.3
49. Է. Գ. Ուայթ, «The Acts of the Apostles», (1911), էջ 56.1

Բ. Կոր. 4:16-ում կա մի կարևոր հայտարարություն. *«բայց մեր ներսի մարդն **օրէցօր նորոգվում է»:***

Մեր ներսի մարդը ամենօրյա նորոգման կարիք ունի: Իսկ ինչպե՞ս է կատարվում այս ամենօրյա նորոգումը: Ըստ Եփ. 3:16-17, 19 դա տեղի է ունենում Սուրբ Հոգու միջոցով. *«Որ իր փառքի հարստութեան պէս տայ ձեզ, **որ զօրութեամբ հաստատուիք իր Հոգու ձեռովը ներսի մարդումը**: Որ Քրիստոսը հաւատքով բնակուի ձեր սրտերումը. Եւ դուք սիրով արմատ գցած եւ հաստատուած լինիք. . . որ Աստուծոյ ամեն լիութիւնովը լցուիք»*:

Ի՞նչ է դրանից հետեւում:
* Որպես կանոն անհրաժեշտ է ամեն օր աղոթել Սուրբ Հոգով վերանորոգման համար:
* Արդյունքում Քրիստոսը կապրի մեր մեջ:
* Նա ուժ է տալիս մեր ներսի մարդուն՝ համաձայն Իր փառքի հարստութեան: Աստծո զորությունը գերբնական ուժ է, բայց մենք չենք կարող զգալ այն: Արարիչը կարող է գործել նվազագույն ուժերով (օրինակ՝ էլեկտրական հոսանքները մեր մարմիններում: Մենք կարող ենք չզգալ դրանք, բայց եթե դրանք բացակայում են, մենք մեռած ենք):
* Այսպիսով, Աստծո սերը դրված է մեր սրտերում:
* Սա է առատ կյանքի և «Աստծու լիության» ուղին (տես Հովհ. 10:10, Կող. 2:10):

Եվս մեկ կարևոր համար է հանդիպում Եփ. 5:18. *«... լցվեցեք Հոգով»*: Ուշադրություն դարձրեք, որ սա ավելին է, քան պարզապես խորհուրդ: Դա աստվածային պատվիրան է: Մեր Աստված ակնկալում է, որ մենք ցանկանանք ապրել Սուրբ Հոգով: Յոհանես Մագերը՝ հաշվի առնելով հունարենի նրբությունները, այս տեքստը թարգմանում է հետեւյալ կերպ. «Թույլ տվեք ձեզ հետևողականորեն և շարունակաբար լցված լինել Հոգով»: **50**

Մեր շաբաթվա դպրոցի ուսումնասիրման ձեռնարկում ասվում է. "Սուրբ Հոգով մկրտվելը նշանակում է ամբողջովին Սուրբ Հոգու ազդեցության տակ լինել՝ Նրա կողմից լիովին «լցված» լինել: Սա ոչ թե միանգամյա փորձառություն է, այլ մի բան, որը պետք է կրկնվի անընդհատ, ինչպես Պողոսը ներկայացնում է այդ Եփ. 5:18 հունական "լցված" բայի իմաստով»: **51**

Պողոս Առաքյալն այս մասին գրել է Եփեսացիս 5-րդ գլխում, թեև 1:13-ում նա նշել է հետևյալը. «. . . որին էլ երբոր հաւատացիք՝ խոստմունքի Սուրբ Հոգովը կնքուեցաք»: Ակնհայտ է, որ եփեսացիները արդեն ստացել էին Սուրբ Հոգին: Այնուամենայնիվ, նրանց համար անհրաժեշտ էր. «Հոգով հաստատապես զորանալ», «լցված լինել Հոգով», «հետևողականորեն և շարունակաբար լցվել Հոգով»: Գլուխ 4:30-ում նա նախազգուշացնում է, որ մենք չվիրավորենք կամ չտրտմեցնենք Սուրբ Հոգուն:

---

50 Editor Werner E. Lange, *Unser grobtes Bedurfnis* (Luneburg, 2011), p. 42
51 Շաբաթօրյա դպրոցի ուսումնական ձեռնարկ, հուլիս 17, 2014

Էլեն Ուայթն ասում է.

«Յուրաքանչյուր աշխատող պետք է աղոթքներ բարձրացնի Աստծուն՝ Հոգով **ամենօրյա** մկրտության համար»: **52**

«Որպեսզի մենք կարողանանք ունենալ Քրիստոսի արդարությունը, մենք պետք է ամեն օր վերափոխվենք Հոգու ազդեցության ներքո, դառնանք աստվածային բնույթի հաղորդակից: Այդ Սուրբ Հոգին է՝ որ կատարելագործում է հակումները, սրբագործում է սիրտը, ամբողջությամբ ազնվացնում է մարդուն»: **53**

Մեկ այլ տեղում Տերը ասաց նրա միջոցով. «Նրանք, ում վրա Սուրբ Գիրքը տպավորություն է թողել, ովքեր ընկալում են այն որպես Աստծո ձայն և ցանկանում են հետևել Նրա ուսմունքներին, պետք է **ամեն օր** սովորեն, **ամեն օր** ստանան **հոգևոր եռանդ և զորություն**, որոնք տրվում են յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալին՝ Սուրբ Հոգու պարգևի միջոցով»: **54**

Բացի այդ, նա շարունակում է. «Մենք պետք է օրեցօր հետևենք Քրիստոսին: Աստված չի ուղարկում մեզ վաղվա օգնությունը»: **55**

Եվս մեկ այլ մեջբերում. «Մեր հոգևոր աճի համար անհրաժեշտ է, որ մենք ամեն պահ կապ ունենանք Աստվծո հետ: Գուցե մենք որոշ չափով ստացել ենք Աստծո Հոգին, բայց աղոթքով և հավատքով մենք պետք է մշտապես ձգտենք Հոգին ավելի առատ ստանալուն»: **56**

Ես գտա ևս մեկ զարմանահրաշ մեջբերում. **«Ձեզ հարկավոր է ամենօրյա սիրո մկրտություն,** որը առաքյալների օրոք նրանց բոլորին միահամուռ դարձրեց»: **57**

Հռոմ. 5:5-ը ցույց է տալիս, որ Աստծո սերը թափվում է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով: Նույն միտքը հանդիպում է Եփ. 3:17: Ամենօրյա մկրտությունը Սուրբ Հոգով (Սուրբ Հոգով լցվվելը) միևնույն ժամանակ նշանակում է ամենօրյա սիրով մկրտությունը (Աստծո «ագապե» սիրով լցված լինելը): Բացի այդ, Գաղ. 5:16 ասվում է, որ դրա արդյունքում կործանվում է մեղքի ուժը:

ԱՆՁՆԱԿԱՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Շատ կարևոր անձնական երկրպագությունը, որ ես ամեն օր հանձնվեմ Հիսուսին և խնդրեմ, որ կյանքս լցված լինի Սուրբ Հոգով:

Հոգևոր կյանքի հիմք են հանդիսանում՝ ամենօրյա երկրպագությունը և շաբաթ օրը պահելը:

---

52 E.G. White, *The Acts of the Apostles* (1911), p. 50.2
53 E.G. White, *Selected Messages 1*, (1958), p. 374.1
54 E.G. White, *The Signs of the Times March 8,* 1910, par. 1
55 Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը» (1898), էջ. 313.4
56 E.G. White, *The Review and Herald*, March 2, 1897, par. 5
57 E.G. White, *Testimonies to the Church* (1904), vol. 8, p. 191

«Որպեսզի մենք կարողանանք ունենալ Քրիստոսի արդարությունը, մենք պետք է ամեն օր վերափոխվենք Հոգու ազդեցությամբ, հաղորդակից լինենք Աստվածային բնույթի»:

Մենք արդեն կարդացել ենք աստվածաշնչյան համարներ և տարբեր մեջբերումներ, որոնք ցույց են տալիս, որ ներքին մարդը օրեցօր նորոգվում է: **Սա վառ լույս է սփռում մեր ամենօրյա անձնական երկրպագության մեծ կարևորության վրա:**

Խորանի պաշտամունքային ծառայության հիմքում ընկած էր առավոտյան և երեկոյան ողջակեզները: Շաբաթ օրը տեղի էր ունենում լրացուցիչ շաբաթ օրվա ողջակեզ (Թվ 28:4, 10): Ի՞նչ նշանակություն ունեին ողջակիզները:

«Այրված ողջակեզը խորհրդանշում էր մեղավորի լիակատար հանձնումը Տիրոջը: Մարդը ոչինչ չէր թողնում իրեն, քանի որ ամենը պատկանում է Աստծուն»: **58**

«Առավոտյան և երեկոյան զոհաբերության համար նախատեսված ժամերը համարվում էին սրբազան, և սահմանված էր, որ ողջ հրեա ժողովրդը պահի այն... Այս ավանդույթը պետք է քրիստոնյաների համար օրինակ դառնա՝ առավոտյան և երեկոյան աղոթքների համար: Մինչ Աստված դատապարտում է ծիսակատարությունները, որոնք զուրկ են երկրպագության ոգուց, Նա մեծ ուրախությամբ է նայում նրանց, ովքեր սիրում են Նրան, առավոտյան և երեկո խոնարհվում են որպեսզի ներողություն խնդրեն կատարված մեղքերի համար և աղաչեն օրհնություններ ստանալու համար»: **59**

Նկատո՞ւմ եք, թե ինչու մեր հոգևոր կյանքի հիմք հանդիսանում են ամենօրյա երկրպագությունը և շաբաթ օրը պահելը: Բացի այդ, արդյոք սա հնարավորություն չէ տալիս հասկանալ, որ դա կապ ունի ամենօրյա նվիրվածությանը Հիսուս Քրիստոսին, Ում հրավիրվում ենք ապրելու մեր մեջ Սուրբ Հոգով:

Արդյո՞ք դուք իրականացրել /կատարել/ եք Ձեր կյանքում ամենակարևոր հոգևոր սկզբունքը՝ բոլոր հարցերում առաջնահերթությունը տալ Աստծուն: Հիսուսը լեռան քարոզում ասաց. *«Սակայն առաջ Աստուծոյ արքայութիւնը եւ նորա արդարութիւնը խնդրեցէք. Եւ այդ ամենքը կ՚տրուի ձեզ»*: Մատթ. 6:33

---

58 Fritz Rienecker, *Lexikon zur Bibel* (Wuppertal, 1964), p. 1017
59 E.G. White, *Patriarchs and Prophets* (1890) p. 353.3

52

Աստծո արքայությունն այն է, որ հիմա քո սրտում ունես Քրիստոսին: Ահա թե ինչու մենք պետք է ամեն օր նվիրվենք Աստծուն և մեր երկրպագության ժամանակ ամեն օր խնդրենք Սուրբ Հոգին: Վճռորոշ պահը կգա այն ժամանակ, երբ մենք կանգնենք Աստծո առջև, արդյոք մենք ունեցել ենք փրկող անձնական հարաբերություններ Քրիստոսի հետ, արդյոք կարողացել ենք մնալ դրա մեջ. (տես Հովհ. 15.1-17): Մի՞թե դուք չպետք է ձգտեք ձեր հավատքի ավելի մեծ կատարելությանը:

Նա, ով քիչ, կամ ընդհանրապես շատ քիչ ժամանակ է անցկացնում Աստծո հետ հաղորդակցվելու կամ երկրպագելու համար, հավանաբար հոգևոր կամրապնդի շաբաթը միայն մեկ կամ երկու անգամ: Դա նման է մի մարդու, ով շաբաթը մեկ անգամ է ուտում: Որպես համեմատություն. չե՞ր լինի անհեթեթություն ենթադրել, որ մարդը սով է զգում շաբաթը միայն մեկ անգամ: Արդյո՞ք սա չի նշանակում, որ առանց երկրպագության քրիստոնյան մարմնավոր է:

Սա նշանակում է նաև, որ եթե նա մնա այս վիճակում, ապա չի փրկվի: Մարմնավոր քրիստոնյայի համար երկրպագությունը կարող է լինել պարզապես պարտավորություն: Հոգևորի համար երկրպագությունը ավելի ու ավելի է դառնում անհրաժեշտություն:

Տարիներ առաջ ես կարդում էի Ջիմ Վաուսի *«Ես հանցագործ էի»* գրքույկը: Նա հանցագործ էր, որը դարձի եկավ: Նա ամբողջ սրտով ապաշխարեց իր մեղքերը համար՝ խաբեության, գողության և այլնի: Նա զգաց հսկայական աստվածային միջամտություն: Դա ինձ վրա տպավորություն թողեց: Ես ասացի ինքս ինձ. «Ես ճիշտ եմ վարվում գրեթե միշտ, բայց, այնուամենայնիվ, նման փորձ չեմ վերապրում»: Այնուհետև ես աղոթեցի Տիրոջը. «Հայր Երկնային, ես նույնպես ցանկանում եմ խոստովանել իմ բոլոր մեղքերը, ինչպես նաև այն մեղքերը, որոնք Դու դեռ ցույց կտաս ինձ ապագայում: Բացի այդ, ես կարթնանամ մի ժամ շուտ՝ աղոթելու և Աստվածաշունչ կարդալու համար: Ուզում եմ տեսնել, արդյոք Դու նույնպես կմիջամտես իմ կյանքում»:

Փա՛ռք տվեք Աստծոն: Նա միջամտեց իմ կյանքում: Այդ ժամանակից ի վեր, իմ առավոտյան երկրպագությունը՝ հատկապես կապված շաբաթ օրվա հետ, հիմք դարձան Աստծո հետ հոգևոր կյանքի համար:

Մեր կյանքը որակապես կփոխվի ամենօրյա նվիրվածության և Սուրբ Հոգու հետ ամենօրյա հաղորդակցության միջոցով: Դա տեղի է ունենում մեր անձնական երկրպագության ժամանակ:

ՀՈԳՈՎ ԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՎ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

Եկեք մտածենք երկրպագության նպատակի մասին: Մարդկությանը ուղղված Աստծո վերջին ուղերձում հակադրվում է երկրպագությունը արարչին՝ գազանին երկրպագությանը: (Հայտն. 14:6-12) Երկրպագության արտաքին նշանը շաբաթն է (երկրպագել արարչին): Իսկ երկրպագության ներքին բովանդակությունը /հարաբերություններ/ նկարագրված է Հովհ. 4:23, 24 «Բայց ժամանակ կ'գայ, եւ հիմա է, որ **ճշմարիտ երկրպագողները հոգով եւ ճշմարտութիւնով կ'երկրպագեն Հօրը**, որովհետեւ Հայրն էլ այսպէս է ուզում իր երկրպագողներին: Աստուած Հոգի է, եւ նորան երկրպագողները պէտք է հոգով եւ ճշմարտութիւնով երկրպագեն»:

Երկրպագել հոգով, անշուշտ, նշանակում է գիտակցաբար երկրպագել, նաև լցված լինել Սուրբ Հոգով: **Ճշմարտութիւնով** երկրպագելը նշանակում է լիարժեք հանձնվել Հիսուսին, Ով անձամբ ճշմարտության մարմնավորումն է: Հիսուսն ասել է. *«Ես եմ ճշմարտությունը»* (Հովհ. 14:6): Դա նշանակում է, որ Հիսուսի ներկայության միջոցով մենք սկսում ենք ապրել Աստծո Խոսքի և ցուցումների համաձայն, քանի որ Նա ասել է. *«Քո խոսքը ճշմարտություն է»* (Հովհ. 17:17) և Սաղմոս 119:142 ասվում է. *«Քո օրենքը ճշմարիտ է»*: Եթե մենք հիմա չունենք ճշմարիտ երկրպագության հոգի, ապա մի՞թե փորձության պահին մենք չենք ձախողվիլ: Սա կլինի մեծ խնդիր բոլոր մարմնավոր քրիստոնյաների համար:

Ես կարծում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը ցանկանում է ունենալ Աստծո օգնությամբ առաջընթաց և գիտելիքների աճ: Հնարավոր է, որ հաջորդիբ կեղծ համոզմունքը ոմանց համար խոչընդոտ է դարձել առաջ շարժվելու:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Որոշ մարդիկ կարծում են, որ նրանք լցված են Սուրբ Հոգով, քանի որ նրանք մկրտված են, ուստի, ամեն ինչ լավ է, և հարկ չկա ավելին որինչ անել: Դ. Լ. Մուդին այսպես է դա մեկնաբանում. «Շատերը կարծում են, որ եթե նրանք մեկ անգամ լցվել են, ապա ընդմիշտ լցված կմնան: Օ՜. իմ ընկեր, մենք ծակ անոթներ ենք. լցված մնալու համար մեզ անհրաժեշտ է անընդհատ աղբյուրի հոսքի տակ լինել»: **60**

Ջոզեֆ Հ. Վագգոները ասաց.

«Բոլոր դեպքերում, երբ մկրտությունը դիտվում է որպես Սուրբ Հոգու պարգևի ապացույց, ապաշխարող մեղսավորը կալանվում է կեղծ անվտանգությամբ: Նա բացառապես ապավինում է իր մկրտությանը՝ որպես Աստծո շնորհքի երաշխիքի: Այսպիսով, նրա սրտում «վկայության» կնիք հանդիսանում է միայն մկրտությունը, **և ոչ թե Սուրբ Հոգին»: 61**

---

60 D. L. Moody, *They Found the Secret,* p. 85, 86; quoted in *"10 Days – Prayers and Devotions …"* by Dennis Smith, p. 23

61 Joseph H. Waggoner, *The Spirit of God* (Battle Creek, Michigan 1 877), p. 35f, quoted in Garrie F. Williams, *Erfьllt vom Heiligen Geist* (Lьneburg, 2007), S. 58

Մկրտությունը միանշանակ նշանակալի որոշում է. սա համապատասխանում է Աստծո կամքին: Այն ունի և կպահպանի իր անգնահատելի նշանակությունը: Սակայն մենք չպետք է դիտարկենք անցյալի իրադարձությունները որպես Սուրբ Հոգով լցված լինելու ապացույց: Փոխարենը մենք պետք է **հիմա** իմանանք և **հիմա** զգանք, որ լցված ենք Սուրբ Հոգով:

Որոշ մարդիկ ստացել են Սուրբ Հոգին **նախքան** մկրտվելը, օրինակ՝ Կոռնելիուսը և նրա ընտանիքը, կամ Սողոսը: Մյուսները Սուրբ Հոգին ստացան մկրտվելուց **հետո**, օրինակ՝ սամարացիները, կամ Եփեսոսի 12 մարդը: Կարևոր չէ՛ ստացել է մարդը Սուրբ Հոգին **մկրտվելուց առաջ, մկրտվելու ընթացքում, թե մկրտվելուց հետո**: Կարևորն այն է, որ մենք ինչ-որ պահի ստացանք Սուրբ Հոգին և ունենք Նրան սրտերում **հիմա**: Կարեւոր է ոչ թե այն, ինչ տեղի է ունեցել անցյալում, այլ այն, թե ինչպես են ընթանում իրադարձությունները հիմա՝ այսօր:

Ուզում եմ եւս մեկ անգամ հիշեցնել ձեզ. մենք ստացել ենք մեր ֆիզիկական կյանքը ծնվելու պահին, և այն ապահովում ենք ամենօրյա սննդով, խմիչքով, ֆիզիկական վարժություններով, քնով և այլն: Հակառակ դեպքում մենք երկար ժամանակ չենք ապրի: Նույն օրենքները՝ ինչ ֆիզիկական կյանքում, գործում են նաև մեր հոգևոր կյանքում: Մենք ստացանք նոր կյանք Սուրբ Հոգով ճիշտ այն պահին, երբ լիովին հանձնվեցինք Քրիստոսին: Մեր հոգևոր կյանքը պահպանվում է Սուրբ Հոգով, աղոթքով, Աստծո խոսքով և այլն: Է. Գ. Ուայթն ասել է. «բնական կյանքը պահ առ պահ պահպանվում է աստվածային զորությամբ, և ոչ թե ուղղակի հրաշագործ ձևով, այլ մեզ բոլորիս հասանելի օրհնությունների միջոցով: Հոգևոր կյանքը նույնպես ապահովվում է Նախախնամությամբ նախատեսված միջոցներով» **62**

Ոչ ֆիզիկական, ոչ էլ հոգևոր կյանքը չի կարա գոյատեւել մեր մեջ ինքնաբերաբար: Անհրաժեշտ է օգտագործել այն միջոցները, որոնք նախատեսել է Աստված:

Սա նշանակում է, որ երբ մենք ծնվում ենք կրկին, Սուրբ Հոգին տրվում է մեզ՝ մշտապես բնակվելու մեր հետ: Սակայն, Նրա բնակվելը կախված է Տիրոջ կողմից մեզ տրամադրված միջոցների ամենօրյա օգտագործումից: Ի՞նչ արդյունք կարող ենք ակնկալել, եթե չօգտագործենք այդ «միջոցները»:

Այս «միջոցների» ամենակարևորը Սուրբ Հոգին է: Բացի այդ, շատ կարևոր է աղոթել, շփվել Աստծո հետ Իր խոսքի միջոցով, երկրպագության ծառայություններին մասնակցել և այլն:

Կարծում եմ, կհամաձայնեք, որ, որպես կանոն, նաև պետք է ամեն օր հոգ տանել ներքին մարդու համար: Եթե դա չանենք, ապա կքաղենք տխուր հետևանքներ: Մենք չենք կարող ոչ նախապես կշտանալ, ոչ էլ նախորոք պահեստավորվել Սուրբ Հոգով: «Տերը չի ուղարկում մեզ վաղվա օգնությունը»: **63** Կարծում եմ, որ բավական պարզ է, որ Հիսուսին ամենօրյա հանձնելը անհրաժեշտ է, և որ մենք պետք է ամեն օր հրավիրենք Սուրբ Հոգուն մեր կյանք:

---

62 E.G. White, The Acts of the Apostles (1911), p. 284.2
63 Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը», (1898), էջ.313.4

Այս երկու հարցերն էլ միևնույն մետաղադրամի տարբեր կողմերն են և ծառայում են մեկ նպատակի՝ Քրիստոսի հետ սերտ կապ հաստատելուն: Ես ինձ տալիս եմ նրան հանձնվելու միջոցով, և Սուրբ Հոգին խնդրելով, հրավիրում եմ նրան իմ սիրտը: Ի թիվս այլ աստվածաշնչյան հատվածների՝ 1 Հովհ. 3.24 (տես նաև Հովհ. 14.17, 23) ցույց է տալիս մեզ, որ Հիսուսն ապրում է մեզանում Սուրբ Հոգու միջոցով. *«Սորանից գիտենք թէ բնակվում է մեզանում՝ այն Հոգուցը որ տուաւ մեզ»*:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Երբ Սուրբ Հոգին իմ մեջ է, ապա Նա իմ մեջ կատարում է այն, ինչին է հասել Քրիստոսը: Հռոմ. 8:2 ասվում է. *«Որովհետեւ կեանքի հոգու օրէնքը Յիսուս Քրիստոսումն՝ ազատեց ինձ մեղքի եւ մահի օրէնքիցը»*: "Հոգու օրենքը" բառերը կարող ենք բացատրել որպես միջոց, որով Սուրբ Հոգին գործում է Աստծուն ամբողջովին հանձնված սրտում: Միայն Սուրբ Հոգին է կարող իմ մեջ կյանքի կոչել այն, ինչին հասավ Քրիստոսը: Է. Գ. Ուայթը դա լավ է բացատրում. "**Հոգին պետք է տրվեր որպես վերականգնող գործոն, և առանց դրա Քրիստոսի զոհաբերությունը ապարդյուն կլիներ:** Հոգին է, Ով արդյունավետ է դարձնում այն ամենը, ինչ արել է աշխարհի Քավիչը: Հենց Հոգով է սիրտը դառնում մաքուր: Հոգու միջոցով հավատացյալը դառնում է աստվածային բնույթի հաղորդակից: Աստծո զորությունը սպասում է, թե երբ նրան կցանկանան և կընդունեն": **64**

Թոմաս Դևիսը այս գործընթացը նկարագրում է հետևյալ կերպ. «Դա նշանակում է, որ նույնիսկ Քրիստոսի գործունեության հաջողությունը՝ հանուն մարդկանց, կախված է Սուրբ Հոգուց: Առանց Նրա, այն ամենը, ինչ Հիսուսն արեց այս երկրի վրա՝ Գեթսեմանիում, խաչի վրա, հարության ժամանակ և երկնքում նրա քահանայական ծառայությունը, ապարդյուն կլիներ: Քրիստոսի գործի արդյունքը չէր լինի շատ ավելի օգտակար, քան որոշ համաշխարհային մեծ կրոնական կամ բարոյական առաջնորդների գործերի արդյունքը: Սակայն, թեև Քրիստոսը շատ ավելի մեծ է, քան նրանք, Նա չեր կարող փրկել մարդկությանը միայն իր օրինակով և ուսմունքով: Մարդկանց փոխելու համար անհրաժեշտ էր աշխատել նրանցում: Այս աշխատանքը կատարվում է Սուրբ Հոգով, Ով ուղարկվեց անել մարդկանց սրտերում այն, ինչը Հիսուսը դարձրել եր հնարավոր»: **65**.

Մի՞թե միայն այս պատճառը բավարար չէ, որ ձգտենք լցվենք Սուրբ Հոգով:

---

64 Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը», (1898) p. 671.2 and 672.1

65 Thomas A. Davis, Als Christ siegreich leben, (HW-Verlag), Seite 43 / How to be a victorious Christian, R&H.

«Երբ Աստծո Հոգին տիրում է սրտին, Նա վերափոխում է կյանքը: Մեղավոր մտքերը և չար գործերը հեռացվում են, սերը, խոնարհությունը և խաղաղությունը գրավում են զայրույթի, նախանձի և կռվի տեղը: Տխրության տեղը գրավում է ուրախությունը, իսկ դեմքը արտացոլում է երկնային լույս»: **66**

Սուրբ Հոգով կյանքը ունի բազմաթիվ այլ արժեքավոր առավելություններ, մինչդեռ Նրա բացակայությունը հանգեցնում է մեծ կորուստների և զրկանքների: Սուրբ Հոգու հետ կյանքի և առանց Նրա կյանքի միջև տարբերությունը մանրամասն կքննարկենք 4-րդ գլխում:

ԵՍ ԼՑՎԱ՞Ծ ԵՄ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ.

Խնդրում եմ, տվեք ինքներդ ձեզ հետևյալ հարցերը՝ Սուրբ Հոգով լցված լինելու մասին. **67**

* Արկա՞ է արդյոք Սուրբ Հոգու նկատելի դրսևորումները իմ կյանքում: Օրինակ, արդյո՞ք Նա դարձրել է ձեզ համար Հիսուսին իրական և պաշտելի: (Տես Հովհ. 15:16):
* Ես արդյո՞ք լսում եմ և հասկանում եմ Սուրբ Հոգու ներքին ձայնը: Կարո՞ղ է Նա առաջնորդել ինձ իմ կյանքի մեծ և փոքր որոշումներում: (Հռոմ. 8:14)
* Իմ մեջ արդյո՞ք նոր սեր է առաջացել իմ մերձավորի հանդեպ: Արդյո՞ք Սուրբ Հոգին առաջացրել է իմ մեջ քնքուշ կարեկցանք և անկեղծ խորը մտահոգության հոգի այն մարդկանց հանդեպ, որոնց ես սովորաբար չէի ընտրի որպես ընկեր: (Գաղ. 5:22, Հակոբոս 2:8,9)
* Արդյո՞ք ես կրկին ու կրկին զգում եմ, թե ինչպես է Սուրբ Հոգին օգնում ինձ իմ մերձավորների հետ հարաբերություններում: Արդյո՞ք Նա ինձ ճիշտ խոսքեր է տալիս՝ դիպչելու այն մարդու սրտին, ով անհանգստություն և վիշտ է ապրում:
* Արդյո՞ք Սուրբ Հոգին տալիս է ինձ զորություն վկայելու Հիսուսի մասին և ուրիշներին առաջնորդել դեպի Նրան:
* Արդյոք ես զգում եմ, թե ինչպես է նա առաջնորդում ինձ իմ աղոթքի կյանքում և օգնում է ինձ արտահայտել Աստծուն իմ սրտի ամենախոր զգացումները:

Երբ մտածում ենք այս հարցերի շուրջ, մենք հասկանում ենք, թե ինչ մեծ կարիք ունենք Սուրբ Հոգով աճելու, որպեսզի ավելի լավ ճանաչենք և ավելի շատ սիրենք Նրան:

Մի եղբայր գրել էր. «Ես հաշտվել եմ հորս հետ: *«Քայլեր դեպի անձնական վերածնունդ»* և *«40 օր»* գրքերը երկու անգամ ուսումնասիրելուց հետո ես ունեցա Սուրբ Հոգով լցվելու հիանալի փորձառություն: Ինձ համար հատկապես հուզիչ էր գիտակցել, թե ինչպես է Սուրբ Հոգին գործում և ցանկանում գործել իմ կյանքի յուրաքանչյուր ոլորտում:

---

66 Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը», (1898), էջ. 173.1
67 Catherine Marshall, Der Helfer (Erzhausen, 2002), p. 24

ՀԱՇՏԵՑՈՒՄ ՀՈՐ ԵՎ ՈՐԴՈՒ ՄԻՋԵՎ

Իմ հարաբերությունները հորս հետ միշտ որոշ չափ բարդ են եղել: Մանկության և պատանեկության տարիներին իմ ցանկություններն ու աղոթքները միշտ ուղղված էին նրան, որ ես ավելի լավ հարաբերություններ ունենայի հայրիկիս հետ: Բայց այն աստիճանաբար վատթարանում էր: Անցավ ևս վեց-յոթ տարի: Իմ սրտի մեծ դատարկությունը լցրեց Աստված: Երբ ես և կինս սկսեցինք ուսումնասիրել և աղոթել Սուրբ Հոգու համար, մենք Աստծո հետ շատ վառ և տպավորիչ փորձառություններ ունեցանք: Մենք աղոթում էինք մեր ընտանիքի և հատկապես իմ հոր համար: Այս ընթացքում ես նոր ուժ ստացա սիրելու հորս: Ես կարողացա ներել նրան այն ամենը, ինչ դեռ մանկությունից սխալ էր մեր հարաբերություններում: Այժմ հայրս և ես ընկերներ ենք: Նա նույնպես ավելի հոգևոր դառնալ և սկսեց պատմել ուրիշներին Աստծո մասին: Այժմ՝ երկու տարի անց, նրա հետ մեր հարաբերությունները դեռևս շատ լավ են: Ես շնորհակալ եմ Աստծուց այս փորձառության համար: Նախկինում ես հաճախ զգում էի ինձ անզոր և միայնակ: Բայց քանի որ սկսեցի ամեն օր աղոթել Սուրբ Հոգու համար, ես գտա մի բոլորովին նոր զարմանալի կյանք և հարաբերություններ Աստծո հետ»: (Անունը հայտնի է խմբագրին)

Աղոթք. Տեր Հիսուս, ես շնորհակալ եմ Քեզ, որ Դու ցանկանում ես բնակվել իմ մեջ Սուրբ Հոգով: Շնորհակալ եմ, որ ամենօրյա նվիրվածության միջոցով մեր հավատն ու սիրո հարաբերությունները աճում են: Տեր, օգնիր ինձ ավելի լավ ճանաչել Սուրբ Հոգուն և նրա աշխատանքը: Ես շատ եմ ուզում իմանալ, թե ինչ է Նա ուզում անել ինձ համար, իմ ընտանիքի ու իմ եկեղեցու համար և թե ինչպես մենք կարող ենք ունենալ վստահություն, որ մենք կստանանք Սուրբ Հոգին, եթե ամեն օր խնդրենք այն: Շնորհակալ եմ դրա համար: Ամեն:

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՆՔ ԵՖԵՍԱՑԻՍ 5:18՝ «ԼՑՎԵՑԵՔ ՀՈԳՈՎ»:

Կարող ենք արդեն տեսնել, որ Եփեսացիս 5:18 համարի այս կոչը հնչում է որպես պահանջ: Ավելին, մենք տեսնում ենք, որ այս կոչը հասցեագրված է յուրաքանչյուր մարդու: Այսպիսով, մենք հասկանում ենք, որ մեր պարտականությունն է փնտրել Սուրբ Հոգու լիությունը: Բայց հունարեն բնօրինակը դարձնում է այս տեքստը էլ ավելի պարզ:

Յոհաննես Մագերը այսպես է մեկնաբանում այս հատվածը. «Նոր Կտակարանի նամակներում կա միայն մեկ հատված, որն ուղղակիորեն խոսում է Սուրբ Հոգով լցվելու մասին» (Եփես. 5:18): «Գործք Առաքելոց» գրքում մենք գտնում ենք, որ Սուրբ Հոգով լցված լինելը պարգև է, որն տրվում է որոշակի իրավիճակներում հզոր կարողությունների դրսևորման համար: Պողոսը, այնուամենայնիվ, պնդում է, որ Սուրբ Հոգով լցված լինելը պատվիրան է, որը կախված չէ կյանքի իրավիճակներից և վերաբերում է Հիսուսի բոլոր հետևորդներին: Այս կարճ, բայց կարեւորագույն պատվիրանը բաղկացած է չորս կարևոր ասպեկտներից:

1. "Լցվել" (plerein) բայը օգտագործվում է պատվիրական պահանջի ձևով: Պողոսն այստեղ չի տալիս որեւէ առաջարկություններ, կամ ընկերական խորհուրդ: Նա չի անում առաջարկություն, որը մարդը կարող է կա՛մ ընդունել, կա՛մ մերժել: Նա պատվիրում է՝ որպես լիազորված հեղինակավոր առաքյալ: Պատվիրանը միշտ ուղղված է մարդու կամքին: Քրիստոնյաի լցվածությունը Սուրբ Հոգով մեծ չափով կախված է հենց իրանից: **Քրիստոնյաները պետք է հնազանդվեն պատվիրանին՝ ջանալ լցվել Սուրբ Հոգով:** Սա մեր՝ մարդկանց պատասխանատվությունն է, լցվել Սուրբ Հոգով:
2. Այս բայը օգտագործվում է հոգնակի ձևով: Պատվիրանը ուղղված չէ եկեղեցում հատուկ պարտականություններ ունեցող մեկ անձի: Սուրբ Հոգով լցված լինելը՝ մի քանի ընտրված մարդկանցից բաղկացած սահմանափակ խմբի արտոնությունը չէ: **Կոչը հասցեագրված է բոլորին, ովքեր պատկանում են եկեղեցուն՝ միշտ և ամենուր: Առանց բացառության:** Պողոսը համարում է նորմալ, որ բոլոր քրիստոնյաները պետք է լցված լինեն Սուրբ Հոգով:
3. Այս բայը պասիվ ձևով է տրված: Չի ասվում. «Լցրեք ինքներդ ձեզ Հոգով», այլ՝ «Լցված եղեք Հոգով »: Ոչ ոք չի կարող ինքն իրեն լցնել Սուրբ Հոգով: Սա բացառապես Սուրբ Հոգու աշխատանքն է: Նա դրա ինքնիշխանն է: **Բայց մարդը պետք է ստեղծի պայմաններ, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա լցնել նրան: Առանց նրա կամավոր ցանկության, Սուրբ Հոգին չի գործի նրա մեջ:**

4. Այս՝ հունարենում շարունակական ձեւով օգտագործվող պատվիրական բայը նկարագրում է մի իրադարձություն, որն անընդհատ կրկնվում է, ի տարբերություն պատվիրական մեկ այլ ձեւի բայի, որը նկարագրում է միանգամյա գործողություն: Ըստ այդմ, Սուրբ Հոգով լցված լինելը մեկանգամյա փորձ չէ, այլ՝ կրկնվող և զարգացող գործընթաց: **Քրիստոնյան նման չէ մի անոթի, որը լցվել է մեկընդմիշտ, այլ պետք է անընդհատ «վերալիցքավորվի»:** Այս նախադասությունը կարող է ձևակերպվել հետևյալ կերպ. **«Թույլ տվեք, որ դուք հետևողականորեն և անընդհատ կրկին լցվեք Հոգով»**:

Սուրբ Հոգով լցվածությունը, որը տրվել է մեզ մկրտության ժամանակ (այն պայմանով, որ դա ջրի մեջ ամբոզջությամբ ընկղմվելով և Հոգուն լիակատար հանձնվելով մկրտություն էր), **կարելի է կորցնել, եթե մեզ տրված ամբողջությունը չի պահպանվում**: Բայց եթե այն կորել է, ապա այն կարելի է կրկին ձեռք բերել: Հոգով լցվելը պետք է կրկնվի, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա գրավի մեր կյանքի բոլոր ոլորտները, այդ ժամանակ մեր հոգևոր կյանքը չի մթագնի: Հոգով լցված լինելը չի նշանակում, որ մենք ավելի շատ ենք ընդունում Նրան քանակական առումով, այլ այն, որ Հոգին ավելի ու ավելի շատ է տիրապետում մեզ: **Ահա թե ինչու Պողոսը պատվիրում է բոլոր հավատացյալներին անընդհատ լցվել Հոգով**: Դա է քրիստոնյայի նորմալ վիճակը: Մեկ մկրտություն, բայց բազմակի «վերալցումներ»: **68**

Տերն Ինքն է տվել պատվիրանը: *
«Թույլ տվեք, որ դուք հետևողականորեն և անընդհատ կրկին լցվեք Հոգով»:**

---

68 Յոհաննես Մագերը եղել է հովիվ, ավետարանիչ և երկար տարիներ դասավանդել է համալսարանում համակարգված Աստվածաբանություն: Վերջերս նա ղեկավարում էր Եվրո-Աֆրիկյան դիվիզիոնի (այժմ Միջ-Եվրոպական դիվիզիոն) հովվական բաժինը Շվեյցարիայի Բեռն քաղաքում: Ներկայումս նա թոշակի է և ապրում է Ֆրիդենսաու քաղաքում: Մեջբերումը նրա *«Auf den Spuren des Geistes»* գրքից է, (Lüneburg, 1999), էջ 100-101 (հրատարակչության թույլտվությամբ)
* Է. Գ. Ուայթ, «Հիսուսի լեռան քարոզը», MB 20.3 (egwwritings.org)
** Johannes Mager, Auf den Spuren des Heiligen Geistes (Luneburg, 1999), Seite 101

ԳԼՈՒԽ 4

ԻՆ՞Չ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱԿՆԿԱԼԵԼ

Ի՞նչ առավելություն ունենք, երբ մեր կյանքը լցված է Սուրբ Հոգով:
Ի՞նչ ենք մենք կորցնում, երբ չենք աղոթում Սուրբ Հոգու մասին:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐՄՆԱՎՈՐ ԵՒ ՀՈԳԵՎՈՐ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մենք արդեն մասամբ թվարկվել ենք առանձին անձանց համար մարմնավոր քրիստոնեության հետևանքները: Նրանցից մի քանիսը արտահայտվում են հետևյալ կերպ.

* Այս վիճակում մարդը փրկված չի (Հռոմ. 8:6-8, Հայտն. 3:16)
* Մարդու մեջ չկա աստվածային՝ ագապե սերը (Հռոմ. 5:5, Գաղ. 5:22), նրանք ամբողջովին կախված են միայն մարդկային սիրուց և չեն հաղթել մարմնի ցանկությունները (Գաղ. 5:16)
* Մարդը չի ամրացել Հոգու զորությամբ (Եփես. 3:16-17)
* Քրիստոսը չի բնակվում այս մարդու մեջ (1 Հովհ. 3:24)
* Մարդը զորություն չի ստացել՝ վկայելու Քրիստոսի մասին (Գործք 1:8)
* Մարդը գործում է մարդկայնորեն (Ա Կոր. 3:3), ինչը հեշտությամբ կարող է առաջացնել մրցակցություն և տարաձայնություններ:

* Այսպիսի մարդը, որպես կանոն, ավելի դժվար է ընդունում հանդիմանություն
* Նրանց աղոթքի կյանքը կարող է թերի լինել
* Այսպիսի մարդը փորձում է ներել և վիրավորանքը թաքցնել՝ գործադրելով միայն իր մարդկային կարողությունները:

Մարմնավոր քրիստոնյաները երբեմն վարվում են որպես սովորական մարդիկ: Պողոսն ասում է. *«Չէ՞ որ մարմնավոր էք եւ մարդկօրէն էք վարվում»* (Ա Կոր. 3:3): Երբեմն նա վարվում է որպես հոգևոր մարդ, թեև նա ապրում է սեփական ուժերով և կարողություններով

Հոգևոր քրիստոնյան զգում է Աստծո լիարժեքությունը.

«Որ իր փառքի հարստութեան պէս տայ ձեզ, որ զօրութեամբ հաստատուիք իր Հոգու ձեռովը ներսի մարդումը: Որ Քրիստոսը հաւատքով բնակուի ձեր սրտերումը. Եւ դուք սիրով արմատ գցած եւ հաստատուած լինիք: Որ ամեն սուրբերի հետ իմանաք, թէ ի՞նչ է լայնութիւնը եւ երկայնութիւնը եւ բարձրութիւնը եւ խորութիւնը. Որ ճանաչէք Քրիստոսի սէրը որ ամեն գիտութիւնից գերազանց է. որ Աստուծոյ ամեն լիութիւնովը լցուիք: Բայց նորան՝ որ կարող է առատութեամբ անել ամեն բաներից աւելի քան որ խնդրում ենք եւ իմանում, այն զօրութեան չափովը՝ որ մեզանում ներգործում է. Նորան փառք լինի եկեղեցումը, որ Քրիստոս Յիսուսումն է, ամեն դարերում յաւիտեանս յաւիտենից: Ամէն»: (Եփես. 3: 16–21)

ՄԱՐՄՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ես ցավում եմ իմ ընտանիքում և իմ եկեղեցիներում, որտեղ ես աշխատել եմ որպես հովիվ, կրած կորուստների համար՝ Սուրբ Հոգու պակասի պատճառով: Այս իրավիճակում ճշմարիտ է նաեւ այն, որ մենք չենք կարող առաջնորդել որևէ մեկին դեպի ավելի բարձր նվաճումներ, քան մենք ինքներս ենք: Պետք է գիտակցել, որ Սուրբ Հոգու պակասը ընտանիքի և եկեղեցու յուրաքանչյուր անդամի մեջ կարող է համալրվել և նույնիսկ բազմապատկել :

Երեխաները եւ երիտասարդները

Մարմնավոր քրիստոնեությունը պարարտ հող է ազատամիտ քրիստոնեական կյանքի համար: Մարդիկ՝ ունենալով բարի մտադրություններ, անգիտակցաբար փորձում են անել այն, ինչ չեն կարող անել, իսկ հետո ելք են փնտրում: Արդյո՞ք այս պատճառով չէ, որ մենք այդքան շատ երիտասարդներ ենք կորցնում: Արդյո՞ք մենք ինքներս, երբեմն անգիտակցաբար, կամ որևէ այլ պատճառներով, չենք դառնում մեր երեխաների և երիտասարդության համար մարմնավոր քրիստոնեության օրինակ: Արդյո՞ք դրա արդյունքում չէ, որ նրանք դառնում են մարմնավոր քրիստոնյաներ և, հետևաբար, ստիպված են լինում պայքարել հիասթափությունների դեմ: Արդյո՞ք սա չէ պատճառը, որ շատերն սկսում են թեթևամտորեն վերաբերվել եկեղեցուն, կամ դադարում են հաճախել այն, կամ ընդհանրապես հեռանում են եկեղեցուց:

Ոչ վաղ անցյալում մի տարեց եղբայր ասաց իր եկեղեցում. «Այն խնդիրները, որոնք այսօր կան մեր կյանքում և մեր երիտասարդության կյանքում, ունեն մի պատճառ. ավագ սերունդը չի կարողացել հասկանալ Սուրբ Հոգու աշխատանքը և լցվել Նրանով»: **69**

Թույլ տվեք մեկ անգամ ևս հիշեցնել ձեզ գաղջության (Քրիստոսին ոչ լրիվ հանձնվելու) հետեւանքների մասին. «Անվճռական քրիստոնյաները ավելի վատն են, քան հեթանոսները, քանի որ նրանց խաբուսիկ բառերը և երկիմաստ դիրքորոշումը մոլորեցնում են շատերին է թյուրիմացության մեջ գցում: Անհավատը չի թաքցնում իր ով լինելը: Գաղճ քրիստոնյան երկու կողմերին էլ խաբում է: Նա ոչ լավ աշխարհիկ է, ոչ էլ լավ քրիստոնյա: Սատանան օգտագործում է նրան կատարելու այն աշխատանքն, որը այլ ոչ ոք չի կարող անել»: **70**

Այնուամենայնիվ, եթե մենք ապրենք հոգեպես, ապա կարող ենք մեր երեխաներին ցույց տալ այն միջոցները, որով Աստված օգնության է հասնում: Էլեն Ուայթը իսկապես զարմանալի մի բան է ասում.

«Ուսուցանեք ձեր երեխաներին, որ նրանք հիանալի **արտոնություն** ունեն ամեն օր մկրտվել Սուրբ Հոգով: Թող Քրիստոսը օգտագործի ձեզ որպես Իր գործիք՝ Իր նպատակները իրականացնելու համար: Աղոթքով դուք կարող եք ձեռք բերել այնպիսի փորձառություն, որը ձեր ծառայությունը ձեր երեխաների համար կդարձնի կատարյալ»: **71**

Մենք սովորեցնում էինք մեր որդիներին աղոթել: Բայց արդյո՞ք մենք սովորեցրել ենք նրանց ամեն օր աղոթել Սուրբ Հոգու համար: Թե՞ մենք ինքներս դա չգիտեինք: Այդ ժամանակ ես և կինս դա չգիտեինք: Ես շնորհակալ եմ Աստծուց, որ նա ներեց մեզ այն ժամանակի համար, երբ մեզ պակասում էր գիտելիքը: Բայց որքա՜ն բացթողումներ է տեղի ունեցել դրա հետևանքով:

Ինչիսի՜ հրաշալի երեխաներ կունենան այն հոգևոր ծնողները, ովքեր ամեն օր նվիրվում են Հիսուսին և աղոթում Սուրբ Հոգու համար:

Մթնոլորտ՝
աստվածային սեր, թե միայն լավ վերաբերմունք միմյանց հանդեպ:

Ի՞նչ տարբերություններ են նկատվում մարմնավոր և հոգևոր քրիստոնյաների ամուսնական և ընտանեկան մթնոլորտում, կամ եկեղեցական և ընկերական հարաբերություններում՝ երբ պակասում է Աստծո զորությունը աշակերտության կյանք ապրելու համար, երբ բացակայում է Աստծո սերը, և մեղքի ուժը հաղթահարված չե, կամ երբ հակառակը, այս ամենը առկա է կյանքում Աստծո շնորհով:

Պահպանողական մարմնավոր քրիստոնյաները հակված են քննադատության: Դա լա՛վ չէ: Չնայած՝ որ մենք պետք է խոսենք Աստծո բարի պատվիրանների մասին, միևնույն ժամանակ պետք է գիտակցենք, որ էական փոփոխությունները տեղի կունենան միայն այն ժամանակ, երբ նրանք բխում են ներսից:

---

69 Garrie F. Williams, Erfulltsein vom Heiligen Geist – Wie erfahren wird das? (Luneburg 2007), S. 8

70 EGW Letter 44, 1903, quoted in Adventist Bible Commentary, Vol.7, p.963 on Rev. 3:15-16

71 E.G. White, Child Guidance (1954), p. 69

Լիբերալները, որպես կանոն, շատ բաներ չեն ընդունում լուրջ և հարմարվում են աշխարհիկ մեթոդներին: Աստված այս բանը նույնպես չի կարող օրհնել:

Ջոզեֆ Քիդդերն հետևյալ կերպ է սահմանել այսօրվա եկեղեցու ընդհանուր վիճակը. «Քնկոտություն, մակերեսայնություն, աշխարհիկ ունայնություն, մեծահոգության պակաս, ծառայողները սպառել են իրենց, երիտասարդները հեռանում են եկեղեցուց, թույլ ինքնակարգապահություն, ծրագրերը առանց որևէ իրական հիմքի կամ արդյունքների, ուժեղ և հավատարիմ մարդկանց խրոնիկ պակաս»: **72**

Մեր խնդիրների պատճառը Հիսուսի հետ մեր կապի բացակայությունն է (Հովհ. 15:1-5) և չափազանց մեծ վստահությունը մարդկային ջանքերին (Զաք. 4:6): Քիդդերը լուծումը նույնպես տեսնում է՝ Սուրբ Հոգով լցված կյանքում (Գործք 1:8):

Հիսուսը տվեց մեզ նոր պատվիրան.

«Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. Ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք: Սորանով կ՚գիտենան ամենքը թէ իմ աշակերտներն էք, եթէ իրար վերայ սէր ունենաք»: (Հովհ. 13:34-35)

Սիրել՝ ինչպես Հիսուսը, իրականում նշանակում է սիրել աստվածային սիրով (ագապե սիրով): Մենք կարող ենք անել դա միայն այն ժամանակ, երբ լցված ենք Սուրբ Հոգով:

> «Գերագույն սերը Աստծո հանդեպ և անշահախնդիր սերը միմյանց հանդեպ՝ սա է լավագույն պարգևը, որը կարող է տալ մեր Երկնային Հայրը: Այսպիսի սերը ոչ թե ակնթարթային ազդակ է, այլ Աստծո սկզբունք՝ անսպառ ուժ: Այն չի կարող ծնվել կամ ստեղծագործել անսրբագործված սրտում (այդպիսի սիրտ մասնավորապես ունեն նրամք, ովքեր լցված չեն Սուրբ Հոգով), այն ապրում է միայն այն սրտում, որտեղ թագավորում է Քրիստոսը»: **73**

Ես կարծում եմ, որ կա տարբերություն, թե՛ մենք «պարզապես» բարի լինենք միմյանց հանդեպ, թե՛ մենք դուրս գանք այս սահմաններից և սիրենք Աստծո սիրով: Է. Գ. Ուայթը մեզ մի կարևոր հուշում է տալիս. «Մեր վրա դնելով հեզ ու հնազանդ հոգու զարդը, հնարավոր կլինի ազատվել մեր կյանքը այդքան դառը դարձնող հարյուր դժբախտություններից իննսունիններից»: **74**

1 Թես. 4:3–8-ում Աստծո Խոսքը նշում է ինչ-որ բան ամուսնական կյանքի մասին: Ի թիվս այլ բաների, այդ հատվածները խոսում են ամուսնության մեջ սրբացած և պատկառելի հարաբերությունների մասին:

---

72 Dr. S. Joseph Kidder, Anleitung zum geistlichen Leben (Andrews University), PPP Folie 3+4
73 E.G. White, Acts of the Apostles (1911) p. 551.2
74 E.G. White, Testimonies for the Church, volume 4, p. 348.3

Այն հակադրվում է հեթանոսների կրքոտ ցանկությանը: Քանի որ այն երեք անգամ հիշատակում է սրբագործման կյանքը՝ Սուրբ Հոգու ներկայությամբ, մենք հասկանում ենք, որ Սուրբ Հոգով կյանքը կարող է և պետք է փոխել նաև մեր ամուսնական հարաբերությունները: Աստված ցանկանում է, որ մենք ունենանք մեծ ուրախություն և բավարարվածություն մեր ամուսնական կյանքով: Մի՞թե սա մեզ ցույց չի տալիս, որ Աստված ուզում է օգնել մեզ վերաբերվել միմյանց հետ սիրալիր քնքշությամբ, այլ ոչ թե ցանկությամբ:

Հիսուսը աղոթում եր իր աշակերտների միասնության մասին. «Որ ամենքը մէկ լինեն, ինչպէս դու, Հայր, ինձանում, եւ ես քեզանում, որ նորանք էլ մեզանում մէկ լինեն. Որ աշխարհքը հաւատայ, թէ դու ուղարկեցիր ինձ» (Հովհ .17: 21):

Ուիլյամ Գ. Ջոնսոնն ասում է. «Շատ ադվենտիստները դեռ պետք է հասկանան, թե ինչ է նշանակում Քրիստոսի հետ միասնական լինելը: Նախկինում մենք, հավանաբար, այդքան էլ կարևոր նշանակություն չենք տալիս դրան, կամ ձիերին քշել ենք սխալ ուղղությամբ»: **75**

Քրիստոսը մեզանում է, երբ մենք լցված ենք Սուրբ Հոգով: Հոգևոր քրիստոնեությունը նպաստում է, որ մեր աղոթքները լսվեն Տիրոջ կողմից: Է. Գ. Ուայթն ասում է. «Երբ Աստծո ժողովուրդը մեկ լինի Հոգու միասնության մեջ, ապա ամեն փարիսեցիությունը և ինքնասիրությունը, որոնք հանդիսանում էին հրեա ազգի մեղքեր, դուրս կհեռացվեն մարդկանց սրտերից ... Աստված կբացահայտի դարեր շարունակ թաքնված գաղտնիքը: Նա կբացահայտի, *«թէ ինչ է այս խորհուրդի փառաւոր ճոխութիւնը հեթանոսներումը, որ է Քրիստոսը ձեզանում՝ այն փառքի յոյսը»* (Կողոսացիս 1:27): **76**

Խորհուրդներ և հանդիմանություն

Կարո՞ղ է արդյոք հանդիմանությունը ունենալ դրական ազդեցություն, եթե այն արվում է կա՛մ ընդհանրապես առանց Աստծո սիրո, կա՛մ գրեթե առանց դրա: Ի՞նչ որոշումներ է կարող է կայացնել եկեղեցին, որը բաղկացած է հիմնականում մարմնավոր քրիստոնյաներից, կամ որը նույնիսկ ունի մարմնավոր հովիվ կամ ղեկավար: Ետ նայելով իմ հովվության տարիներին, ես հիշում եմ, որ եկեղեցու հոգևոր անդամները ջանում էին վերադարձնել հեռացած անդամներին: Եվ երբ մարդը ապաշխարում է և խոստովանում, ապա հանդիմանությունը հասել է իր նպատակին: Երբեմն մարմնավոր քրիստոնյաները հակված են հանդիմանությունը օգտագործել որպես պատժի միջոց և նույնիսկ իրենց իշխանությունը կիրառելու միջոց՝ դրանով չարաշահելով իշխանությունը (Մատթ. 18:15-17, Ա Կորնթ. 3:1-4, Բ Կորնթ. 10:3; Հուդա 19):

---

75 William G. Johnsson, Adventgemeinde in der ZerreiЯprobe, (Luneburg 1996), p. 118
76 E.G. White, Selected Messages, Book 1 (1958), p. 386.1

ԱՍՏԾՈ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Աստված սովորաբար կարևոր իրադարձությունները բացահայտում է իր մարգարեների միջոցով (Ամովս 3:7): Այսպես, նա Էլեն Ուայթի միջոցով տվել է հատուկ մարգարեական լուրը վերջին օրերի համար: Քանի որ այսօր շատ բաներ բոլորովին այլ է, քան նախկին ժամանակներում, ապա կարևոր և անհրաժեշտ էր ստանալ համապատասխան լրացուցիչ տեղեկություններ Աստծուց: Այսօր մենք դա կանվանեինք "կատարելագործում»: Ըստ է. Ուայթի, այդ լուրերը արդիական կլինեն մինչև Հիսուսի Երկրորդ Գալուստը: Նրա խորհուրդները պարունակում են հանդիմանություններ, նախազգուշացումներ և ցուցումներ, որոնք պահանջում են որոշակի փոփոխություններ կենսակերպի մեջ, ուստի հոգևորին ավելի հեշտ է ընդունել դրանք, քան մարմնավորին: (Բայց միայն այն բանի հիման վրա, որ մարդը լուրջ է վերաբերվում այդ խորհուրդներին, չի կարելի եզրակացնել նրա հոգեւորության մասին): Իմաստուն կլինի դիմել Երկրորդ Օրինաց 18:19-րդ խոսքերին. *«Եւ լինի՝ այն մարդը որ չ՚լսէ իմ խօսքերին, որ նա իմ անունովը կ՚խօսէ, ես այն մարդիցը կ՚պահանջեմ»:*

Սա պարզ ցույց է տալիս, որ ճշմարիտ մարգարեի լուրը գալիս է ոչ թե մարդուց, այլ հենց Աստծուց: Ինչպե՞ս կարող ենք իմանալ, արդյոք ինչ-որ մեկը ճշմարիթ մարգարե է: Աստծո Խոսքը տալիս է մեզ ստուգման հինգ չափանիշ: Ճշմարիտ մարգարեն պետք է համապատասխանի բոլոր հինգ կետերին.

1. Նրանց ապրելակերպը – **«Իրանց պտուղներիցը նորանց ճանաչեցէք»** (Մատթ. 7:15–20):

2. Մարգարեությունների կատարումը. Երկրորդ Օրինաց. 18:21-22 (բացառությամբ պայմանական մարգարեությունների, օրինակ՝ Հովնանի):
3. Կոչ հավատարիմ մնալ Աստծուն (Աստծո խոսքին): Երկրորդ Օրինաց: 13:1-5
4. Ճանաչել Հիսուսին որպես իրական անձնավորություն և ճշմարիտ Աստված: 1 Հովհ. 4:1-3
5. Աստվածաշնչի ուսմունքի հետ համաձայնություն (Հովհ. 17:17):

Աստծո բոլոր պատվիրանները, այդ թվում՝ մարգարեների միջոցով տրված նրա խորհուրդները, ծառայում են մեր իսկ բարիքի համար: Այդ իսկ պատճառով դրանց արժեքը բացառիկ է: Հոգևոր մարդը կատարում է պատվիրանները Աստծո զորությամբ և ուրախությամբ: Նա հասկանում է, որ դա նպաստում է կյանքում հաջողության. «Հաւատացէք ձեր Տէր Աստուծուն եւ հաստատ կ՚մնաք. **Հաւատացէք նորա մարգարէներին, եւ յաջողութիւն կ՚ունենաք**» (Բ. Մնաց. 20:20):

Շաբաթորյա դասի ձեռնարկներից մեկում՝ Սուրբ Հոգու հետ կյանքի և ճշմարիտ մարգարեի խոսքերի միջև փոխհարաբերությունների մասին ասվում է հետևյալը. «Ով որ մերժում է մարգարեական խոսքը, փակում է իրեն Սուրբ Հոգով առաջնորդելու համար: Արդյունքն այսօր ոչնչով չի տարբերվում նրանից, որը եղել են անցյալում. Աստծո հետ փոխհարաբերությունների կորուստ և բացասական ազդեցությունների հանդեպ բաց լինելը»: **77**

---

77 Studienanleitung Standardausgabe, Philip G. Samaan, 10.11.1989, to question 8

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ/ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կարևոր խնդիր է՝ ճիշտ որոշում կայացնել և մեթոդներ գտնել՝ եկեղեցու ներսում և միսիոներական դաշտերում աշխատանք կատարելու վերաբերյալ: Դա մեր պլանների եւ ռազմավարությունների հարցն է: Այս գործի հիմնական նպատակն է՝ եկեղեցուն հոգեպես ամրացնել և հոգիներ շահել:

Ես մկրտվել եմ 65 տարի առաջ և 43 տարի կատարում եմ հովվի ծառայությունը: Մենք մշակել ենք բազմաթիվ ծրագրեր և մեթոդներ: Մենք աշխատել ենք մեծ ջանասիրությամբ: Այս համատեքստում ես պետք է ևս մեկ անգամ հիշեցնեմ Դուայթ Նելսոնի Գլխավոր կոնֆերանսի 2005 թվականի նստաշրջանում ասած խոսքերը.

> «Մեր եկեղեցին լիովին մշակել է հաջող ձևեր, ծրագրեր և մեթոդներ, բայց եթե մենք վերջապես չընդունենք մեր հոգևոր սնանկությունը (Սուրբ Հոգու բացակայությունը), որը տիրապետել է մեր շատ ծառայողներին ու ղեկավարներին, մենք երբեք դուրս չենք գա մեր ձևական քրիստոնեության շրջանակներից»: **78**

Նույն իմաստով՝ Դենիս Սմիթը ասում է հետևյալը. «Ես ոչինչ չունեմ պլանների, ծրագրերի և մեթոդների դեմ: Բայց ես անհանգստանում եմ, որ մենք շատ ենք ապավինում դրանց վրա՝ Աստծո գործն առաջ տանելու հարցում: Աստծո գործը պլանները, ծրագրերը եւ մեթոդները չեն, որ ավարտելու են: Աստծո գործը մեծ քարոզիչները, քրիստոնեական հիանալի համերգները, արբանյակային հեռարձակումները չեն, որ ավարտելու են: Աստծո Հոգի՞ն կավարտի այս աշխատանքը: Աստծո Հոգին է, որը խոսում և գործում է Հոգով լցված տղամարդկանց և կանանց միջոցով»: **79**

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ/ՀՈԳԻՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄ

Աստվածաշունչը ցույց է տալիս, որ Քրիստոսի համար մարդկանց շահելու հարցում՝ Սուրբ Հոգին կարևորագույն նախադրյալն է (տե՛ս «Գործք Առաքելոց» գիրքը): Գերմանիայում մենք ունենք մի կողմից՝ եկեղեցիներ, որոնք աճում են, մյուս կողմից՝ եկեղեցիներ, որոնք լճացած են, կամ նույնիսկ նվազում են: Վերջին 60 տարիների ընթացքում մեր եկեղեցու անդամների թիվն ամբողջ աշխարհում աճել է քսան անգամ: Մենք, իհարկե, կարող ենք թվարկել Գերմանիայում նման իրավիճակի բազմաթիվ պատճառներ: Բայց ինձ համար մի բան է պարզ. հիմնական պատճառը Սուրբ Հոգու բացակայությունն է: Բնականաբար, այս խնդիրը մեզ խիստ մտահոգում է: Մենք մշակել կամ հարմարեցրել ենք բազմաթիվ պլաններ և ծրագրեր: Մենք տեսանք, որ Սուրբ Հոգու պակասը, չնայած այս մեծ ջանքերի, հանգեցրեց միջոցների և ժամանակի կորստին, քանի որ մենք ընտրում էինք անհարկի կամ անհաջող ուղիներ: Է. Գ. Ուայթի երկու մեջբերումները տալիս այս իրավիճակը պատկերումը:

---

78 Helmut Haubeil (Hrsg.), Missionsbrief Nr. 34, (Bad Aibling, 2011) 3

79 Dennis Smith, 40 Days – Prayers and Devotions to Prepare for the Second Coming (Wien, 2012), p. 88

«Երբ Աստծո ժողովուրդը մեկ է Հոգու միասնության մեջ, բոլոր փարիսեցիությունը, բոլոր ինքնագոհությունը, որը հրեա ազգի մեղքն եր, կհեռացվի բոլոր սրտերից»

«Տերն այժմ չի աշխատում, որպեսզի շատ հոգիներ բերի ճշմարտության, ինչպես եկեղեցու այն անդամների պատճառով, ովքեր երբեք դարձի չեն եկել, այնպես էլ նրանց պատճառով, ովքեր երբեմնի դարձի էին եկել, բայց ետ են կանգնել հավատքից: Ի՞նչ ազդեցություն կունենան եկեղեցու այս չհաստատված անդամները (մարմնավոր քրիստոնյաները) նորադարձների վրա»: **80**

«Եթե մենք խոնարհեցնեինք մեզ Աստծո առաջ, լինեինք բարի, բարեկիրթ, քնքուշ և կարեկցանք ցուցաբերեինք միմյանց հանդեպ, ապա այնտեղ, որտեղ այսօր միայն մեկն է գալիս դարձի, դարձի կգային հարյուրավորներ»: **81**

Մյուս կողմից, մենք մկրտում ենք այն մարդկանց, ովքեր բավարար չափով չեն պատրաստվել: Է. Գ. Ուայթն ասել է.

«Նոր ծնունդը հազվագյուտ փորձառություն է՝ աշխարհի այս դարաշրջանում: Սա է պատճառը, որ եկեղեցիներում այդքան շատ տարակուսանքներ են առաջանում: Շատե՛րը, շատ-շատե՛րը, ովքեր կոչվում են Քրիստոսի անունով, սրբագործված չեն և չունեն սրբություն: Նրանք մկրտվեցին, բայց թաղվեցին կենդանի: Նրանց ներքին բնույթը չի մահացել, և, հետևաբար, նրանք հարություն չեն առել Քրիստոսում՝ նոր կյանքի համար»:

---

80 E.G. White, Testimonies for the Church Vol. 6, (1901) p. 370.3
81 E.G. White, Testimonies for the Church Vol. 9 (1909), p. 189.4
82 E.G. White, MS 148 (1897)

Սա գրվել է 1897 թվականին: Ինչպիսի՞ն է իրավիճակն այսօր: Խնդիրն այն է, որ նա, ով չի՛ ծնվել վերստին, լցված չե Սուրբ Հոգով: Հիսուսն ասաց. *«Եթէ մէկը ջրից եւ Հոգուց չ՛ծնուի, նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնը մտնել»* (Հովհ. 3:5): Մի՞թե ճշմարիտ չէ, որ մենք բոլոր ոլորտներում հանդիպում ենք Սուրբ Հոգու բացակայության հետ:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՎ ՔԱՐՈԶԵԼԸ

Սուրբ Հոգու նշանակության և **քարոզելու** մասին Աստված մեզ ասում է հետևյալը՝. «Քարոզելն անիմաստ կլինի առանց Սուրբ Հոգու մշտական ներկայության և օգնության: Նա է աստվածային ճշմարտության միակ արդյունավետ ուսուցիչը: Միայն այն ժամանակ կարթնանա խիղճը և կվերափոխվի կյանքը, երբ Ինքը Հոգին բացի սրտին ճշմարտությունը: Գուցե ինչ-որ մեկը կարող է ներկայացնել Աստծո խոսքի տառը, ծանոթ լինի Նրա բոլոր պատվիրաններին և խոստումներին, սակայն մինչդեռ Սուրբ Հոգին չհաստատի ճշմարտությունը, ոչ մի հոգի չի ընկնի ժայռի վրա և չի փշրվի: Ոչ մի կրթություն, ոչ մի առավելություն, որքան էլ նրանք մեծ լինեն, չի կարող մարդուն դարձնել լույսի ալիք՝ առանց Աստծո Հոգու հետ համագործակցության»: **83**

Քարոզչությունը տեղի է ունենում ոչ միայն քարոզի ժամանակ, այլ նաև դասախոսությունների, աստվածաշնչյան ուսումնասիրությունների և ակումբային հանդիպումների ժամանակ:

Ռենդի Մաքսվելն ասում է.

«Ճշմարտությունն այն է՝ որ մենք մահանում ենք կենդանի Աստծո հետ փոխհարաբերությունների ծարավից»: **84**

Արդյո՞ք Սուրբ Հոգու պակասը նաև վախի պատճառ է հանդիսանում: Հավանաբա՛ր Էմիլիո Քնեխտլը ճիշտ է, երբ ասում է. «Ինչո՞ւ մեզ չի հաջողվում այս ապականված աշխարհը գլխիվայր շուռ տալ: Ինչ-որ բան տեղի է ունեցել մեր անձնական համոզմունքների հետ: Մենք վախենում ենք կոնֆլիկտներից, թյուրիմացություններից, դժվարություններից, վախենում ենք աշխատանքից զրկբելուց, հեղինակությունը կորցնելուց և մեր կյանքը կորցնելուց: Դրա համար էլ մենք լռում ու թաքնվում ենք: Մենք վախենում ենք հռչակել ավետարանը աշխարհին սիրով և, միևնույն ժամանակ, զորությամբ». **85**

Այս խնդրի լուծումը գտնվում է Գործք Առաքելոց 4:31-ում. *«Եւ նորանք աղօթք անելիս՝ շարժուեցաւ այն տեղը, ուր որ ժողովուած էին, եւ ամենքը Սուրբ Հոգով լցուեցան. Եւ Աստուծոյ խօսքը խօսում էին համարձակութեամբ»*:

---

83 Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը» (1898), էջ. 671.4
84 Randy Maxwell, If my people pray … (Pacific Press, 1995), p.11
85 CD Die letzte Vorbereitung, Teil 6

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ և ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր գրականության մասին ասվում է հետևյալը. «Եթե թերթի համար հոդվածներ գրողին առաջնորդում է Աստծո Հոգին, ապա նույն Հոգին կլինի նաև ընթերցողի վրա: Հրեշտակները հաստատում են Աստծո Հոգով գրված բառերը և այդ ոգեշնչումը փոխանցում են նաև ընթերցողներին: Բայց եթե գրողը չի ապրում ամբողջությամբ ի փառս Աստծո, ամբողջությամբ նվիրված չի Նրան, ապա հրեշտակները վշտով զգում են այդ պակասը: Նրանք շրջվում են և ընթերցողի վրա տպավորություն չեն թողնում, քանի որ այդ բառերի մեջ չկա Աստված և Նրա հոգին: Խոսքերը լավն են, բայց նրանք զուրկ են Աստծո Հոգու ջերմ ազդեցությունից»:**86**

Ես ուզում եմ ևս մեկ անգամ ընդգծել՝ /շեշտել/. բնականաբար, այն ամենը, ինչ մենք անում էինք, ճիշտ էր: Անկասկած, մենք մշակել ենք լավ և շատ լավ ծրագրեր, Աստված հնարավորինս օրհնեց մեր մարդկային ջանքերը: Բայց կարևոր հարցը հետևյալն է. մենք մոտենում ենք այդ պարտականություններին՝ որպե՞ս հոգևոր թե որպե՞ս մարմնավոր քրիստոնյաներ: Մի բան ակնհայտ է. երբ եթե մենք փորձում ենք գտնել լուծումներ մարմնավոր հիմունքներով, մենք շատ ժամանակ ծախսում ենք ապարդյուն, մենք կատարում ենք բազմաթիվ խնդիրներ, որոնք հետագայում անիմաստ են լինում:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ՝ ՈՉ՞ ՎԱՂ ԱՆՁՐԵՎ, ՈՉ՞ ՈՒՇ ԱՆՁՐԵՎ

«Վաղ անձրևը, լի Սուրբ Հոգով, բերում է մեզ անհրաժեշտ հոգևոր հասունություն, որն անհրաժեշտ է, որպեսզի մենք կարողանանք օգուտ քաղել ուշ անձրևից»: **87**

«Ուշ անձրևը, որը հասունացնում է երկրի բերքը, ներկայացնում է հոգևոր շնորհը, որը պատրաստում է եկեղեցին Մարդու Որդու գալստին: Բայց եթե վաղ անձրևը չի թափվել, կյանք չի լինի, կանաչ ծիլը չի ծագի: Քանի դեռ վաղ անձրևները չեն կատարել իրենց գործը, ապա վերջին անձրևը չի կարող սերմը բերի հասունացման»: **88**

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ և ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄԸ

«Այս գործը (աստվածաշնչյան սրբագործումը) հնարավոր է կատարել միայն Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով, մեզանում բնակվող Աստծո ներշնչող Հոգու զորությամբ»: **89**

---

86 E.G. White, PH 016, p. 29.1
87 Dennis Smith, 40 Days – Prayer and Devotions to Revive Your Experience with God, Book 2, (Vienna, 2013), p. 175
88 E.G. White, The Faith I live By, (1958), p. 333.3
89 Է. Գ. Ուայթ, «Մեծ պայքար», (1911), էջ. 469.3

ՄԵԾ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԱՌԱ՞ՆՑ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ:

Կարող են արդյո՞ք մեծ հաստատություններն, ավետարանի հաջող ծրագրերը և միսիոներական հզոր ծրագրերը զարգանալ առանց Սուրբ Հոգու: Հարավային Աֆրիկայում միսիոներ Էնդրյու Մյուրեյը գիտեր, որ շատ հավանական է, որ քրիստոնեական աշխարհում սցենարը իրականում այդպես զարգանա, ուստի, նա գրել է.

«Մարդը կարող է քարոզել, գրել, մտածել կամ խորհել այն ամենի շուրջ, ինչ գրված է Աստծո գրքում և ուրախանալ՝ որ ներգրավված է Աստծո Թագավորությանը: Այնուամենայնիվ, Սուրբ Հոգու զորությունը կարող է բացակայել: Վախենում եմ, եթե դուք ուսումնասիրեք Քրիստոսի եկեղեցու ավետարանական աշխատանքը և փորձեք պարզել, թե ինչու Խոսքի քարոզչության մեջ այդքան քիչ փոխակերպող ուժ կա, ինչու այդքան ջանքերը այդքան փոքր հաջողություն են բերում հավերժության համար, ինչու Խոսքը ի վիճակի չէ ամրապնդել հավատացյալներին սրբության և նվիրվածության գործում, պատասխանը կլինի մեկը՝ Սուրբ Հոգու զորության բացակայություն: Ինչո՞ւ է դա այդպես եղել: Պատճառը միայն մեկն է՝ Սուրբ Հոգու տեղը գրավել են մարմինը (տես Գաղ. 3:3) և մարդկային ջանքերը”: **90**

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ և ԱՌՈՂՈՒԹՅՈՒՆ

- «Արդ աղաչում եմ ձեզ, եղբարք, Աստուծոյ ողորմութիւնովը, որ **ձեր մարմինները ներկայացնէք կենդանի, սուրբ եւ Աստուծոյ ընդունելի պատարագ**, որ է ձեր բանաւոր պաշտօնը»: Հռոմ. 12:1

«Չ՛գիտէ՞ք որ դուք Աստուծոյ տաճար էք եւ Աստուծոյ Հոգին բնակուած է ձեզանում: Եթէ մէկն Աստուծոյ տաճարն ապականէ, նորան էլ Աստուած կ՛ապականէ. Որովհետեւ Աստուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք էք»: Ա Կոր. 3:16-17

«Կամ թէ չ՛գիտէ՞ք, որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են՝ որ ձեզանում է, որ նորան Աստուածանից ունիք. եւ ձերինը չէք: Որովհետեւ մեծ գնով գնուեցաք. Ուստի փառաւորեցէք Աստուծուն ձեր մարմնումը եւ ձեր հոգումն՝ որ Աստուծունն են»: Ա Կոր. 6:19-20 (տես նաև՝ Ելից 15:26)

Սուրբ Հոգով լցված մարդիկ Աստծո տաճարն են: Երբեւէ մտածե՞լ եք, թե ինչ նշանակություն ունի դա ձեր կյանքի համար: Տաճարը՝ Աստծո բնակելի վայրն է: Աստված ասաց Մովսեսին. *«Եւ ինձ համար մի սրբարան շինեն՝ որ իրանց մէջ բնակուեմ»*: Ելից 25:8

Եթե լուրջ վերաբերվենք այս լուրին, ապա մեր առողջությանը հոգ տանելը և մեր ապրելակերպին ուշադրություն դարձնելը կդառնա մեր աշակերտության բաղկացուցիչ մասը: Մեր մարմինը պատկանում է Աստծուն: Դուք ցանկանո՞ւմ եք խնամքով վերաբերվել Աստծո ունեցվածքին: Այո՛, մենք ցանկանո՛ւմ ենք խնամքով հոգ տանել մեր մարմնի համար՝ Աստծո պատվիրաններին համապատասխան:

---

90 Randy Maxwell, If My People Pray (Pacific Press 1995), p. 145

Սա պահանջում է որոշակի կարգապահություն: Նա, ով լցված է Սուրբ Հոգով, կկարողանա պահել այս կարգապահությունը: Դրա պարգևը կլինի մարմնի, հոգու և ոգու լավագույն առողջությունը: Ինս նա, ով լցված չէ Սուրբ Հոգով, կլինի պայքարի մեջ և կտառապի դժվարություններից: Տերն ակնկալում է, որ մենք կպահպանենք մարմնի և ոգու առողջությունը լավագույն ձևով՝ Նրա փառքի, Նրան ծառայության և մեր սեփական գոհության համար: Այս ոլորտում ևս Սուրբ Հոգով լցվածությունը հնարավոր չէ փոխարինել: Երբ Հիսուսը Հոգով ապրում է մեզանում, Նա դառնում է մեր «*բժիշկը*» (Ելից 15.26): Այս բուժումը միշտ լավագույնն է տվյալ մարդու համար և Աստծո փառքի համար: Սա կարող է հարց առաջացնել. Արդյո՞ք աստվածային բժիշկը բուժո՞ւմ է բոլորին:

«Կամբոջացի մի տարեց փախստական կին եկավ Թայլանդի փախստականների ճամբարում գտնվող հիվանդանոցը: Նա կրում էր բուդդայական միանձնուհիի հագուստը: Նա խնդրեց, որ նրան բուժի բժիշկ Հիսուսը, քանի որ նրան պատմել էին Հիսուսի մասին: Նա վստահեց Հիսուսին և բուժվեց մարմնով և հոգով: Երբ կինը վերադառնավ Կամբոջա, այնտեղ նա կարողացավ 37 հոգու նվաճել Քրիստոսի համար»: **91**

Եզեկիա թագավորի հիվանդության ժամանակ Տերը նրան ուղարկեց լուր. *«Ես կբուժեմ ձեզ»* (Բ Թագաւորաց 20:1-11): Բայց ինչո՞ւ Տերը չի բժշկել նրան միայն խոսքով, այլ նշանակեց, որպեսզի թզենի դնի: Հնարավո՞ր է, որ Տերն ակնկալում է, որ մենք մասնակցենք՝ բնական միջոցների կիրառմամբ կամ սննդի, ֆիզիկական վարժությունների և հանգստի ռեժիմների կիրառմամբ: Ինչո՞ւ Աստված չբուժեց Պողոսին և թողեց «իր մարմնում խայթը»: Պողոսն ինքն ասում է՝ *«որ յայտնութիւնների առաւելութեամբը չ՚հպարտանամ»* (Բ Կոր. 12:7-10): Սակայն Է. Ուայթը ասում է. «Աստծո Հոգու ազդեցությունը լավագույն դեղամիջոցն է, որը կարող է ստանալ հիվանդ տղամարդը կամ կինը: Երկինքի մթնոլորտը ինքնին առողջություն է պարքևում, և որքան ավելի խորը գիտակցվի երկնքի մթնոլորտի ազդեցությունը, այնքան ավելի հավաստի կլինի հավատացյալ հաշմանդամի վերականգնումը»: **92**

Ուշագրավ և նշանակալի է այն, ինչ գրել է մի գործարար մարդ: Նա պատմեց, որ առողջության վերաբերյալ բոլոր այցելած սեմինարները նրան ոչ մի օգուտ չեն բերել: Սակայն, երբ նա սկսեց ամեն օր աղոթել Սուրբ Հոգու համար, նա լիովին անցավ է առողջ ապրելակերպի և բուսական դիետայի: **93** Մի՞թե դա ցույց չի տալիս, որ Սուրբ Հոգով լցվելը մոտիվացնում և զորացնում է՝ տալով հնարավորություն զգալ առողջ ապրելակերպ վարելու ուրախությունը:

Մի քույր կարդաց այս փորձառությունը: Նա գրել է. «Շնորհիվ նրան, որ լիակատար նվիրվեցի Հիսուսին՝ Աստված մի ակնթարթում ամբողջովին փոխեց իմ կյանքը: Նվիրման աղոթքից հետո հաջորդ առավոտը գնացի խոհանոց, կանգնեցի սուրճի մեքենայի մոտ, գլուխս թափահարեցի և ինքս ինձ ասացի. «Ո՛չ, այլևս ես սուրճ չեմ խմելու»:

---

91 Author unknown, Our Daily Bread – Worship book (RBC Ministries), 26. Nov. 1993

92 E.G. White, Medical Ministries (1932) p.12.3

93 Email from 7.3.2013

Նախկինում դա պարզապես անհավատալի կլիներ է, քանի որ, երբ ես փորձում էի թողնել սուրճը խմելը, հինգ օր ունենում էի սարսափելի գլխացավեր՝ այսպես կոչված՝ մաքրման սինդրոմը: Այս անգամ ես նույնիսկ չեի էլ մտածում, թե ինչ հետևանքներ դա կունենա ինձ համար: Ես պարզապես վստահ էի, որ այլևս չունեմ սուրճ խմելու ցանկություն: Այսօր ես սուրճի հանդեպ ոչ մի հակում չունեմ:

94 Սա նրա կյանքի բազմաթիվ փոփոխություններից միայն մեկն էր: (Բոլոր նրանց, ովքեր ցանկանում են հաղթահարել ծխախոտային եւ ալկոհոլային կախվածությունը, խորհուրդ ենք տալիս կարդալ Էդուարդ Ռադուլեսկուի «Հավերժ հրաժե՛շտ՝ ծխախոտ» և Է. Ֆոսթերի «Նոր սկիզբ» գրքերը: Դրանցում մանրամասն բացատրում է աղոթքով և խոստումներով փրկվելու ճանապարհը

95)

Սուրբ Հոգով կյանքը մեծապես կնպաստի առողջության ոլորտում բարեփոխումներին: Առողջության մասին տեղեկությունը՝ միացած աստվածային զորության հետ՝ մեծ փոփոխություններ կարան անել: Կալիֆորնիայից՝ «Նոր սկիզբ» ծրագրի ղեկավար Դոն Մակինտոշը ասում է.

«Մեր այսօրվա իրական պահանջարկը՝ պարզապես առողջապահական կրթությունը չէ, մենք արդեն ունենք բավարար գիտելիքներ: Իրականում մեզ պետք է առողջության մասին տեղեկատվությունը, զուգորդված այս սկզբունքները գործնականում կիրառելու ուժի հետ»: **96**

Դոկտոր Թիմ Հոուն ասում է.

«Առողջության մասին տեղեկատվությունը ինքնին դեռևս բժշկական-միսիոներական աշխատանք չէ: Առողջապահական դաստիարակությունն ապահովում է բժշկությունը ոչ ավելի, քան Աստծո օրենքը ապահովում է փրկությունը: Առողջություն կամ փրկություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է զգալ Աստծո փոխակերպող զորությունը»: **97**

Եվ վերջապես, կցանկանայի մի հարցը տալ. «Ի՞նչ կասեք հավատքով բուժման մասին: Հնարավո՞ր է դա արդյոք՝ առանց Սուրբ Հոգով լցված լինելու»: (տես Մարկ. 16:17-18, Հակոբ. 5:14-16)

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՀԻՍՈՒՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԻՆ

Անհնար է նախապատրաստվել Քրիստոսի Երկրորդ Գալուստին (կամ Տիրոջով ննջել)՝ առանց Սուրբ Հոգու միջոցով Հիսուսի հետ սերտ հաղորդակցություններ ունենալուց: Երբ Քրիստոսը ապրում է իմ մեջ Սուրբ Հոգով, ապա ես պատրաստ կլինեմ եմ Նրա շնորհով (այս մասին մանրամասն ասվում է Դենիս Սմիթի *«Հոգու մկրտությունը և երկրի վերջին իրադարձությունները»* բաժնում):

---

94 Email from November 18, 2014 from Sister M.
95 www.7knig.org.
96 Dave Fiedler, D’Sozo, (Remnant Publications), Forward
97 Dave Fiedler, D’Sozo, (Remnant Publications), Forward

Անձնական հարաբերությունները Քրիստոսի հետ

Յիսուսն ասաց. *«Եւ սա է յաւիտենական կեանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. Եւ նորան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիստոսին»:* (Հովհ. 17:3) «Իմանալ» բառը Աստվածաշնչում ավելի խոր իմաստ ունի, քան այսօրվա ամենօրյա օգտագործվող լեզվում: Այն նշանակում է ամբողջական, փոխադարձ և սիրով նվիրվածություն: Իսկ սա հնարավոր է միայն Սուրբ Հոգով կյանքում: Այս միտքը արտահայտված է հետեւյալ մեջբերումով.

«Մենք պետք է կենդանի կապ ունենանք Աստծո հետ: Մենք պետք է Հոգու մկրտության միջոցով հագնվենք վերուստ տրված զորությամբ, որպեսզի հասնենք ավելի բարձր մակարդակի, քանի որ միայն այդ ճանապարհով ենք մենք կարող օգնություն ստանալ: **98** Տասը կույսերի առակում Հիսուսն ասաց հիմար կույսերն. *«Ես քեզ չեմ ճանաչում»*: Ո՞րն էր դրա պատճառը: Յուղի պակասը, որը խորհրդանշում է Սուրբ Հոգու պակասը: (Մատթ. 25:1-13): Մարդիկ, ովքեր խաչեցին Քրիստոսին, ունեին Հին Կտակարանի մեծ իմացություն: Բայց իրենց կեղծ մեկնաբանության պատճառով նրանք չէին փնտրում անձնական հարաբերություններ Հիսուսի հետ:

Արդյո՞ք մենք գիտակցում ենք, որ վերջին ժամանակի սերունդը, վերջին օրերի հանգամանքների բերումով, Աստծո հետ սերտ կապի կարիք կունենա:

Արդարություն հավատքով

Աստծո վերջին ուղերձը մարդկությանը՝ Երեք հրեշտակների ուղերձը, խոսում է «հավերժական ավետարանի» հռչակելու մասին (Հայտն. 14:6, 7): Ո՞րն է այս ուղերձի էությունը, որը պետք է լսի ամբողջ աշխարհը: Դա շնորհքով արդարությունն է՝ միայն Հիսուս Քրիստոսի հավատքով (Եփես. 2: 8-9): Նրանք, ովքեր զորությամբ հրչակում են այս վերջին ժամանակերի լուրը, պետք է իրենք իրենց վրա զգան այդ լուրի զորությունը: Նրանք պետք է իմանան և զգան թե ինչ է նշանակում արդարությունը միայն Հիսուսի՝ որպես ներողի և մեղքից փրկագնողի՝ միջոցով: Դա հնարավոր է միայն Սուրբ Հոգով լցված կյանքում, քանի որ Սուրբ Հոգու միջոցով է Հիսուս Քրիստոսը հնարավոր դարձնում մեր հնազանդությունը: Հիսուսի մեր մեջ լինել-չլինելը դրսևորվում է Աստծո բոլոր պատվիրաններին հնազանդվելով: Երկիրը կլուսավորվի այս լուրից (Հայտն. 18:1):

Սեր ճշմարտության հանդեպ

Ի՞նչ պտուղներ են երեվում մեր այսօրվա կյանքում՝ **ճշմարտության հանդեպ սիրո, Աստծո Խոսքի ուսումնասիրման և մեր կյանքում ճշմարտության իրականացման** առումով: 2 Թես. 2:10 ասում է, որ *«Եւ անիրաւութեան ամեն խաբեբայութիւններով կորուսեալների մէջ. Փոխանակ նորա որ ճշմարտութեան սէրը չ՚ընդունեցին որ ապրեն»*:

---

98 E.G. White, Review and Herald, April 5, 1892

Նրանք, ովքեր սրտում ունեն սեր ճշմարտության **հանդեպ,** չեն ընկնի մոլորության մեջ: Ինչպե՞ս ենք ստանում այս սերը: Մենք կարող ենք ունենալ այն միայն այն դեպքում /ժամանակ/, երբ Հիսուս Քրիստոսը Սուրբ Հոգու միջոցով բնակվի մեր մեջ: Հռոմ. 5:5-ում ասվում է, որ Սուրբ Հոգով է մեր սիրտը լցվում սերով: Եֆ. 3:17-ում ասվում է, որ մենք *"սիրով արմատ գցած եւ հաստատուած լինիք"* Սուրբ Հոգու միջոցով: Հովհաննես 16.13-ում Սուրբ Հոգին կոչվում է *«ճշմարտության հոգի»*: Սա մեզ պարզ ցույց է տալիս, որ ճշմարտության հանդեպ սերը ունենալու համար անհրաժեշտ է լինել հոգևոր քրիստոնյա: Արդյո՞ք այսօր մենք խնդիրներ չունենք՝ ճշմարտության, Աստծո խոսքի, մարգարեական ոգու գրվածքների հանդդեպ սիրո առումով: Մտածեք մեզ ապագայում սպասվող ժամանակների մասին: «Միայն նրանք, ովքեր Սուրբ Գրքերի ջանասիրաբար աշակերտներ են եղել, և ովքեր սեր են ստացել ճշմարտության հանդեպ, կփրկվեն հզոր մոլորությունից, որը կգրավի աշխարհը: Արդյո՞ք Աստծո ժողովուրդն այժմ այդքան ամուր է կանգնած Նրա խոսքի մեջ, որ չի զիջում գայթակղություններին»: **99**

Աստված չի հարցնում, թե արդյոք մենք գիտենք ճշմարտությունը լրիվությամբ, այլ հարցնում է, թե արդյոք մենք սիրում ենք այդ ճշմարտությունը:

ՀՈԳՈՒ ՊՏՈՒՂԸ, ԹԵ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԵՐԸ:

«Սուրբ Հոգու ազդեցությունը՝ Քրիստոսի կյանքն է հոգու մեջ: Մենք չենք տեսնում Քրիստոսին, և չենք խոսում նրա հետ, բայց նրա Սուրբ Հոգին ամենուր մեզ հետ է: Այն գործում է բոլոր նրանց միջոցով, ով ընդունում է Քրիստոսին: **Նրանք, ովքեր գիտեն Հոգու ներկայության մասին, բացահայտում են Հոգու պտուղները**. . . » **100**

Գաղ: 5:22. *«սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հավատք, հեզութիւն, ժուժկալութիւն»:* Եֆ. 5:9. *«բարութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն»:*

Գալ: 5:16-21-ը ցույց է տալիս մեզ, որ մեղքի ուժը մեր մեջ կկոտրվի Սուրբ Հոգու միջոցով:

*«Հոգով գնացէք, **և մարմնի ցանկութիւնը չէք կատարիլ**: Որովհետեւ մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, եւ հոգին մարմնին հակառակ. Եւ սորանք իրար հակառակ են, որ մի գուցէ այն որ դուք կամենում էք՝ այն անէք: **Բայց եթէ Հոգուց էք առաջնորդվում, օրէնքի տակ չէք.** (Տե՛ս նաև Հռոմ. 7:23; 8: 1): Եւ յայտնի են մարմնի գործերը, որ են՝ շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիճութիւն, Կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւններ, կռիւներ, նախանձներ, բարկութիւններ, հակառակութիւններ, երկպառակութիւններ, բաժանմունքներ, Չար նայուածներ, սպանութիւններ, արբեցութիւններ, անառակութիւններ, եւ ինչ որ սորանց նման են. Որ առաջուց ասում եմ ձեզ, ինչպէս էլ առաջուց ասում էի, թէ այսպիսի բաներ գործողներն Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգիլ (Գաղ. 5:19–21):*

---

99 Է. Գ. Ուայթ, «Մեծ պայքար», (1911), էջ. 625.3

100 Editor Francis D. Nichol, Adventist Bible Commentary Vol. 6 (Hagerstown, 1980), p. 1112

ՀՈԳԵՎՈՐ ՊԱՐԳԵՎՆԵՐ

«Հոգեւոր պարգեւների տակ մենք հասկանում ենք Սուրբ Հոգու գործողությամբ տրված այն պարգեւները, որոնք թվարկված են Ա Կոր. 12:28-ում և Եփես. 4:11-ում՝ առաքյալներ, մարգարեներ, ավետարանականներ, հովիվներ, վարդապետներ, զօրութիւններ, բժշկութիւններ, օգնութիւններ, կառավարութիւններ, այլ և այլ լեզուներ: Այս պարգեւները «սրբերի լիարժեք ծառայության գործում սպառազինվելու» մաս են կազմում: Նրանք զորացնում են եկեղեցու վկայությանը, օգնում են առաջնորդել և որոշումներ կայացնել»:

101 Սուրբ Հոգին տալիս է նաև այլ տաղանդներ՝ հատուկ նպատակների համար՝ «իմաստութիւնով եւ հանճարով եւ գիտութիւնով եւ ամեն ճարտարութիւնով» (Ելից 31: 2-6) կամ ճարտարապետությունում (1 Մնաց. 28:12, 19):

Երբ մենք ուզում ենք դառնալ Հիսուսի աշակերտներ, մենք պետք է հանձնենք Նրան ինքներս մեզ և այն ամենը, ինչ ունենք: Այսպիսով մեր բոլոր, ինչպես բնածին, այնպես էլ ձեռք բերված տաղանդներն ու ունակությունները, հայտնվում են Նրա տրամադրության տակ: Նա կարող է օժտել մեզ լրացուցիչ տաղանդներով և/կամ հարստացնել մեր բնածին ունակությունները:

Կարո՞ղ ենք ունենալ հոգեւոր պարգեւներ, երբ զգում ենք Սուրբ Հոգու պակասը:

ԱՍՏԾՈ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ Թ՞Ե ՄԱՐԴՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ:

Համաշխարհային եկեղեցում մենք ունենք ժողովրդավարական սկզբունքների վրա ժողովրդավարական կառուցվածք: Բայց դա երբեք ժողովրդավարություն չի համարվել: Քվեարկության միջոցով որոշումների կայացման հիմնական էությունն կայանում է նրանում, որ յուրաքանչյուրն անձամբ լսում է Աստծո ձայնը և քվեարկում դրան համապատասխան: Քվեարկության միջոցով հայտնի է դառնում, թե ինչպես ենք լսել Աստծո ձայնը: Նախքան որևէ խորհրդի նիստերի մասնակցելը՝ մենք, անշուշտ, աղոթում ենք: Հաճախ, նախքան քվեարկության դնելը, հնարավորություն է տրվում անհատական աղոթքի համար, որպեսզի յուրաքանչյուր մարդու համար պարզ դառնա, թե ինչպես է Աստված ցանկանում, որ նա քվեարկե: Նեեմիան ասում է. *«Եւ իմ Աստուածն իմ սիրտը գցեց»* (Նեեմ. 7:5), և Էլեն Ուայթը այսպես է մեկնաբանում է Նեեմիայի առաջին գլուխը. «Աղոթքի ժամանակ նրա մտքերում սուրբ նպատակ էր ձևավորվում ...» **102**

Արդյո՞ք մարմնավոր քրիստոնյան կարող է լսել Աստծո ձայնը: Եթե նա գիտակցաբար և ամբողջովին չհանձնվի Տիրոջը՝ ապա նա, անշուշտ, պատասխան չի ստանա (Սաղ. 66:18, Սաղ. 25:12): Երբ ինչ-որ մարմնավոր քրիստոնյա քվեարկում է անկեղծորեն, անելով, ինչպես նա մտածում է, ամենալավը, ապա մարդկայնորեն նա ճիշտ է վարվում: Բայց երբ մարդկային պայմանագրերը ընդունվում են ինքնաբուխ և անխոհեմաբար, ապա դրանք դառնում են մանիպուլյացիայի և մեղքի պատճառ:

Ղեկավարները մեծ ազդեցություն ունեն Աստծո աշխատանքի վրա: Այն հանգամանքը՝ թե՛ առաջնորդող եղբայրներն և քույրերը կանչվել են Աստծո կողմից, և թե՛ նրանք ընտրվել են մարդկային քվեարկությամբ, անշուշտ, կարող է լուրջ հետևանքներ ունենալ:

---

101 Hrsg. Gerhard Rempel, Schlьsselbegriffe adventistischer Glaubenslehre (Hamburg), p. 44
102 E.G. White, Southern Watchman (www.egwwritings.org), March 1, 1904

Աղոթքի մասին գիրք կարդալիս հասկացա, որ կարող ենք խնդրել Աստծուց, որ Նա ցույց տա մեզ այն ճանապարհը, որով մենք պետք է գնանք: (Սաղ. 32:8) Լռության մեջ Աստծու ձայնը լսելը փոխեց իմ ամբողջ կյանքը: Այս փորձի մասին ես պատմում եմ «Բիզնեսի ներկայացուցչից մինչև հովիվ» հոդվածում (հասանելի է միայն գերմաներեն լեզվով): **103** Կա նաեւ Կուրտ Հասելի "Ինչպես կարող եմ ճիշտ որոշումներ կայացնել» լավ քարոզ (նուընպես հասանելի է միայն գերմաներեն լեզվով) **104** Դեռևս կա նաեւ մի խորը քարոզ, որը տարիներ առաջ կարդում էր Հենրի Դրամոնդը. «Ինչպե՞ս կարող եմ իմանալ Աստծո կամքը»: (հասանելի է միայն գերմաներեն լեզվով) **105**

Ահա մի փորձառություն, որը տեղի էր ունեցել 2014 թվականի հոկտեմբերի 23-ին. Ավստրիայի Կարինթիա քաղաքի «Country Life Institute Austria» («Երկրի Կյանքի Ինստիտուտ Ավստրիա») միսիոներական կենտրոնը (TGM-Trainingszentrum fur Gesundheitsmission und Gesundheitszentrum Mattersdorferhof) բախվեց որոշման. անհրաժե՞շտ է կառուցել նոր մասնաշենքեր, թե ոչ: «Կողմ» և «դեմ» բազմաթիվ փաստարկներ կային: Գլխավոր հարցը էր՝ որն է Աստծո կամքն այս հարցում:

Մենք այլևս չեինք քննարկում կողմ և դեմ փաստարկները, այլ աղոթում էինք տասն օրվա ընթացքում, որպեսզի Տերը նախապատրաստի մեզ լսելու Իր ձայնը, և որ Նա տա մեզ Իր պատասխանը հոկտեմբերի 23-ի աղոթքի ժողովին (Newstart-ի հերթափոխի մեկնելուց հետո), թե արդյոք պետք է կառուցել այս նոր շենքերը:

Աղոթքի ժողովին մասնակցել է ավելի քան 20 մարդ:

Ընդհանուր աղոթքներից հետո՝ բոլորը լռությամբ խոնարհվեցին Աստծո առջև, խնդրելով, որ Նա անձամբ ասի յուրաքանչյուրին, թե արդյոք պետք է կառուցել, թե ոչ: Որոշվեց կիսվել Աստծուց տրված այդ անձնական պատասխաններով հետևյալ կերպ. մի կտոր թղթի վրա նրանք՝ ովքեր ստացել էին պատասխան, որ պետք է կառուցել, գրում են "+", նրանք՝ ովքեր ստացել էին պատասխան, որ պետք չէ կառուցել, գրում են "-", նրանք, ովքեր չեն ստացել պատասխան, գրում են "0", նրանք, ովքեր վստահ չեն պատասխանի մեջ, գրում են "?" մեկ այլ նիշի հետ: Արդյունքը՝ Աստծո հրաշալի առաջնորդության նշան էր. ստացանք 14 «+» (դրանցից 4-ը «+?»), 6 «0» և 4 դատարկ թերթիկ: Կային նաեւ 2 պատասխաններ, որոնք անհասկանալի էին և հաշվի չեն առնվել: Այսպիսով, Աստծո առաջնորդությունը՝ որ մենք պետք է կառուցենք շատ պարզ էր: Ես համոզված եմ, որ վերջին օրերին մենք ավելի ու ավելի շատ կփնտրենք Աստծո առաջնորդությունը:

Դա ցույց է տալիս նաև Հովել 2:28-29-ը: Է. Գ. Ուայթը մեկնաբանում է. «Մենք պետք է անհատապես լսենք, թե ինչ է Տերը ասում մեր սրտին: Երբ բոլոր այլ ձայները լռում են, և մենք հոգու հանգստությամբ կանգնած ենք նրա առջեւ, հոգու լռությունը ավելի հստակ է դարձնում Աստծո ձայնը: Նա ասում է մեզ. «Դադարեցէք եւ ճանաչեցէք, որ ես եմ Աստուած»: Սաղմոս 46:10 **106**

---

103 www.gotterfahren.info – Gott verandert Leben – Vom Prokurist zum Prediger

104 www.gotterfahren.info – Wege zum Ziel: Gott erfahren – Gottes Botschaftfur unsere Zeit – Thema Nr. 11

105 Missionsbrief.de – Predigten lesen – Henry Drummond: Wie erkenne ich den Willen Gottes? (Deutsch und Englisch)

106 Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը» (1898), էջ. 363.3

ԳՈՒՄԱՐՆԵՐ

Ինչ տարբերություն կա հոգևոր եւ մարմնավոր քրիստոնյաների միջեւ փողի ձեռքբերման և տնօրինելու հարցում: Մենք մեզ համարում ենք որպես մեր ռեսուրսների տերե՞ր, թե՞ որպես Աստծո կառավարիչներ: «Փողի ու ցուցադրականության հանդեպ սերն վերածել են այս աշխարհը գողերի ու ավազակների որջ: Սուրբ Գրքերը նկարագրում են, թե ինչպես Քրիստոսի Երկրորդ Գալուստից անմիջապես առաջ կգերիշխեն ժլատությունն ու ագահությունը»: **107**

ԱՍՏԾՈ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆ ԱՍՏՎԱԾԱՎԱԽ ՄԱՐԴԿԱՆՑ

Աստծո հրեշտակները պաշտպանում են աստվածավախ մարդկանց: *«Տիրոջը հրեշտակը բանակ է շինում նորանից վախեցողների չորս կողմովը եւ փրկում է նորանց»*: (Սաղմոս 34:7) «Քրիստոսի յուրաքանչյուր հետևորդի նշանակվում է պահապան հրեշտակ: Այս երկնային պահապանները պաշտպանում են արդարներին ամբարիշտների սպառնալիքից»: **108** Երբ խոսքը գնում է աստվածավախ՝ Քրիստոսի հետևորդների և Աստծո հովանու ներքո գտնվող արդար մարդկանց մասին, արդյո՞ք դա նշանակում է, որ դա վերաբերում է նրանց, ովքեր իրենց քրիստոնյա են համարում: Արդյո՞ք դա վերաբերում է նաև նրանց, ովքեր իրենց կյանքը ամբողջությամբ չեն հանձնել Աստծուն: Դա ճիշտ է երեխաների նկատմամբ, քանի որ Հիսուսն ասաց Մատթ. 18:10. *«Զգոյշ կացէք, որ այս փոքրներից մէկին չ՚անարգէք. Որովհետեւ ասում եմ ձեզ, որ թ նորանց հրեշտակներն երկնքումը միշտ ժ տեսնում են իմ Հօր երեսը որ երկնքումն է»*: Դավիթը՝ ով իր կյանքը լիովին վստահել էր Աստծուն գիտեր, որ հիմք չունի վախենալու: Նա ասաց. *«Տէրն է իմ լոյսը և իմ փրկութիւնը, ես ումի՞ց պիտի վախենամ. Տէրն է իմ կեանքի զօրութիւնը, ես ումի՞ց պիտի սարսափիմ:»* (Սաղմոս 27: 1) (Ես խորհուրդ եմ տալիս, որ կարդաք «Մեծ պայքար» գրքի 31-րդ գլխում բարի հրեշտակների ծառայության վերաբերյալ բաժինը: Դա մեծ ուրախություն է յուրաքանչյուր Աստծո զավակի համար):

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՏՔԵՐ

Մենք անդրադարձանք միայն մի քանի ոլորտների: Կան կյանքի և հավատքի շատ այլ ոլորտներ, որոնք դեռ կարելի է ուսումնասիրել: Նրանց բոլորի համար ճշմարիտ է հետևյալը.

Երբ հումա ուսումնասիրում ենք տարբերությունները, ապա չկա մի ոիորտ, որը չի պարունակում այն ճշմարտությունը, որ կյանքը ապրել Սուրբ Հոգով՝ դա մեծ առավելություն է: Եվ ընդհակառակը, չկա մի ոլորտ, որտեղ առանց Սուրբ Հոգու չենք ունենա մեծ անհաջողություններ: Մի՞թե սա մեզ համար չպետք է լինի մեծ շարժառիթ՝ ամեն օր մեր կյանքը նվիրելու Աստծուն և խնդրելու, որ լցված լինենք Սուրբ Հոգով:

---

107 Է. Գ. Ուայթ, «Մարգարեներ եվ թագավորներ» (1917), էջ. 651.1
108 Է. Գ. Ուայթ, «Մեծ պայքար», (1911), էջ. 512.2

«Մի քանի տարի առաջ Տոկիոյի օդանավակայանից մեկնեց «Բոինգ-707»-ը, որն ուղևորվում էր Լոնդոն: Վերելքը գերազանց անցավ: Երկինքը պարզ էր և արևոտ: Շուտով ուղևորները տեսան ճապոնական հայտնի Ֆուջի լեռը: Հանկարծ օդաչուի մտքովն անցավ շրջի լեռան շուրջը, որպեսզի ուղևորները վայելեն այդ հազվագյուտ տեսարանը:

Նա շեղվեց թռիչքի նշանակված կուրսից և անցավ վիզուալ թռիչքի: Այս վիզուալ թռիչքի ընդացքում օդաչուն մնաց առանց ցամաքային անվտանգության հսկողության կենտրոնի կառավարման և լիովին կախված էր նրանից, թե ինչ է տեսնում: Օդաչուն տեսնում էր, որ սարը իմթնաթիռի տակ շատ մոտ էր: Ինքնաթիռի ալտիմետրը ցույց էր տալիս 4000 մետր բարձրությունը: Այն՝ ինչը նա չեր կարող տեսնել՝ աշնանային քամիներն ու պոռթկումները էին, որոնք մոլեգնում էին Ֆուջի լեռան շուրջը: «Բոինգ-707»-ը չէր կարող դիմակայել այդ քամիներին: Ինքնաթիռը օդում կոտրվեց, կործանվեց և բոլոր ուղեւորները զոհվել էին»: **109**

Մարմնավոր քրիստոնյան ապրում է «տեսողական թռիչքի» ռեժիմում: Նա բոլոր որոշումները կայացնում է ինքնուրույն: Եվ չնայած լավագույն մտադրություններին, նա հաջողության չի հասնում: Հոգևո՛ր քրիստոնյան ապրում է Սուրբ Հոգու առաջնորդության ներքո՝ Տիրոջ հետ հավատարիմ և սիրալիր հարաբերությունների մեջ: Տերը նրան կբերի անվտանգ նպատակակետ:

Աղոթք. Մեր Երկնավոր Հայր, շնորհակալ ենք, որ Սուրբ Հոգու միջոցով մեր մեջ բնակվող Հիսուսը ունի այդպիսի դրական ազդեցություն մեր և մեր աշխատանքի վրա: Խնդրում եմ, ավելի բացիր մեր աչքերը, որպեսզի ես ավելի լավ տեսնենք Սուրբ Հոգու աշխատանքը: Խնդրում եմ, տուր մեզ կյանքի այս լիարժեքությունը, որը Հիսուսը ցանկանում է տալ մեզ Իր Հոգով: Խնդրում եմ՝ օգնիր ինձ, հաջորդ գլուխը ընթերցելիս,գտնել այս խնդրի լուծման բանալին և այն գործնականում կիրառել: Շնորհակալ եմ: Ամեն:

---

109 Kalenderzettel February 17, 1979 by Reinhard Petrik

ԳԼՈՒԽ 5

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈՐՁԻ ԲԱՆԱԼԻՆ

Ինչպե՞ս կարող եմ իրականացնել Աստծո ծրագիրը ինձ համար: Ինչպե՞ս կարող եմ աղոթել, որ վստահ լինեմ, որ լցված եմ Սուրբ Հոգով:

ԱՂՈԹՔԸ ԵՎ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ ԼՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Կարևոր է, որ շարժվենք այդ ճանապարհով հավատքով և հավատքով խնդրենք Սուրբ Հոգի: Դա նշանակում է, որ Սուրբ Հոգու մասին աղոթելուց հետո մենք պետք է վստահենք և հավատանք, որ Տերն արդեն պատասխանել է մեր աղոթքին և տվել է մեզ Սուրբ Հոգի:

Գաղ. 3:14-ն ասում է. «*... որ մենք Սուրբ Հոգու խոստմունքն* ***ընդունենք հաւատքով***»: Մեկ այլ թարգմանության մեջ ասվում է. «*... Որպեսզի մենք ստանանք Սուրբ Հոգու խոստմունքն՝* ***հավատալով Քրիստոսին***»:

Աստված մեզ մեծ օգնություն է տվել, որպեսզի մենք կարողանանք համարձակորեն վստահենք մեր Երկնային Հորը: Մենք այն անվանում ենք **«աղոթք խոստումներով»**:

ԽՈՍՏՈՒՄՆԵՐՈՎ ԱՂՈԹՔ

Նախ, ահա մի օգտակար օրինակ. Եկեք ենթադրենք, որ իմ երեխան դպրոցում լավ չի սովորում ֆրանսերենը: Ես ուզում եմ խրախուսել իմ երեխային քրտնաջան սովորել այդ լեզուն: Ուստի նրան խոստանում եմ՝ եթե նա լավ ավարտական գնահատական ստանա, ես նրան կտամ 20 դոլար: Երեխան սկսում է սովորել ջանասիրաբար: Ես նույնիսկ օգնում եմ նրան և, ի վերջո, նա ստանում է լավ գնահատական: Ի՞նչ է տեղի ունենում հետո: Երբ երեխան դպրոցից տուն է վերադառնում և դեռ մուտքի դռնով անցնելիս, նա բարձրաձայն գոչում է. «Հայրիկ, 20 դոլա՛րս»: Ինչո՞ւ է նա այդքան վստահ, որ կստանա 20 դոլար: Քանի որ խոստումը տրված էր, և նա կատարեց դրա պահանջները: Ի դեպ, դա այսօր միանգամայն նորմալ է մարդկանց մեծամասնության համար:

Բայց միանգամայն հնարավոր է, որ այդ պահին ես չունենամ 20 դոլար: Կարո՞ղ է պատահել, որ Աստված չունենա այն, ինչ խոստացել է: Իհարկե՛ ոչ:

Կամ կարող է պատահել, որ ես հետ վերցնեմ իմ խոստումը, ասելով. «Ես կարդացի կրթությանը վերաբերվող մի գրքում, որ երեխաներին չպետք է մոտիվացնել փողով սովորել: Այնպես որ, ես չեմ կարող քեզ տալ 20 դոլար»: Արդյո՞ք հնարավոր է, որ Աստված հետագայում մտափոխվի: Անհնա՛ր է:

Այսպիսով, երբ մենք ունենք Աստծուց խոստում և կատարել ենք դրա պայմանները՝ մնում է այդ դեպքում միայն մեկ տարբերակ, որ մենք կստանանք խոստացվածը:

Իր խոստումների միջոցով Աստված ցանկանում է խրախուսել մեզ շարժվել որոշակի ուղղությամբ – այդ թվում՝ ստանալ Սուրբ Հոգին, որը մեզ կտա Աստծո զորությունը: Նա ցանկանում է, որ մեզ համար հեշտ դարնա Նրան վստահելը: Վստահությունը հավատքի հիմքն է:

Այժմ եկեք կարդանք աստվածաշնչյան մի քանի կարևոր համարներ Հովհաննես 5:14-15-ից՝ խոստումներով աղոթելու մասին.

> *«Եւ սա է այն համարձակութիւնը որ ունինք դէպի նորան, **թէ ինչ որ նորա կամքի պէս խնդրում ենք, լսում է մեզ**»:*

Աստված տալիս է ընդհանուր խոստում այն մասին, որ Նա պատասխանում է իր կամքին համապատասխանող աղոթքներին: Աստծո կամքը արտահայտված է պատվիրաններում և խոստումներում: Մենք կարող ենք մեր աղոթքներում ապավինել նրանց: Այնուհետեւ, 15-րդ համարում շարունակվում է.

> *«Եւ եթէ **գիտենք** թէ լսում է մեզ, ինչ որ խնդրում ենք, **գիտենք որ առնում ենք մեր խնդրուածքներն, որ խնդրեցինք նորանից**»:*

Մեկ այլ թարգմանության մեջ ասվում է.

> *«Եթե մենք գիտենք, որ Աստված լսում է այն, ինչ մենք խնդրում ենք, **մենք գիտենք, որ ունենք այն**»:*

Ի՞նչ է դա նշանակում: Մեր աղոթքները՝ Աստծո կամքին համապատասխանող, **ստանում են պատասխան հենց նույն պահին**, երբ մենք բերում ենք նրանց Աստծուն: Բայց զգացմունքորեն մենք սովորաբար ոչինչ չենք նկատում: Պատասխանը մենք ստանում ենք հավատքով, այլ ոչ թե զգացմունքներով: Զգացողությունները կգան ավելի ուշ:

Նիկոտինային եւ ալկոհոլային կախվածությունից տառապող մարդկանց հետ աղոթելիս՝ ես հասկացա, որ այն պահին, երբ նրանք աղոթում են կախվածությունից ազատվելու համար, նրանք ոչինչ չեն նկատում: Նրանք պատասխանը ստանում են հավատքով: Բայց մի քանի ժամ անց նրանք նկատում են, որ այլևս ձգտում չունեն ծխախոտի կամ ալկոհոլի նկատմամբ: Այս պահին նրանք արդեն ստանում են իրենց աղոթքի **գործնական** պատասխանը:

Հիսուսն ասաց Մարկոս 11:24-ում. *«Սորա համար ասում եմ ձեզ թէ Ամեն ինչ որ աղօթք անելով խնդրէք, հաւատացէք թէ **կառնէք**, եւ կլինի ձեզ»*:

Է. Գ. Ուայթն ասում է. «Մենք կարիք չունենք փնտրելու որևէ օրհնության արտաքին վկայություն: Պարգևը խոստումի մեջ է, և մենք կարող ենք շարունակել մեր աշխատանքը, վստահ լինելով, որ այն, ինչ Աստված խոստացել է, նա կարող է անել, և որ այն պարգևը, **որ մենք արդեն ունենք, կիրագործվի, երբ մենք նրա կարիքն կունենանք ամենից շատ»**: **110**

Այսպիսով՝ մենք չպետք է փնտրենք արտաքին ապացույց: Սա, անշուշտ, ներառվում է նաև հուզական փորձի որոնում: Ռոջեր Մորնյեն գրում է. «Հոգիները կխրախուսեն մարդկանց լսել ավելի շատ իրենց զգացմունքները՝ քան թե Քրիստոսի և Նրա մարգարեների Խոսքերը: Չկա դրանից ավելի հեշտ ապահով միջոց, որով հոգիները կարող են վերահսկել մարդկանց կյանքը, քնդ որում մարդիկ անգամ չեն գիտակցում, թե ինչ է տեղի ունենում»: **111**

Խոստումներով աղոթքը բացում է Աստծո գանձարանը մեզ համար: Մեր սիրող Երկնային Հայրը պատրաստ է թափել մեզ վրա անհամար հարստություններ: «Նրանք (աշակերտները) կարող են շատ բան ակնկալել, եթե հավատք ունենան նրա խոստումների հանդեպ»: **112**

ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՈՒ ԽՈՒՄԲ

Միևնույն ժամանակ, կարևոր է հստակ տարբերակել աստվածաշնչյան խոստումները. «**Հոգևոր խոստումները**՝ մեղքի թողության համար, Սուրբ Հոգու համար, Իր աշխատանքը կատարելու զորություն ստանալու համար՝ **միշտ հասանելի են** (տես Գործք 2.38, 39): Բայց ժամանակային օրհնությունների խոստումները, նույնիսկ սովորական կյանքում խոստումները՝ տրվում են պայմաններով, ինչպես Աստծո նախախնամությունը տեսնում է լավագույնս»: **113**

Օրինակ՝ Ես. 43:2 ասվում է. *«Երբոր գնաս կրակի միջովը, չես այրուիլ, եւ բոցը քեզ պիտի չվառէ»*: Աստված այս խոստումը հրաշալի կերպով պահեց կրակե վառարանում գտնվող երեք ընկերների համար (Դան. 3): Սակայն, մյուս կողմից, բարեփոխիչներ Հուսը և Հիերոնիմը այրվեցին Կոնստանսի խարույկում: Ոմանք կարող են ասել, որ նրանց աղոթքները չեն ստացել պատասխան: Կամ՝ նրանք ստացե՞լ են պատասխան, բայց մեզ անհասկանալի եղանակով: Ինչո՞ւ: Պապական գրողներից մեկը այդ նահատակների մահը նկարագրել է հետեւյալ կերպ. «Երկուսն էլ իրենց անընդհատ մտքով պատրաստում էին դիմավորել իրենց վերջին ժամը: Նրանք պատրաստվում էին հրդեհին այնպես, կարծես պատրաստվում էին հարսանեկան տոնակատարության: Նրանք ցավի նույնիսկ ոչ մի աղաղակ չարտասանեցին: Երբ կրակը բարձրացավ, նրանք սկսեցին օրհներգեր երգել, և հազիվ թե կրակի կատաղությունը կարողանար կանգնեցնել նրանց երգը»: **114**

---

110 E.G. White, Education (1903), p. 258.2
111 Roger J. Morneau, A Trip into the Supernatural, Review and Herald 1982, p. 43
112 Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը», (1898), էջ. 668.1
113 Morris L. Venden, 95 Theses on Righteousness by Faith, (Pacific Press 1987), p. 60
114 Է. Գ. Ուայթ, «Մեծ պայքար», (1911), էջ. 109.3 Neander, Kirchengeschichte", 6.Per., 2. Abschnitt, 2. Teil, §69; Hefele „Konziliengeschichte" Bd. VI, S.209 f

Եթե ինչ-որ մեկին այրում են, նրանք կարող են միայն գոռալ: Նրանց պահվածքը ցույց է տալիս, որ Աստված միջամտեց, բայց ոչ այնպես, ինչը հեշտությամբ տեսանելի է մեզ համար: Սա ցույց է տալիս, որ հատուկ խոստումները դեռևս նշանակություն ունեն մեզ համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՄԱՐ

Այժմ մեկ այլ կարեւոր ասպեկտի վերաբերյալ: Երբ աղոթքի պատասխան ենք ստանում խնդրելու պահին, ապա ճիշտ պահն է անմիջապես շնորհակալություն հայտնել Աստծուն պատասխանի համար: **Մեր երախտագիտությունն այս պահին արտահայտում է մեր հավատքն առ Աստված**, որ Նա պատասխանել է մեր աղոթքին, և որ մենք ակնկալում ենք, որ այն կկատարվի, երբ մենք դրա կարիքն ունենք: Որոշ հավատացյալներ նկատում են ինչ-որ բան աղոթելուց անմիջապես հետո: Բայց շատ հավատացյալների համար դա նման է Եղիայի փորձին: Տերը հողմի մեջ չէր, երկրաշարժի կամ կրակի մեջ չէր, այլ մեղմ ու բարակ ձայնձայնով (1 Թագ 19:11-12): Սա նաև իմ փորձն էր:

Երկար ժամանակ անց ես մտածեցի, որ ոչինչ տեղի չի ունենում: Բայց հետո հանկարծ նկատեցի, որ իմ մեջ շատ բաներ են տեղի ունեցել, որոնք ես նույնիսկ չէի նկատել:

ՓՈԽԵԼ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԸ

Սա նշանակում է, որ **այս պահին անհրաժեշտ է փոխել իմ մտածողությունը**. *«... այլ նորոգուեցէք ձեր մտքի նորոգութեամբը...»* (Հռոմ. 12:2):

Հիմա ճիշտ է ասել. "Շնորհակալություն, որ պատասխանեցիր իմ աղոթքին: Շնորհակալություն խնդրանքս արդեն կատարելու համար, շնորհակալ եմ, որ ժամանակին տեսա այս պատասխանը»:

Սա ինքնամանիպուլյացիա չէ: Ինքնամանիպուլյացիան ինքն իրեն համոզելու փորձ է: Երբ ես աղոթում եմ՝ հավատալով խոստումներին, ապա ես աստվածային հիմք ունեմ նման մտածողության համար, քանի որ Տերն ինձ արդեն պատասխանել է հավատքով: Այս դեպքում, եթե ես չեմ փոխում իմ մտածելակերպը, դրանով ցույց եմ տալիս Աստծուն, որ չեմ վստահում Նրան, այլ ավելի շուտ հակված եմ ղեկավարվել զգացմունքներով: Այսպիսի պահվածքով ես Աստծուն ստախոս եմ դարձնում և այդ պատճառով՝ ոչինչ չեմ ստանա:

Կարևոր է նաև, որ ես գործեմ համապատասխանաբար, նույնիսկ այն ժամանակ, երբ ես ոչինչ չեմ նկատում: Աստծո հետ հարաբերություններում միշտ հավատքի տեղ կա: Նա ցանկանում է, որ մենք վստահենք իրեն: Հիշեք Հորդանան գետի հատելու պատմությունը: Քահանաները նախ պետք է մտնեին ջրի մեջ, որպեսզի ջուրը բաժանվեր: Նեեմանը ստիպված էր յոթ անգամ սուզվել ջրի մեջ, մինչեւ բուժվեց:

Գուցե դուք ասեք. «Ես չեմ կարող դա անել: Ես չեմ էլ կարող անգամ պատկերացնել, ինչպես դա անել»: Հիշեք, որ կան շատ բաներ, որոնք մենք չենք կարող բացատրել: Մինչ օրս մենք չգիտենք, թե ինչ է էլեկտրաէներգիան, թեև բոլորս էլ այն օգտագործում ենք: Մինչև հիմա մենք չգիտենք, թե ինչպես են երեխաները սովորում խոսել: Բայց նրանք բոլորը սովորում են դա: «Բնության աշխարհում մենք մշտապես շրջապատված ենք մեր ըմբռնումից վեր հրաշքներով:

Այդ դեպքում պե՞տք է արդյոք զարմանալ հոգևոր աշխարհի թաքնված առեղծվածներին, որոնք վեր են մեր հասկացողությունից»: **115**

Եկեք դիտենք Առակ. 3: 5-6. *«Տիրոջն ապաւինիր քո բոլոր սրտովը, եւ քո հասկացողութեանը մի վստահիր: Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նորան, եւ նա կուղղէ քո ճանապարհները»*: Այստեղ մենք տեսնում ենք Աստծուց տրված հստակ նախադրյալներն, որպեսզի Նա կարողանա ուղղել մեր ճանապարհը: Պայմաններից յուրաքանչյուրը միաժամանակ պատվիրան է: Եթե մենք վստահ չենք, որ կատարել ենք անհրաժեշտ նախապայմանները, ապա կարող ենք աղոթել, որ մեզ ցանկություն տրվի, այն համոզվածությամբ, որ Տերը անմիջապես կպատասխանի մեզ»: ... բայց եթե դուք «պատրաստ եք պատրաստ լինել», Աստված ձեզ համար կկատարի այդ գործը...» **116**

Եվս մեկ փոքր բան, ինչը կարող է օգնել: Արդյո՞ք մենք հասկանում ենք, թե ինչ ենք անում, երբ աղոթում ենք Աստծո խոստումներով, կատարում ենք նախապայմանները, իսկ հետո կասկածում ենք, որ պատասխան կստանանք: Մենք Աստծուն ներկայացնում ենք ստախոս: Ոչ մի պարագայում մենք չպետք է դա անենք: Այս դեպքում աղոթեք այսպես. Տեր, հավատում եմ, օգնիր իմ անհավատությանը: Ապա վստահե՛ք:

Է. Ուայթի «Կրթություն» գրքի «Հավատ և աղոթք» գլխում կա շատ արժեքավոր խորհուրդ խոստումներով աղոթելու վերաբերյալ:

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՀԱՄԱՐ

Կարծում եմ, որ մենք անցել ենք լավագույն նախապատրաստություն աղոթելու՝ Սուրբ Հոգով լցվելու համար: Բայց մենք չպետք է մոռանանք, որ դա կապված չէ Աստծո կողմից մեր կամքը կատարելու պատրաստակամության հետ, այլ ավելի շուտ սովորելու հավատալ Նրա խոստումներին և Նրա հուսալիությանը:

Խոստում Սուրբ Հոգին ստանալու համար

Տերը մեզ հրաշալի խոստումներ է տվել Սուրբ Հոգին ստանալու համար.

Ղուկ. 11:13 *«Արդ եթէ դուք, որ չար էք՝ գիտէք բարի պարգեւներ տալ ձեր որդկանցը, **էլ ո՞րքան աւելի երկնաւոր Հայրը Սուրբ Հոգին կտայ** նորանց, որ ուզում են նորանից»:*

Արդյո՞ք սրանով մեր Երկնավոր Հայրը պարտավորություն չի ստանձնել: Այս հրաշալի խոստման պահանջն այսպիսին է. խնդրե՛ք: Սակայն Հիսուսը չի խոսում մեկ անգամյա խնդրանքի մասին, այլ շարունակական խնդրանքի:

---

115 E.G. White, Education (1903), p. 170.1

116 Է. Գ. Ուայթ, «Հիսուսի լեռան քարոզը» (1896), էջ. 142.1

Այնուամենայնիվ, այստեղ կարևոր է տեսնել համատեքստը: Մենք պետք է կարդանք նաև այլ տեքստերը, որոնք խոսում են նույն բանի մասին, օրինակ.

> ***Գործք 5:32.*** *«Եւ մենք նորա վկաներն ենք այս բաների համար, եւ Սուրբ Հոգին էլ, որ Աստուած իրան հնազանդողներին տուաւ»:*

Այստեղից երևում է, որ պահանջվում է. **հնազանդություն**: Պարզ է դառնում, որ չենք կարող գործել միայն մեկ տեքստի հիման վրա, մենք պետք է դիտարկենք այս խոստումը տարբեր ենթատեքստերում: Դա չի նշանակում ցուցաբերել մեկանգամյա հնազանդություն՝ մեզ համար հաճելի ձևով, այլ հնազանդվել Նրան՝ մեր հրաշալի Քավիչին և ընկերոջը: Հնազանդությունը ուրախություն է բերում: Ամեն առավոտ աղոթեք հնազանդ սիրտ ստանալու համար: Աղոթեք, որ Տերը ձեզ ցանկություն տա անել այն, ինչը Նա է ցանկանում և օգնի ձեզ դա իրականացնել: Սա ստեղծում է լավ նախապայմաններ:

> **Հովհաննես 7:37.** *«Եթէ մէկը ծարաւ է, թող ինձ մօտ գայ, եւ խմէ»*:

Այստեղ խոսքը Սուրբ Հոգի ստանալու ծարավի մասին է : Եթե ծարավ չունեք, կամ գիտակցում եք, որ այն շատ թույլ է, ապա կարող եք աղոթել այդպիսի ծարավ ունենալու համար: Այսպիսի խնդրանքը համապատասխանում է Աստծո կամքով և Նա անմիջապես կտա պատասխան: Եթե մենք խնդրենք այդ մասին մեր հրաշալի Աստծուն, Նա մեր մեջ կառաջացնի «ցանկություն և իրագործում»: Մենք կարող ենք նաև աղոթել՝ Աստծո հետ սերտ հարաբերություններ ունենալու ցանկության համար, Նրան ամբողջ սրտով սիրելու, Նրան ուրախությամբ ծառայելու, Հիսուսի հետ աճող միություն ունենալու ցանկության համար, Նրա շուտով վերադարձի ու Աստծո արքայությունում վերամիավորման համար՝ Աստծո Խոսքը կարդալու և նրանից սովորելու ցանկության համար, ինչպես նաեւ կորստվածներին փրկելու ցանկություն համար :

> **Հովհաննես 7:38-39**. *«Ինձ հաւատացողը, ինչպէս գիրքն ասում է, Նորա փորիցը կենդանի ջրերի գետեր կ՚բղխին: Սա ասեց այն Հոգու համար, որ ընդունելու էին նորա հաւատացողները, որովհետեւ դեռ Սուրբ Հոգին տրուած չէր, որովհետեւ Յիսուսը դեռ չէր փառաւորուած»:*

Այստեղի պայմանն է. **հավատքը՛**: Այս համարից տեսնում ենք, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատը, Աստծո հանդեպ ունեցած վստահությունը՝ կարևոր նախապայման է Սուրբ Հոգին ստանալու համար: Եվ երբ մենք աղոթում ենք խոստումների համաձայն՛ հավատալը շատ ավելի հեշտ է դառնում:

> **Գալ. 5:16.** *«Բայց ասում եմ. Հոգով գնացէք, եւ մարմնի ցանկութիւնը չէք կատարիլ»:*

Իրականում այստեղ տրված է **խոստում**, որն արտահայտված է որպես պատվիրան: Երբ Աստված ցանկանում է, որ ես քայլեմ Հոգով, ապա դա հստակ նշանակում է, որ Նա ուզում է ինձ լցնել Սուրբ Հոգով: Նա նաև ցույց է տալիս մեզ, որ երբ մենք լցված ենք Սուրբ Հոգով, ապա մարմնական ցանկությունների իշխանության տակ չենք: Սուրբ Հոգին կոտրում է մեղքի ուժը մեր մեջ (Հռոմ. 8:1-17, հատկապես հ. 2): Սուրբ Հոգու միջոցով «մարմնի գործերը» մահվան են մատնվում (Հռոմ. 8:13): Դա չափազանց արժեքավոր մի բան է՝ չլինել մարմնի գործերի իշխանության տակ (Գաղ. 5:18-21), այլ Հոգու պտուղները աճեցնել (Գաղ. 5:22):

Մենք կարող ենք համեմատել մեղքի անկարողությունը ներխուժել մեր կյանք, հեռադիտակ հավաքելու տեխնոլոգիայի հետ: Որպեսզի փոշին չընկնի ոսպնյակներ մեջ, սենյակում ստեղծվում է բարձր ճնշում: Այսպիսով, երբ դուռը բացվում է, օդի հոսքը միշտ շարժվում է սենյակից դուրս, իսկ դրսից փոշին չի կարող ներս մտնել: Նմանապես, երբ մենք լցվում ենք Սուրբ Հոգով, *«դուք չեք կատարի մարմնի ցանկությունը»*: (Ավելի մանրամասն այս թեման դիտարկվում է այս գլխի վերջում՝ *«Կարո՞ղ է մարդը հոգևոր մնալ»* բաժնում):

> **Եփես. 3:16-17 և 19** *«Որ իր փառքի հարստութեան պէս տայ ձեզ, որ զօրութեամբ հաստատուիք իր Հոգու ձեռովը ներսի մարդումը: Որ Քրիստոսը հաւատքով բնակուի ձեր սրտերումը. Եւ դուք սիրով արմատ գցած եւ հաստատուած լինիք... որ Աստուծոյ ամեն լիութիւնովը լցուիք:»:*

Գուցե մենք երկար ժամանակ չենք նկատում ուժի որևէ դրսևորում: Դա կարող է տեղի ունենալ այնպես, ինչպես բնության մեջ է: Ձմռանը ծառերը մերկ են, իսկ գարնանը՝ ծածկված: Այս վերակենդանացման գործում ներգրավված են հսկայական ուժեր: Բայց մենք նրանց չենք տեսնում և չենք լսում: Ուղղակի հետո տեսնում ենք արդյունքները: Հենց այդպես էր իմ կյանքում: Ես շնորհակալ եմ Աստծուն, որ նա ինձ առատ ուժ է տալիս:

Եվս մեկ օրինակ: Մի քանի տասնամյակ առաջ իմացանք, որ մեր մարմնում կան էլեկտրական հոսանքներ: Նրանք այնտեղ կան, սակայն մենք տեղյակ չենք դրանցից:

> **Եփես. 5:18.** *«Լցվեք Հոգով» կամ «թող Հոգին ձեզ անընդհատ և առատորեն լցնի»:*

> **Գործք 1:8.** *«Բայց դուք զօրութիւն կ՚առնէք՝ երբոր Հոգին ձեզ վերայ կ՚գայ, եւ իմ վկաները կ՚լինիք... »:*

Աշակերտներին պատվիրված էր սպասել մինչև ուժի գալը: Նրանք պարապ չէին սպասում: «Աշակերտները ջանասիրաբար աղոթում էին, որ ամենօրյա շփման մեջ կարողանան հանդիպել մարդկանց և ասել այն խոսքերն, որոնք մեղավորներին կբերեն Քրիստոսին: Գցելով բոլոր տարաձայնությունները, գերակայության բոլոր ձգտումները, նրանք մտերմացան քրիստոնեական ընկերակցության մեջ»: **118** Մենք կարող ենք նաև աղոթել այս խոստումով:

---

117. Johannes Mager, Auf den Spuren des Heiligen Geistes, (Luneburg, 1999), Seite 101

ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ ՉԿԱ՞

«Մի երիտասարդ տղամարդ խորհուրդ էր փնտրում, քանի որ ուզում էր լցվել Սուրբ Հոգով: Նրա հոգում պայքար էր գնում: Հովիվը հարցրեց նրան. «Արդյո՞ք քո կամքը լիովին հանձնել ես Աստծուն»: «Վստահ չեմ որ ամբողջությամբ»: «Դե, - ասաց հովիվը, - ուրեմն Սուրբ Հոգով լցնելու աղոթելը օգուտ չի տա, մինչև որ քո կամքը ամբողջովին հնազանդեցնեք Աստծուն: Ուզո՞ւմ ես հենց հիմա կամքը հանձնել Աստծուն»: «Ես չեմ կարող», - պատասխանեց նա: «Պատրա՞ստ ես, որ Աստված դա անի քո համար»: «Այո», - պատասխանեց երիտասարդը: Ուրեմն խնդրի՛ Նրան դա անել: Նա աղոթեց՝ «Ով Աստված, ազատիր ինձ իմ կամքից: Ինձ լիովին ենթարկիր քո կամքին: Բացիր քո կամքը ինձ համար: Աղոթում եմ Հիսուսի անունով»: Այնուհետև հովիվը հարցրեց. «Ստացվե՞ց», «Պետք է որ», - ասաց նա: «Ես Աստծուց խնդրեցի այն, ինչը համապատասխանում էր Նրա կամքին, և գիտեմ, որ Նա պատասխանեց ինձ և տվեց այն, ինչ ես խնդրեցի (տե՛ս 1 Հովհ. 5:14,15): Այո, դա տեղի ունեցավ: Իմ կամքը հաղթահարված է»: Այնուհետև հովիվն ասաց. «Հիմա աղոթիր Սուրբ Հոգու մկրտության համար [Սուրբ Հոգով լցվելու համար]: Նա աղոթեց. «Ով Աստված, ինձ հիմա մկրտիր Քո Սուրբ Հոգով: Ես աղոթում եմ Հիսուսի անունով»: Եվ դա տեղի ունեցավ անմիջապես նույն պահին, երբ նա հանձնեց իր կամքը»: **119**

ՄԵԾ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆԱԽՔԱՆ ԵՎ ՀԵՏՈ

Չնայած ես երկար ժամանակ ծանոթ էի խոստումներով աղոթելուն և այն օգտագործում էի հատուկ իրավիճակներում և ունեցել եմ պատասխանած աղոթքների հրաշալի փորձառություններ, ես երկար տարիներ մտածում էի, թե բավական կլինի, որ ես պարզապես աղոթքում խնդրեմ Սուրբ Հոգի, առանց ապավինելու որևէ կոնկրետ խոստումի: Գիտեմ, որ շատերը նույն կարծիքին են: Ես չեմ պնդում, որ դա միանգամայն սխալ է: Սակայն, ետ նայելով իմ անձնական փորձին, կարող եմ միայն ափսոսալ, որ աղոթում էի միայն այդպես, առանց խոստումների: Արդեն մի քանի տարի է, ինչ ես ամեն օր աղոթում եմ Սուրբ Հոգու խոստումով, այնպես որ իմ աղոթքից հետո ես վստահություն ունեմ, որ արդեն լցված եմ Սուրբ Հոգով: 2011 թվականի հոկտեմբերի 28-ի փորձառությամբ ես հասկացա իմ կյանքում մեծ տարբերություն տեղի ունեցավ՝ նախկինում և հետո:

---

118 Acts of the Apostles, 37.1. egwwritings.org
119 Reuben A. Torrey, Der Heilige Geist – Sein Wesen und Wirken (Frankfurt, 1966), p. 150

Այն ծամանակից, որ ես սկսեցի աղոթել խոստումներով, իմ հարաբերություններն Աստծո հետ ավելի մտերմացել են, և Հիսուսն ինձ ավելի մտերիմ և ավելի հարազատ է դարձել: Դա ոչ միայն սուբյեկտիվ զգացողություն է, այլ հիմնավորված է հետեւյալ փաստերի վրա.

* Աստվածաշունչ կարդալիս ես հաճախ նոր ու ոգեշնչող հայտնագործություններ եմ կատարում:
* Գայթակղության դեմ պայքարում ես հաղթող եմ դուրս գալիս:
* Իմ աղոթքի ժամանակը շատ արժեքավոր է դարձել ինձ համար և մեծ ուրախություն է բերում ինձ:
* Աստված պատասխանում է իմ շատ աղոթքներին: * Ես զգուն եմ ավելի շատ ուրախություն և ունեմ «համարձակություն» (Գործք 4: 31գ)՝ ուրիշներին Հիսուսի մասին պատմելու համար:
* Ես ավելի մարդամոտ եմ դարձել իմ ընկերներիս հետ:
* Ես ապրում եմ երջանիկ՝ Աստծո շնորհով և զգում ապահով Իր ձեռքի տակ:
* Դժվար պահերին Տերը հրաշալի կերպով զորացնում և ամրացնում է ինձ:
* Ես հասկացա, թե Տերն ինչ հոգևոր պարգևներ է տվել ինձ:
* Քննադատությունը վերացել է: Ինձ համար տհաճ է լսել, թե ինչպես են ուրիշները քննադատում, այդ դեպքերում ինձ անհարմար եմ զգում:

Փոփոխությունը աննկատ էր տեղի ունեցել: Ես նկատեցի դրանք առաջին անգամ այն բանից հետո, երբ սկսեցի ամեն օր անցկացնել որոշակի ժամանակ աղոթելով Սուրբ Հոգու համար՝ աստվածաշնչյան խոստումների համաձայն: Այդ ժամանակից ի վեր ես այլ տեսակի քրիստոնեությունով եմ ապրում: Նախկինում Աստծո հետ Իմ կյանքը հաճախ խնդիրներով լի և դժվար էր, իսկ այժմ ես ուրախություն և ամրություն եմ զգում:

Ես ցավում եմ իմ անձնական կյանքում բացթողումներ համար՝ Սուրբ Հոգու բացակայության պատճառով, իմ ամուսնական հարաբերություններում և ընտանիքում բացթողումների համար, ցավում եմ բացթողումների համար այն եկեղեցիներում, որտեղ ես ծառայել եմ որպես հովիվ: Երբ ես հասկացա այդ ամենը, ես ներողություն խնդրեցի Տիրոջից:

Ցավոք, ճիշտ է այն, որ մենք չենք կարող որևէ մեկին տանել ավելի բարձր տեղ, քան որ ինքներս ենք: Հարկ է նաև հիշել, որ մեր յուրաքանչյուրի անձնական թերություններն ընտանիքում և եկեղեցում գումարվում կամ բազմապատկվում են:

Ես կուզեի ավելացնել մի քանի խորհուրդ, որպեսզի պաշտպանել ուրիշներին իրենց կյանքում նույն սխալները կատարելուց:

Բ Պետր. 1:3-4-ում ասվում է, որ Հիսուսի հետ մտերիմ հարաբերություններ ունենալով՝ մենք կարող ենք *«....ամենամեծ եւ պատուական խոստմունքների»* միջոցով *«հաղորդակից լինիք աստուածային բնութեանը»:*

Սա նաև նշանակում է, որ Սուրբ Հոգին տրվում է մեզ խոստումով: Խոստումները կարելի է համեմատել բանկային չեկերի հետ: Հաշվետիրոջ կողմից ստորագրված չեկը ներկայացնելիս՝ կարող ենք գումար ստանալ այդ հաշվետիրոջ հաշվից: Որպես Աստծո զավակներ (տես Հովհ. 1.12) մենք մշտապես երկնային գանձարանից կարող ենք որհնություններ ստանալ՝ Հիսուսի կողմից ստորագրած չեկերով (խոստումներով): Անիմաստ կլիներ ներկայացնել մեր սեփական չեկերը, նույնիսկ եթե ունենաինք դրանք: Մեզ պետք են միայն հաշվի տիրոջ կողմից վավերացված չեկերը:

Կա ևս մեկ պատճառ, որը կարող է ոգեշնչել մեզ աղոթել խոստումներով: Աստծո Խոսքում զորություն կա: Ինչո՞ւ Հիսուսը՝ խաչի վրա աղոթել երեք անգամ օգտագործեց սաղմոսներից խոսքերը: Ինչո՞ւ՝ անապատում սատանայի գայթակղություններից պաշտպանվելիս, Նա՝ սատանային ավերվակելու համար մեջբերեց աստվածաշնչյան համարներ (տես Մատ. 4:4,7,10): Քրիստոսն ասաց. *«Ոչ միայն հացով կ՚ապրի մարդ, այլ **ամեն խօսքով**, որ դուրս է գալիս Աստուծոյ բերանիցը»*:

▪ Հիսուսը՝ Արարիչը, գիտեր, որ Աստծո խոսքում զորություն կա: «Աստծո Խոսքի յուրաքանչյուր պատվիրանի և յուրաքանչյուր խոստումի մեջ կա զորություն, նրանց մեջ հենց Աստծո կյանքն է, որի շնորհիվ ցանկացած պատվիրան կարող է կատարվել և ցանկացած խոստում կարող է իրագործվել»:

120 Ի՞նչ հիանալի հայտարարություն է: Աստծո զորությունն ու Նրա կյանքը կան յուրաքանչյուր խոստման մեջ: Երբ աղոթում ենք խոստումներով, մեր աղոթքներում օգտագործում ենք Աստծո Խոսքը: Աստծո Խոսքի մասին գրված է. «Այնպէս էլ պիտի լինի իմ բերանից դուրս եկած խօսքը, նա պիտի պարապ ետ չ՚դառնայ ինձ մօտ» (Եսայ. 55:11):

▪ Այժմ ես նախատեսում եմ միշտ խոստումներով աղոթել Սուրբ Հոգու համար: Խոստումներով աղոթելիս՝ ես գիտեմ, որ Սուրբ Հոգին խնդրելուց հետո ես կստանամ Նրան՝ հիմնվելով Աստծո խոսքում տրված խոստման վրա, որը գրված է Ա Հովհ. 5:15. *«Եւ եթէ գիտենք թէ լսում է մեզ, ինչ որ խնդրում ենք, **գիտենք որ առնում ենք մեր խնդրուածքներն, որ խնդրեցինք նորանից»*:* Երբ ես աղոթում եմ առանց խոստումների, ապա **հուսով եմ**, որ կստանամ պատասխան իմ աղոթքին: Ավելի լավ է այսպիսի աղոթքի համար տրամադրել ժամանակ և օրհնված օր ունենալ, քան երեկոյան չզոջալ կրած անհաջողությունների համար:

Ես մի նամակ եմ ստացել, որում մեծ ուրախությամբ գրված էր. «Ես երբեք չէի մտածում, որ հնարավոր է, որ այդքան մեծ տարբերություն լինի, եթե աղոթեմ Աստծու առաջնորդության համար «իմ սեփական խոսքերով», կամ եթե աղոթեմ աստվածաշնչյան խոստումներով: Խոստումներն ինձ համար միշտ շատ կարևոր են եղել: Ես միշտ հավատացել եմ նրանց, բայց նրանց չեմ կարողացել ամեն օր ապավինել: Իմ կյանքը Հիսուսի հետ դարձել է ավելի խորը, ուրախ, կայուն և հանգիստ: Ես շնորհակալ եմ Աստծուց դրա համար»: **121**

Այդ իսկ պատճառով ես որոշեցի կիսվել մի աղոթքի օրինակով՝ Սուրբ Հոգու խոստումներով: Իհարկե, այն կարելի է կրճատել: Շատ կարևոր է սովորել, թե ինչպես աղոթել անմիջապես Սուրբ Գրքից բառերով: Նաև շատ կարևոր նշանակություն ունի այն, որ խոստումներով աղոթելուց մեր հավատքն այնպես ամրապնդվի, որ ունենանք վստահություն, որ ստացել ենք Սուրբ Հոգին: Մենք ստանում ենք Սուրբ Հոգին, երբ հավատում ենք:

---

120 Է. Գ. Ուայթ, «Քրիստոսի առարկները» (1900), էջ. 38.2
121 Email to H. Haubeil C.S.

ԽՈՍՏՈՒՄՆԵՐՈՎ ԱՂՈԹՔ ՕՐԻՆԱԿ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ ԱՄԵՆՕՐՅԱ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՀԱՄԱՐ

▪ *Հայր մեր Երկնային, ես դիմում եմ քեզ՝ մեր Փրկիչ Հիսուսի անունով: Դու ասացիր. « Սիրտդ ինձ տուր» (Առակ. 23:26): Ես ուզում եմ դա անել հիմա, հնազանդվեցնելով Քեզ այսօր ինքս ինձ և նվիրել Քեզ այն ամենը, ինչ ունեմ:*

122 *Շնորհակալ եմ, որ արդեն պատասխանել ես այս աղոթքին՝ Քո կամքի համաձայն, քանի որ Քո խոսքը ասում է, որ եթե մենք աղոթում ենք Քո կամքով, ապա գիտենք, որ այն արդեն ստացել ենք (1 Հովհ. 5:15): Դու նաև ասացիք, որ Քեզ մոտ եկողին Դու դուրս չեմ հանի (Հովհ. 6:37):*

Հիսուսն ասաց. «Արդ եթէ դուք, որ չար էք՝ գիտէք բարի պարգեւներ տալ ձեր որդկանցը, էլ ո՞րքան աւելի երկնաւոր Հայրը Սուրբ Հոգին կ՛տայ նորանց, որ ուզում են նորանից»: (Ղուկ. 11:13).

▪ *Դու նաև ասացիր, որ կտաս Սուրբ Հոգին նրանց, ովքեր* ***հավատում են*** *Քեզ (Հովհ. 7:38-39), ովքեր հնազանդվում են Քեզ (Գործք 5:32), ովքեր ցանկանում են լցվել Սուրբ Հոգով (Եփես. 5:18) և ովքեր* ***քայլում են Հոգով*** *(Գաղ. 5:16): Դա է իմ ցանկությունը: Խնդրում եմ, կատարիր դա իմ մեջ: Այդ իսկ պատճառով, ես անկեղծորեն խնդրում եմ ձեզ, Հա՛յր, տուր ինձ այսօր Սուրբ Հոգին: Քանի որ այս խնդրանքս համաձայն է քո կամքի, ես շնորհակալ եմ, որ արդեն ինձ տվել ես Սուրբ Հոգին (Ա Հովհ. 5:15): Շնորհակալ եմ, որ միևնույն ժամանակ ստացա Քո աստվածային սերը, քանի որ Քո խոսքն ասում է. «****Աստուծոյ սերը փռուած է մեր սրտերի մէջ Սուրբ Հոգու ձեռովը****»: (Հռոմ. 5:5, Եփես. 3:17) Ես ուզում եմ ասել սաղմոսերգուի խոսքերով.* ***«Ես կսիրեմ Քեզ, Տեր, իմ ուժը»:*** *(Սաղմոս 18:1) Շնորհակալ եմ, որ ես կարող եմ իմ մերձավորներին սիրել Քո սիրով:*

▪ *Շնորհակալ եմ, որ Սուրբ Հոգու միջոցով կոտրվել է իմ մեջ մեղքի ուժը (Հռոմ. 8:13, Գաղ. 5:16): Խնդրում եմ, պահպանիր և պաշտպանիր ինձ այսօր մեղքից և աշխարհի ազդեցությունից, տուր ինձ պաշտպանություն սատանայի հրեշտակներից, փրկիր ինձ գայթակղություններից, պահիր և փրկիր ինձ իմ հին ապականված բնությունից: (Ա Հովհ. 5:18)*

Խնդրում եմ, օգնիր ինձ լինել Քո վկան խոսքով և գործով (Գործք 1.8): Ես գովաբանում եմ Քեզ և շնորհակալ եմ, որ լսել ես իմ աղոթքը: Ամեն:

---

122 «Միայն նրանք, ովքեր կդառնան Քրիստոսի համագործակիցներ, միայն նրանք, ովքեր կասեն. «Տեր, իմ ամբողջ ունեցվածքը և ես ինքս միայն Քոնն եմ”, կճանաչվեն որպես Աստծո որդիներ և դուստրեր»: Է. Գ. Ուայթ, «Դարերի փափագը», (1898), էջ. 523.1

Հիսուսն Ինքը ցանկանում է ապրել մեր մեջ Սուրբ Հոգու միջոցով (1 Հովհ. 3:24, Հովհ. 14:23): Է.Գ. Ուայթն ասում է. «Սուրբ Հոգու ազդեցությունը նկատելի է, երբ Քրիստոսն է ապրում հոգում»: **123** Այն ուժը, որը վերափոխեց Պետրոսին, Պողոսին և շատ-շատ այլ մարդկանց՝ հասանելի է և մեզ: Նա նաև տալիս է մեզ *«Որ իր փառքի հարստութեան պէս տայ ձեզ, որ զօրութեամբ հաստատուիք իր Հոգու ձեռովը ներսի մարդումը»: (Եփես. 3:16)*

Սուրբ Հոգով լցված լինելը՝ ուրախության, ուժի, սիրո և մեղքի նկատմամբ հաղթանակի բանալին է: *«... Որտեղ որ Տիրոջ Հոգին է՝ այնտեղ է ազատութիւն»:* (Բ Կոր. 3:17)

Իմ մի ստացած նամակում ասվում էր հետևյալը. «Եկեղեցու շատ անդամներ ամեն օր աղոթում են երկուսով՝ ինչպես առաջարկված է: Վերջին հինգ ամիսների ընթացքում ես աղոթում էի այդպես իմ ընկերուհու հետ: Առաճընթացը նկատվում է ոչ միայն բնավորության մեջ, այլ նաև տանը, հարաբերություններում, ընտանիքում, հոգևոր առումով և եկեղեցում: Դա դա տեղի է ունենում հանգիստ, բնական ձևով՝ առանց մեծ բախումների: Մենք զարմացած էինք և դիտարկում էինք դա որպես Աստծո մաքրագործման գործընթաց, որը կարող է տարբեր եղանակներով կյանքը դարձնել ավելի հեշտ, քանի որ մենք ավելի ու ավելի ենք մոտենում Աստծուն»: **124**

ԿԱՐՈ՞Ղ Է ՄԱՐԴԸ ՄՆԱԼ ՀՈԳԵՒՈՐ

Այո՛: Եթե մենք թույլ չտանք, որ անհավատությունը զարգանա և մենք շնչենք հոգեպես. «արտաշնչելով» մեր մեղքերը խոստովանելով և «ներշնչելով»՝ ներս թողնելով Աստծո սերն ու ներողամտությունն և վերանորոգվելով Սուրբ Հոգով:

Դա նման է մեր երեխաների հետ հարաբերությունների: Երբ երեխան անհնազանդ է, նա միևնույն է մնում է մեր երեխան: Սակայն մենք զգում ենք, որ դրանից հարաբերությունները խախտվում են: Երբեմն Երեխան անգամ չի կարող նայել մեր աչքերին: Այս խախտումը շտկվում է խոստովանությոինով:

Մարդը կարող է հեռանկարում կրկին մարմնավոր դառնալ: Աստվածաշունչը չի ասում. «մեկ անգամ փրկված, հավիտյան փրկված»: Մեր մեղավոր էությունը դեռ գոյություն ունի: «Առաքյալներից և մարգարեներից ոչ ոք երբեք չի պնդել, որ նա անմեղ է»: **126**

- Բայց Սուրբ Հոգով և Հիսուսի հետ կյանքի միջոցով մեղքի ուժը մեր սրտերում կոտրվում է, այնպես որ մենք կարող ենք ապրել երջանիկ և հզոր քրիստոնեական կյանքով: Հիսուս Քրիստոսի մեջ է. «... որ Աստուածանից մեզ համար եղաւ իմաստութիւն, եւ արդարութիւն եւ սրբութիւն եւ փրկութիւն» (Ա Կորնթ. 1:30): Այս կարևոր թեման ավելի մանրամասն կքննարկվի շուտով:

---

123 Editor Francis D. Nichol, Adventist Bible Commentary Vol. 6 (Hagerstown, 1980), p. 1112
124 Email to Helmut Haubeil: E.S.
125 Helmut Haubeil & Gerhard Padderatz, Gott, Geld & Glaube (Eckental, 2009), p. 97
126 E.G. White, The Acts of the Apostles (1911), p. 561.1

Եթե մենք կրկին դառնանք մարմնավոր՝ հոգևոր կյանքի տևական անտեսման կամ հոգեպես շնչելու անկարողության պատճառով, ապա չպետք է չմոռանանք, որ կարեկցող Քավիչը սպասում է մեզ:

Կարևոր է, որ մենք իմանանք ուղին, ինչպես մենք կարող ենք վերածնվել Աստծո շնորհով և հուսով հավերժ հոգևոր կյանք վարել: Ոչ ոք կարիք չունի մարմնավոր մնալ:

Բայց հիշեք ընդհանրապես այն, ինչ է ասել Ռենդի Մաքսվելը. «Արդյո՞ք մենք կարծում ենք, որ Աստծո եկեղեցու վերակենդանացումը հոգևոր մահից կարելի է իրականացվել առանց ջանքերի»: **127**

Երկրային և երկնային հավերժության առատ կյանքը, մարդկանց փրկությունը և երախտագիտությունը Հիսուսի մեծ զոհաբերությանը՝ արժանի են այդ ջանքերի: Շատ կարևոր է հանդիպել Տիրոջ հետ առավոտյան Նրան երկրպագելու համար: Հենց այդպես էլ Նա կարող է մեզ զորացնել:

Հովհաննես առաքյալի մասին կարդում ենք հետևյալը.

«Օրեցօր նրա սիրտը ավելի ու ավելի էր գրավվում Քրիստոսով, մինչև որ նա իր Տիրոջ հանդեպ սիրո շնորհիվ կորցրեց իր սեփական "ես"–ը: Նրա նեղացող, փառասեր բնավորությունը ենթարկվեց Քրիստոսի իշխանությանը: Սուրբ Հոգու վերակենդանացնող ազդեցությունը վերածնեց նրա սիրտը: Քրիստոսի սիրո զորությունը վերափոխեց բնավորությունը: Սա է Հիսուսի հետ միության արդյունքը: Երբ Քրիստոսը բնակվում է սրտում, մարդու ամբողջ բնույթը վերափոխվում է»: **128**

«Բաց արա իմ աչքերը, որ քո օրէնքի հրաշքները տեսնեմ»: (Սաղմոս 119:18) Շնորհակալ եմ, որ առաջնորդում ես ինձ և կարող եմ ասել. *«Ես ցնծում եմ քո խօսքովը, ինչպէս մէկ շատ աւար գտնող»: (Սաղմոս 119:162)*

---

127 Randy Maxwell, If My People Pray (Pacific Press,1995), p. 158

128 Է. Գ. Ուայթ, «Քայլեր դէպի Քրիստոս» (1892), էջ. 73.1

ԳԼՈՒԽ 6

Ի՞ՆՉ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՄԵԶ ՍՊԱՍՈՒՄ ԱՌՋԵՎՈՒՄ

Անձնական փորձառություններ, ինչպես նաև եկեղեցիների, կոնֆերենցիաների և միությունների փորձառությունները

ՄԻ ԵՂԲԱՅՐԻ ՓՈՐՁԸ

«Վերջին երկու տարիների ընթացքում ես ամեն օր աղոթում եմ, որ Սուրբ Հոգին թափվի իմ կյանքում: Իմ խնդրանքն այն է8, որ Հիսուսն իր Հոգու միջոցով ամեն օր լիարժեք ապրի իմ մեջ: Այս ժամանակաընթացքում Աստծո հետ իմ ուղին պարզապես անհավատալի էր: Գաղատացիս 5-րդ գլխի Հոգու պտուղնեևը իմ կյանքում դարձան ավելի տեսանելի այն ժամանակից ի վեր, երբ ես սկսեցի Հիսուսին խնդրել ապրել իմ մեջ, կատարել Իր կամքը ինձանում և ամեն օր վերածնել ինձ Սուրբ Հոգով: Ես ավելի մեծ ուրախություն եմ ստանում՝ Աստվածաշունչը կարդալով, կիսելով ուրիշների հետ Քրիստոսի մասին ճշմարտությունը և մեծ ցանկություն ունեմ աղոթել ուրիշների համար: Ավելին, իմ ապրելակերպը արմատապես փոխվել է: Այս ամենը ես դիտարկում եմ որպես այն բանի արդյունքն, որ ես ամեն օր փնտրում եմ հաղորդակցություն Աստծո հետ և ամեն օր խնդրում եմ Սուրբ Հոգու մասին»: Ք.Հ. Նա նաև ավելացնում է հետևյալը.

«Ես կոչ եմ անում ձեզ՛ առնվազն վեց շաբաթվա ընթացքում ամեն օր աղոթել՝ որ լցված լինեք Սուրբ Հոգով, և կտեսնեք, թե ինչ կկտարվի»:

ԱՂՈԹՔԻ 40 ՕՐ ՍԵՐԲԻԱՅՈՒՄ

«2010 թվականի սեպտեմբերին մենք թարգմանեցինք և հրատարակեցինք *«40 օր՝ Աղոթքներ և նվիրվածություն՝ երկրորդ գալուստին նախապատրաստվելու համար»* գիրքը: Մենք այն նվիրեցինք մեր միության եկեղեցիների բոլոր անդամին: Այդ 40 օրվա ընթացքում մենք կազմակերպեցինք շաբաթական և ամենօրյա աղոթքի ժողովներ՝ տեղական եկեղեցիներում և եկեղեցու անդամների տներում, որոնց ժամանալ մարդիկ ծոմ էին պահում և աղոթում, որ Սուրբ Հոգին կրկին թափվի:

Երբ դա տեղի ունեցավ, տեղական համայնքներում ձևավորվեց բոլորովին նոր մթնոլորտ: Եկեղեցու պասիվ անդամները դարձան ակտիվ և ավելի էին հետաքրքրվում ուրիշներին ծառայելու: Նրանք, ովքեր տարիներ շարունակ պայքարում էին միմյանց հետ տարբեր հարցերի շուրջ (և նույնիսկ դադարել էին խոսել միմյանց հետ), հաշտվեցին և սկսեցին միսիոներական համատեղ ծրագրեր մշակել:

Այնուհետև, 2010 թվականի հոկտեմբերին անցնող տարեկան խորհրդին ներկայացվեց «Վերածնունդ և բարեփոխումներ» նախաձեռնությունը: Մենք ուրախությամբ ընդունեցինք այն, քանի որ դրա մեջ տեսանք այն շարժման շարունակությունը, որը Աստված արդեն սկսել էր մեր միությունում:

Այդ հանդիպումների ակնհայտ արդյունքներ էին դարձել՝ միմյանց հետ ավելի սերտ համագործակցությունը, միասնությունը և ավելի լավ ըմբռնումը միության ղեկավարների միջև»: **129**

ԱՂՈԹՔԻ 40 ՕՐ ՑՅՈՒՐԻԽՈՒՄ (ՇՎԵՅՑԱՐԻԱ)

«Մեր հովիվն ու ես յուրաքանչյուրս միմյանցից անկախ մի գիրք ստացանք, որի բովանդակությունը մեզ ոգևորեց: Դրա վերնագիրն էր. *«40 օր՝ Աղոթքներ և նվիրվածություն՝ երկրորդ գալուստին նախապատրաստվելու համար»,* Review and Herald Publishing Association, հեղինակ՝ Դենիս Սմիթ: Հնարավոր չէ՝ պարզապես այս գիրքը կարդալ, այնուհետև մի կողմ դնել: Բովանդակությունը փոխեց իմ կյանքը:

Քանի որ Ցյուրիխ-Վոլֆսվինկելում գտնվող մեր եկեղեցին (մոտ 100 անդամ) զգում էր վերածնունդի և աղոթքի կարիք, մենք 2011 թվականի աշնանը նախատեսեցինք «Աղոթքներ և նվիրվածության 40-օրյակը...»: Գրքում տրված էին այդ ծրագիրը անցնելու մանրամասն և արժեքավոր տեղեկություններ, և, բացի այդ, 40 հանդիպումների ամենօրյա ընթերցումներ:

Թեմաները վերաբերում են՝ Սուրբ Հոգով լցված լինելուն, աղոթքին, քարոզին, Հիսուսով ապրելուն և եկեղեցու հոգևոր միասնությանը:

Այսպիսով, մենք սկսեցինք մեր 40-օրյակի ծրագիրը 2011 թվականի հոկտեմբերի 1-ին՝ մեծ սպասումներով և ակնկալիքներով: Բարեբախտաբար, եկեղեցու անդամների մեծ մասը մասնակցեց ծրագրին: Աղոթքի զույգերը ամեն օր հանդիպում էին աղոթքի համար, ամեն օր տեքստային հաղորդագրություններ էին ուղարկում, և մարդիկ ամեն օր աղոթում էին հեռախոսով: Մի խումբ հավաքվում էր երկրպագության և աղոթքի համար ամեն առավոտ ժամը 6-ին:

Մեր 40-օրյակի ծրագիրը դարձել էր մի անմոռանալի փորձառություն: Աստված պատասխանեց մեր շատ աղոթքներին, հատկապես նրանց, որոնք կապված էին միաժամանակ անցկացվող աստվածաշնչյան մարգարեությունների դասախոսությունների շարքի հետ: Այս դասախոսությունները մեծ օրհնություն բերեցին: Մենք ունեցանք բազմաթիվ այցելուներ և 20 մարդ գրանցվեց հաջորդ մարգարեական սեմինարին: (Այն տեղի է ունեցել 2013-ի մարտին: Դրան մասնակցում էին շուրջ 50-60 հյուրեր: 20 տարի է, ինչ Ցյուրիխում այդպիսի բան չի պատահել):

Աստծո Հոգին շարունակական փոփոխություններ էր կատարում մեր եկեղեցում և ուրախ եմ տեսնել, թե ինչպես են մեր փոքր խմբերն սկսում աճել, և ինչպես են եկեղեցու անդամները, ովքեր ցանկանում են աստվածաշնչյան ուսումնասիրություն անցկացնել, գտնում հետաքրքրված մարդկանց:

---

129 M. Trajkovska, Southern European Union, Belgrade, quoted in *www.revivalandreformation.org*

Նրանք, ովքեր մասնակցում էին, այժմ կայուն ցանկություն են հայտնել շարունակել Աստծո Հոգու աշխատանքը: Մենք մեր ամբողջ սրտով ուզում ենք շնորհակալություն հայտնել և փառաբանել Նրան»: Բեատրիս Էգգեր, Ցյուրիխ-Վոլֆսվինկելի ադվենտիստական եկեղեցուց:

ԱՂՈԹՔԻ 40 ՕՐ ՔՅՈԼՆՈՒՄ/ԳԵՐՄԱՆԻԱ

Հովիվ Ժոաո Լոտցենը գերմանա-բրազիլացի է: Նա 38 տարի աշխատել է Բրազիլիայի եկեղեցիներում և հիվանդանոցներում, ինչպես նաև միությունում և Հարավ-Ամերիկյան դիվիզիոնում: 2012 թվականի մարտին անցել է թոշակի: Նա և նրա կինը համաձայնվեցին գալ Քյոլն որպես «Նրա ձեռքի միսիոներներ» և աշխատել պորտուգալական և իսպանական եկեղեցիներում:

«Մենք սկսեցինք Քյոլնում փոքր խնամքի խմբերով, որպեսզի քաջալերենք եկեղեցու մյուս անդամներին և հրավիրենք հյուրերին: Հիմնվելով Բրազիլիայում ունեցած մեր փորձի վրա, Քյոլնում մենք անցկացրինք 40-օրյակի ծրագիրը: Նյութերը հասանելի էին պորտուգալերեն լեզվով:

Պորտուգալախոց, իսպանախոս և գերմանախոս եկեղեցիները ուրախությամբ սկսեցին 40-օրյակի ծրագրին: Մենք ամեն օր աղոթում էինք 100 ընկերների և ծանոթների համար: Այդ մարդկանց անունները գրված էին եկեղեցու գրատախտակի վրա: Մինչ մենք հասանք աղոթքի 30-35-րդ օրվան, մենք այս մարդկանց ասացինք, որ աղոթում ենք նրանց համար և միևնույն ժամանակ նրանց հրավիրեցինք հատուկ հյուրերի համար անցկացվող շաբաթօրյա ծառայության: Այս հատուկ շաբաթօրյա ծառայությանը մասնակցեցին 120 մարդ: Քարոզը վարեց Քրիստիան Բադորեկը՝ Նորդրեյն-Վեստֆալենի անձնական ավետարանչության բաժնի տնօրենը: Հյուրերից ոմանք ուրախությունից լաց եղան, երբ գրատախտակի վրա տեսան իրենց անունները:

Դրանից հետո Բրազիլիայից ավետարանիչ Անտոնիո Գոնկալվեսը անցկացրեց 15 օրյա ավետարանական ծրագիր: Ամեն երեկո նա խոսում էր 1,5 ժամ (թարգմանությամբ): Ծրագիրը վերնագրված էր. «Թող Աստվածաշունչը զարմացնի ձեզ»: Թեմաները առնչվում էին երկրորդ գալստին, ինչպես նաև Դանիելի և Հայտնության մարգարեություններին: Դասախոսություններն ու երգերն ուղեկցվում էին պորտուգալերենից գերմաներեն թարգմանությամբ: Ամեն երեկո կար փոքրիկ երգչախումբ և լավ երաժշտություն: Ամեն երեկո ավարտվում էր կոչով: Մենք շնորհակալ ենք լավ արձագանքների համար: Եկեղեցու անդամները ինտենսիվորեն աղոթում էին, հատկապես 40-օրյակի ծրագրի մասնակիցների համար:

Մեր եկեղեցու սրահը տեղավորում է 80 մարդ: Բայց եկավ ավելի քան 100 մարդ: Հանգստյան օրերին եկեղեցին լեփ-լեցուն էր, իսկ շաբաթվա ընթացքում մոտ 60 մարդ կար: Հյուրերից մշտական 32 հոգի էր այցելում: Սա հանգեցրեց նրան, որ 8 մարդ ընդունեց մկրտություն և ևս 14 մարդ միացան մկրտության նախապատրաստման դասերին: Մինչև տարեվերջ ևս 13 մարդ մկրտվեց:

Մենք ունեցանք բազմաթիվ զարմանալի փորձառություններ: Դժվար էր գտնել թարգմանիչ: Մեզ առաջարկեց օգնել կաթոլիկ ուսուցիչը: Բայց նա քիչ փորձ ուներ Աստվածաշնչից թարգմանելու ոլորտում:

Այնուհետեւ մենք սկսեցինք աղոթել բողոքական թարգմանչի համար: Դրանից կարճ ժամանակ անց մենք ռեստորանում ծանոթացանք մի կնոջ հետ, ով պատմեց, թե ինչպես է նա մեծ ուրախությամբ գերմաներենից պորտուգալերեն թարգմանել հիսունական եկեղեցում: Նա դարձավ ավետարանական ծրագրի մեր թարգմանիչը և նույնպես շուտով մկրտվեց:

Մարիան՝ թարգմանիչը, հարցրեց, թե կարո՞ղ է հրավիրել իր ընկերուհուն՝ Էլիզաբեթին, որը Քյոլնի փոքրիկ (13 հոգանոց) կոլումբիական եկեղեցու ղեկավարն էր: Նա եկավ և իր հետ բերեց իր եկեղեցու անդամներին: Նրանցից երկուսը նույնպես մկրտվեցին: Էլիզաբեթը և նրա ընտանիքը այժմ Աստվածաշնչյան ուսումնասիրությունների դասեր են անցնում:

Եվս մեկ փորձառություն կապված է «Hope Channel» հեռուստաալիքի հետ: Մի գերմանացի կին պատահաբար գտավ «Hope Channel» ալիքը և տպավորված մնաց իր լսածից, այդ թվում նրանով, թե ինչ էր ասվում շաբաթ օրվա մասին: Նա հրավիրեց իր ամուսնուն լսել իր հետ: Ամուսնուն նույնպես դուր եկավ այս լուրը: Մի օր, երբ նրանք գնում էին այցելելու իրենց մորը, նրանք ցանկացան երթևեկել մեկ այլ երթուղով: Ճանապարհին տեսան յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու ցուցանակը: Եվ սրանով նրանց գիտակցեցին, որ դրանք «Hope Channel» հեռուստաալիքի ադվենտիստներն են: Շաբաթ օրը կինը գնաց ծառայության: Այնուհետեւ նա հրավիրեց իր ամուսնուն, և ապա մայրը միացավ նրանց:. Որոշ ժամանակ անց, բոլոր երեքն էլ մկրտվեցին.

Եվս մեկ փորձառություն կապված է գերմանիայից մի ռուս քրոջ հետ: Նա մասնակցել էր 40-օրյակի ծրագրին և աղոթել իր ռուսախոս հարևանների համար: Երբ նա իր հարևաններից մեկին ասաց, որ աղոթում է նրա համար, հարևանը շատ զարմացավ և ասաց, որ փնտրում է եկեղեցի, որը պահում է աստվածաշնչյան շաբաթը: Նա և մի քանի այլ հարևաններ եկան ավետարանական ծրագրին: Նրանցից երկուսը մկրտվեցին:

Մեկ այլ փորձառություն առնչվում է Ժաննա անունով մի կնոջ: Նա եղել է Բրազիլիայուն բապտիստական եկեղեցու անդամ, իսկ այժմ փնտրում էր Քյոլնում պորտուգալախոս եկեղեցի: Նա կապ հաստատեց ադվենտիստական եկեղեցու հետ, անցավ աստվածաշնչյան դասընթացներ և մկրտվեց: Դարձի գալուց հետո նա զանգեց Բրազիլիայում գտնվող իր հարազատներին և ասաց իր հորեղբորը, ով ադվենտիստ է, քանի որ նա էլ էր նույնպես ադվենտիստ: Դա մեծ անակնկալ էր նրա մոր, եղբայրների և քույրերի, և Բրազիլիայի բապտիստական եկեղեցու համար, որի անդամն էր ինքը: Դրանից հետո նրա ընտանիքը Բրազիլիայում այցելեց ադվենտիստական եկեղեցի՝ շաբաթ օրվա մասին ավելին իմանալու համար: Դա հանգեցրեց նրան, որ Բրազիլիայում մկրտվեցին հինգ մարդ՝ նրա մայրը, նրա երկու քույրերն ու այլ հարազատները: Այժմ նա աղոթում է Արգենտինայում բնակվող մեկ այլ քրոջ դարձի գալու համար: Նա ցանկանում է լինել նրանց հետ միասին Աստծո արքայությունում:

Աստծո առաջնորդությամբ մենք շատ այլ փորձառություններ ունեցանք: Առաջին մկրտության ժամանակ մկրտվել է ութ մարդ՝ մեկական Իտալիայից, Գերմանիայից, Պերուից, Բրազիլիայից, Ուկրաինայից, Վենեսուելայից, Կոլումբիայից և Ռուսաստանից:

Աշնանը մենք կրկին ավետարանական հանդիպումներ կազմակերպեցինք, կապված՝ աղոթքի 40-օրյակի ծրագրի հետ: Հանդիպումները անցկացրեցին Ջիմի Կարդոսոն և նրա կինը, որոնք ծագումով Բրազիլիայից են, իսկ այժմ ապրում են ԱՄՆ-ում: Թեպետ ծրագիրը տևեց ընդամենը մեկ շաբաթ, մենք կարողացանք ծրագրի ավարտին մկրտել չորս թանկագին հոգու: Նրանք՝ երեք գերմանացի և մեկ իտալացի, նախկինում էլ էին ուսումնասիրել Աստվածաշունչը:

Երկու մկրտություններն էլ տեղի ունեցան Քյոլնի գլխավոր եկեղեցում, ուր հաճախում են 400 անդամ և կա մի հրաշալի բապտիստերիա:

Մենք շնորհակալ ենք Աստծուց, որ Նա այնքան հիանալի ձևով ապշեցրեց մեզ: Ես համոզված եմ, որ Տերը մեզ համար ավելի շատ անհավանական փորձառություններ է պատրաստել: Խնդրում եմ, հիշեք մեզ ձեր աղոթքներում»: Խոան Լոտզե, Քյոլն, Գերմանիա

Կենսական ընկերակցությունը. «Առաջին անգամ ես պարզապես կարդացի այդ գիրքը (40-օրյակի ծրագիր) ամբողջությամբ: Առաջին իսկ էջից շատ տպավորված էի: Մենք պետք է ոչ միայն աղոթենք ինչ-որ մեկի համար, այլև սիրով հոգ տանենք նրա համար: Ընկերակցությունը այդպես է կենդանի դառնում: Ցավոք, ես նախկինում երբեք նման ընկերակցություն չեմ ընկալել: Դա պարզապես հավատքի մի պոռթկում է: Համոզված եմ, որ դա նույնքան կարևոր է աղոթողի համար, որքան այն մարդու համար, ում համար աղոթում են: Նաև՛ հենց սկզբից համոզեզվեցի, որ դա կամրապնդվի ընկերակցությունը եկեղեցում: Օ՛, հուսով եմ, որ տեղի կունենա այնպիսի ընկերակցություն, ինչպիսին է նկարագրված գրքի վերջին գլուխներում: Ճիշտն ասած, դա ինձ խորապես հուզեց, քանի որ վաղուց էի փափագում նման ընկերակցության համար: Համոզված եմ, որ «Քրիստոսն իմ մեջ է» գիրքը դաստիարակում է մեզ և ազատում մեր սեփական հավակնություններից: Ես կարդացի մի քանի գիրք «Քրիստոսն իմ մեջ է» գրքի մասին, բայց այս գիրքը կարծես, ամենաօգտակարն է: Հավատում եմ, որ այս գրքի շնորհիվ ձեր աղոթքի կյանքը կհզորանա, ընկերակցությունը եկեղեցում կխթանվի և կդարնա ավելի կենդանի: Այս գիրքը հույս է տալիս ինձ, եկեղեցուն և ողջ աշխարհին: Շնորհակալ եմ Աստծուն այս գրքի համար: Հետագայում ես նախատեսում եմ ուսումնասիրել «Աղոթքի 40 օր» գիրքը, աղոթել և այնուհետև տանել այնտեղ, որտեղ Աստված ինձ կուղարկի»:

Մի քանի շաբաթ անց ես այս քրոջից ստացա մեկ այլ նամակ: «Ինչպես գիտեք, սկզբում ես պարզապես կարդացի գիրքը սկզբից մինչեւ վերջ: Բայց երբ սկսեցինք ուսումնասիրել այս նյութերը իմ աղոթքի գործընկերոջ հետ, ես հասկացա, որ դրանք շատ ավելի արժեքավոր են, քան ես կարծում էի: Ես ստացա այն հարցերի պատասխանները՝ որոնք երկար ժամանակ լուծում չեին գտնում: Շնորհակալ եմ Աստծուց իմ աղոթքի գործընկերոջ համար, որ նա ինտենսիվ և ակտիվորեն մասնակցում էր»: Հ.Կ.

Այլևս վստահ չեմ՝ *«Քայլեր դեպի անձնական վերածնունդ»* գրքույկն չափազանց հուզեց ինձ: ... Ես ծնվել եմ ադվենտիստական ընտանիքում և համոզված էի, որ ճիշտ ուղու վրա եմ: Գլուխը, որը նվիրված է տասը կույսերին և հատկապես Հռոմեացիների 8:9. *«Հիմա եթե մեկը չունի Քրիստոսի Հոգին, նա Նրանը չէ»*, ինձ հիրավի ցնցեց:

Ես հանկարծ սկսեցի կասկածել՝ ունե՞մ արդյոք Սուրբ Հոգի և արդյոք Նա աշխատում է իմ մեջ, քանի որ իմ կյանքում ակնհայտորեն բացակայում էին համապատասխան «պտուղները»: Շաբաթ երեկոյան ես ավարտեցի կարդալ այս գրքույկը և անհուն տխրություն տիրեց ինձնով: Այնուհետև ես կարդացի գրքի վերջում տեղադրված աղոթքը և իմ մեջ առաջացավ խոր ցանկություն ստանալ Սուրբ Հոգին, թույլ տալով Նրան փոխել իմ սիրտը, և որ Աստված ձևավորի ինձ իր կամքին համապատասխան: Ա.Պ.

- ***Ճանաչեք ՆՐԱՆ.*** «Որոշ ժամանակ առաջ կարդացի վերածննդի մասին ձեր հոդվածը: Ես շուրջ երեք տարի է, ինչ զբաղվում եմ այս թեմայով: Այժմ ես սկսեցի կարդալ *«Քայլեր դեպի անձնական վերածնունդ»*-ը: Կարող եմ դրան միայն *«ԱՄԵ՛Ն»* ասել: Ուրախ եմ, որ այս էջերում հանդիպեցի «իմ սեփական» մտքերից շատ: Ես այնպիսի տպավորություն ունեի, որ մեր եկեղեցում մենք կորցնում ենք մեր առաքինությունը: Ես չեմ կարող ազատվել այն զգացումից, որ մենք բա՛ց ենք թողել տեսողությունից ամենակարեւորը: Մենք հաճախ ասում ենք. «Ի՞նչ է ճշմարտությունը», «Ինչպե՞ս պետք է ապրենք» կամ «Որքանո՞վ է կարևոր մարգարեությունները»: Ես չեմ պնդում, որ դա սխալ է: Բայց մենք կորցնում ենք տեսողությունը, թե ԻՆՉՈՒ է Աստված տվել մեզ այդ ամենը: Արդյո՞ք ճշմարտության նպատակն Աստծո հետ լիարժեք հաղորդակցվելը չէ: Արդյո՞ք այս բոլոր ասպեկտները չպետք է օգնեն մեզ ԻՐԱԿԱՆՈՒՄ ճանաչել Աստծուն: Արդյո՞ք մարգարեությունների նպատակը չէ, որ մենք ընդունենք Աստծո մեծությունն ու ամենակարողությունը, որպեսզի մենք գիտակցենք, որ Նա է պահում ողջ աշխարհը Իր ձեռքում և առաջնորդում նրան, ուստի նույնպես Նա կարող է առաջնորդել և ձևավորել մեր կյանքը: Ի՞նչ է հավերժական կյանքը: Հովհաննես 17:3. *«Եւ սա է յաւիտենական կեանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. Եւ նորան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիստոսին»*: Առակում փեսան պարզապես ասում է հինգ հիմար կույսերին. «Ես ձեզ չեմ ճանաչում»: Մեր հավատքի նպատակն է պարզապես ճանաչել Աստծուն, ՆՐԱ հետ հաղորդակցություն ունենալ, որպեսզի Նա կարողանա մեզ լցնել, ինչպես հին ժամանակներում լցրեց տաճարը (Բ Մնաց. 5:13-14): Եթե Նա հոսի մեր միջով, լցնի մեր ամբողջ էությունը, ապա ոչ թե մենք կապրենք, այլ Քրիստոսն կապրի մեր մեջ»: (հեղինակին սկզբնատառերը փոխվել են)

ՀՐԱՇԱԼԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔՆԵՐԻՆ

«Դ. Սմիթի «40 օր»-յակի երկրորդ գիրքը հիանալի օրհնություն էր ինձ համար: Որոշ մարդիկ, որոնց համար ես աղոթում էի, 180 աստիճանի շրջադարձ են ապրել իրենց կյանքում:

Այդ 40 օրվա ընթացքում ես շատ լուրջ զրույց ունեցա ընկերոջս հետ: Նա ասաց ինձ, որ վերջին մի քանի շաբաթների ընթացքում իր կյանքը բոլորովին նոր ուղղություն է ընդունել: Նա աղոթելու մեծ կարիք ուներ, նա ավելի շատ էր խորհում Աստծո խոսքի մասին և կարողացավ ազատվել այն բաներից, ինչից նախկինում կառչած էր և չէր կարող ազատվել: Ես հավաքվեցի հոգով և պատմեցի նրան «Աղոթքի 40 օր» գրքի մասին, ինչպես նաև խոստովանեցի, որ նա հինգ հոգուց մեկն է, ում համար ես աղոթում էի: Նա ուրախ զարմանքով պատասխանեց. «Ուրեմն, դո՞ւ ես պատասխանատուն այն ամենի, ինչը տողի է ունենում իմ կյանքում»:

Մի աղջիկ որոշել է իր կյանքը ամբողջությամբ նվիրել Աստծուն: Չնայած որ մանկուց հավատացյալ էր, նա ապրել է առանց Աստծո: Նա չէր հետաքրքրվում հավատքով և ամբողջովին հայտնվել էր աշխարհիկ կյանքի ծուղակը մեջ: Այժմ նա բոլորովին փոխվել, բոլորը, ովքեր ճանաչում էին նրան, զարմացած են, երբ տեսնում են նրան հիմա: Այսօր նա ինձ հետ ուսումնասիրում է աստվածաշնչյան դասերը և մասնակցում է մեր եկեղեցու «Աղոթքի 40 օր» ծրագրին և ցանկանում է խրախուսել ուրիշներին՝ ավելի լուրջ հավատքի կյանք ունենալ:

Մեկ այլ երիտասարդ աղջիկ, որի համար ես աղոթում էի, պետք է մասնակցեր մեկշաբաթյա դասընթացին և ապրեր մի բնակարանում այլ մասնակիցների հետ միասին: Նա անհանգստանում էր, թե ինչպես նա կկարողանա անցկացնել ժամանակը անծանոթ մարդկանց հետ: Նրա մեկնելուց մեկ օր առաջ ես քաջալերեցի նրան աղոթքով և ասացի, որ բավականին երկար ժամանակ աղոթում եմ նրա համար: Ուստի, մենք աղոթեցինք, որ Աստված խաղաղություն տա նրան այս իրավիճակում, և որ այս փորձը դառնա աղոթքի պատասխան: Դասընթացների ընթացքում նա զանգահարեց ինձ և հիացմունքով կիսվեց ինձ հետ, որ Աստված իր հետ ինչ-որ անհավատալի բան է կատարել: Տերը ոչ միայն տվեց նրան կատարյալ խաղաղություն, այլև տվեց համարձակություն չմասնակցել երեկոյան դիսկոտեկներին, որտեղ օգտագործվում է ծխախոտ, ալկոհոլ և այլն:

«Աղոթքի 40 օր» ծրագրից հետո ես շարունակում էի աղոթել այդ մարդկանց համար, քանի որ ես լսել և տեսել եմ այն մեծ բաները, ինչպե Աստված պատասխանում է աղոթքին»: Ա.Մ.

ԻՆՉՊԵՍ Է ԱՍՏՎԱԾ ԳՈՐԾՈՒՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

«Վերջին հինգ տարին ես լիովին կորցրել եմ կապը ինձ համար շատ կարևոր մարդու հետ: Նա կարծես թե անտեսում էր իմ հաղորդագրությունները: Ես լսել էի, որ վերջին երեք տարիների ընթացքում նա այլևս եկեղեցի չէր գնում (թեպետ նա մեծացել էր եկեղեցում): Եվ որ նա հարաբերություններ ունի ոչ քրիստոնյա կնոջ հետ: Ես այս երիտասարդին գրեցի իմ աղոթքի ցուցակը, չնայած չէի կարծում, որ հնարավոր կլինի նորից կապ հաստատել նրա հետ, քանի որ նա ապրում էր ինձանից 600 կմ հեռավորության վրա և երբեք չէր պատասխանում ինձ: Այնուամենայնիվ, ես աղոթում էի «կյանքի նշանի» համար:

Շուտով ես իմացա նրա եղբոր առաջիկա մկրտության մասին, որը «հանկարծակի» պետք է տեղի ունենար ինձանից մոտիկ մի վայրում և նշանակված էր «Աղոթքի 40 օր» ծրագրի ժամանակ (թեպետ այն ի սկզբանե պետք է տեղի ունենար մեկ այլ ամսաթվին): Ես որոշեցի գնալ այնտեղ և հանդիպել նրան: Մենք շատ խորը զրույց ունեցանք միմյանց հետ, և նա ասաց, որ որոշ ժամանակ անց նա ավելի ու ավելի մեծ կարիք էր զգում վերադառնալու Աստծուն, բայց ուժ չուներ փոխելու իր ապրելակերպը: Ես նրան ասացի, որ վերջին 20 օրը ես ինտենսիվ աղոթում էի նրա համար, և որ մինչ այդ նա եղել է իմ աղոթքների ցուցակում: Նա կորցրել էր խոսքի պարգևը, քանի որ այդ ժամանակվա ընդացքում նա զգացել էր, թե ինչպես է Աստված գործում իր վրա:

Մկրտության ծառայության ընթացքում նա շատ հուզված էր, և երբ հովիվը կոչ արեց, ես զգում էի նրա մեջ տեղի ունեցող պայքարը, և երկար պայքարից հետո՝ նա վերջապես ընկավ ծնկներին և սկսեց լաց լինել: Նա կրկին հանձնվեց Աստծուն: Երեկոյի ավարտին նա ասաց ինձ, որ որոշել է կրկին հաճախել եկեղեցի և փոխել իր ապրելակերպը: Նա երբեք չէր մտածում, որ այս հանգստյան օրերը հենց այդպես կավարտվեն:

Մի քանի շաբաթ անց ես հանդիպեցի նրան երիտասարդական առաքելության համաժողովում: Այս իրադարձությունն նրան ավելի զորացրել և ոգեշնչել էր: Շնորհակալ եմ Աստծուց այց սիրելի մարդու ապաշխարության համար»: Մ.Հ.

ԵԿԵՂԵՑԻՆ ԼՅՈՒԴՎԻԳՍԲՈՒՐԳՈՒՄ/ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՄԲԵՐԳ, ԳԵՐՄԱՆԻԱ

«Սկզբում մենք ուսումնասիրում էինք «Աղոթքի 40 օր» գիրքը զույգերով և աղոթքների ժամանակ մեծ անձնական օրհնություններ և հոգևոր աճ ունեցանք: Դրանից հետո մենք կազմակերպեցինք եկեղեցում աղոթքի հանդիպումներ՝ շաբաթը երկու անգամ, որտեղ եկեղեցու անդամների հետ միասին կարդում էինք գիրքը: Մենք հստակ զգացինք Աստծո օրհնությունը և առաջնորդությունը, ինչպես նաև ապրեցինք բազում հրաշքներ այս 40 օրերի ընթացքում: Աստված մեզ թարմացրեց և վերակենդանացրեց որպես եկեղեցի: Եկեղեցու անդամները, ովքեր երբեք քաջություն չէին ունեցել խոսելու անծանոթ մարդկանց հետ, հանկարծ սկսեցին սեփական նախաձեռնությամբ խոսել անծանոթների հետ: Համատեղ աղոթքների միջոցով Աստված մեզ ավելի է մերձեցնում իրար հետ՝ որպես եկեղեցի: Մենք այդ 40 օրվա ընդացքում ընկերակցության աղոթքներ էինք բարձրացնում մեր ցուցակներում գրված հինգ հոդու համար, որի արդյունքում ապրեցինք հատուկ փորձառություններ և ունեցանք մեծ արտոնություններ: Այդ մարդկանց կյանքում Աստված գործում էր հատուկ ձևով: Կրկին ու կրկին, շաբաթ օրը եկեղեցում ծառայությանը հայտնվում էին նոր մարդիկ դրսից: Այս ընտանիքներից մեկի հետ մենք աստվածաշնչյան ուսումնասիրություններ ենք անցկացնում: Նրանք իմացան շաբաթ օրվա մասին լուրը՝ ինտերնետում տեղադրված տեսանյութերից և «Մեծ պայքար» գրքից, և որոշ ժամանակ փնտրում էին եկեղեցին»: Կատյա և Քրիստիան Շինդլեր, Լյուդվիգսբուրգում Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին (կրճատված տարբերակ)

«ԱՂՈԹՔԻ 40 ՕՐ» ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԸ

«Ամեն ինչ սկսվեց *«Քայլեր դեպի անձնական վերածնունդ»* սեմինարից: Այդ ժամանակաընդացքում իմ մոտ ցանկություն առաջացավ փորձառություններ ունենալ Աստծո հետ ամենօրյա կյանքում: Հետո ես լսեցի «Աղոթքի և երկրպագության 40 օր» ծրագրի մասին: Ինձ համար միանգամայն պարզ դարձավ. ես ուզում եմ ապրել այս փորձառությունը: Իրականում ես նույնիսկ չէի պատկերացնում, թե ինչի եմ գնում: Հարմար աղոթքի գործընկեր գտնելը (որը ծրագրի մի մասն է) դժվար չէր: Ինձ համար խնդիր էր 40 օրվա ընթացքում ամեն օր ժամանակ գտնել մասնակցելու ծրագրին: Որպես բուժքույր, ես շատ անկանոն աշխատանքային ժամեր ունեմ: Ես նույնիսկ չէի էլ կարող մտածել դրա մասին: Այնուամենայնիվ, Աստված հենց սկզբից օրհնեց իմ որոշումը:

Ես ամեն անգամ անհամբեր սպասում էի օրվա այդ թանկարժեք րոպեներին, երբ մենք միմյանց հետ կիսվում էինք մտքերով թեմայի շուրջ և աղոթում Սուրբ Հոգու համար: Մենք նկատեցինք, թե ինչպես են այս աղոթքները փոխում մեր կյանքը: Մենք օգտագործում էինք յուրաքանչյուր հնարավորություն, որ միմյանց հետ կիսվենք տպավորություններով, քանի որ չեինք կարող պահել այն ինքներս մեր մեջ: Ինձ համար կարևոր էր խրախուսել այլ մարդկանց ապրել նույն փորձառությունները: Եւ արդյունքը չստիպեց իրեն երկար սպասել: Եկեղեցու մի քանի անդամ նույնպես վարակվեցին մեր խանդավառությամբ: Արագ կազմավորվեցին երկրպագության նոր զույգեր: Մենք անհամբերությամբ սպասում էինք շաբաթօևյա հանդիպումները, որպեսզի կիսվենք մեր փորձառություններով: Այս «վիրուսը» փոխանցվեց նաև մեր երիտասարդներից բավականին շատերին: Այս 40 օրը ավարտվեց շատ արագ: Մենք չէինք ուզում և պարզապես չէինք կարող կանգ առնել դրա վրա, ուստի շարունակեցինք հանդիպել և ուսումնասիրել Էլեն Ուայթի *«Մարանաթա»՝ «Տերը գալիս է»* գիրքը: Աստված չստիպեց մեզ երկար սպասել: Դեռևս 40 օրվա ընթացքում Նա մեզ տվեց աղոթքների շատ հրաշալի պատասխաններ: Ոմանք, ում համար մենք աղոթում էինք այս ժամանակաընդացքում, երկար բացակայություններից հետո սկսեցին կրկին այցելել եկեղեցի: Մենք չափազանց երջանիկ էինք: Ինձ շրջապատող մարդիկ դարձել էին ինձ համար ավելի մտերիմ: Աստծո սերը ուրիշների հետ կիսվելու իմ ցանկությունն ավելի ու ավելի էր ամրանում: Իմ կյանքը փոխվեց: Մեզանից շատերն ավելի լավ ճանաչեցին և հասկացան միմյանց: Մենք սկսեցինք մասնակցել միմյանց կյանքին և միմյանց աջակցել կարիքների մեջ: Մեր ընկերական կապերը անցան բոլորովին նոր մակարդակի: Դեննիս Սմիթի «Աղոթքներ և երկրպագություն 40 օրը» գիրքը ինձ շատ օգնեց: Գտնել աղոթքի գործընկեր և ճաշակել Աստծուն շատ ավելի հեշտ է, քան թվում է առաջին հայացքից: Մեզ համար թանկ մարդիկ շնորհակալ կլինեն մեզ այս բանի համար»: Հիլդեգարդ Վելքեր, Քրեյլշեյմի յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցի, վիրաբուժական բաժանմունքի բուժքույր (մի փոքր կրճատված է):

ՀԻՍՈՒՍԸ ՄԵՐ ՕՐԻՆԱԿՆ Է

- Հիսուսը մեր մեծագույն օրինակն է ամեն ինչում: Ղուկաս 3:21–22 համարներում կարդում ենք. *«Եւ բոլոր ժողովրդի մկրտուելու ժամանակին եղաւ, որ երբոր Յիսուսն էլ մկրտուեցաւ՝ եւ աղօթք էր անում, երկինքը բացուեցաւ, Եւ Սուրբ Հոգին մարմնաւոր տեսիլքով աղաւնու պէս իջաւ նորա վերայ. . .»:*

Այս իրադարձության մասին Էլեն Ուայթը ասաց հետևյալը. «Ի պատասխան Նրա աղոթքին Իր Հորը, երկինք բացվեց, և Հոգին իջավ աղավնու պես և մնաց Նրա վրա»: **130**

Տպավորի՞չ է, թե ինչ էր տեղի ունենում Նրա ծառայության ընթացքում: «Ամեն առավոտ նա հաղորդակցվում էր Իր Երկնային Հոր հետ, **ստանալով նրանից ամենօրյա Սուրբ Հոգու թարմ մկրտություն»**: **131** Եթե անգամ Հիսուսը Սուրբ Հոգով ամենօրյա թարմ մկրտության կարիք ուներ, ապա որքա՞ն ավել մենք ունենք դրա կարիքը:

---

130 E.G. White, Ye Shall Receive Power (1995), p. 14.4
131 E.G. White, Signs of the Time, Nov. 21, 1895

ԳԼՈՒԽ 7

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ և ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ուրախությունը՝ որը մենք շնորհում ենք ուրիշներին՝ կրկին մեզ է վերադառնում: (Գերմանական ասացվածք)
Ինչպե՞ս կարող եմ օգնել ուրիշներին զգալ «Կյանքը առատությամբ» (Հովհ. 10,10)

ԻՆՉՊԵՍ ԱՐԹՆԱՑՆԵԼ ՈԳՈՎ ԼՑՎԱԾ ԿՅԱՆՔԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ.

Ի՞նչ կարող են անել եկեղեցու ղեկավարներն ու անդամները: Ահա մի քանի գաղափարներ այն մասին, թե ինչ կարող ենք անել մենք՝ որպես ղեկավարներ (նախագահներ, հովիվներ, եկեղեցու կամ միության քարտուղարներ, հաստատությունների ղեկավարներ և այլ պատասխանատու անձինք) համագործակցելով Եկեղեցու խորհուրդների, եկեղեցիների և խմբերի հետ:

Հնարավորությունները

1. Հանդիպումներ զույգերով. Ուսումնասիրեք «40 օր»-յակի ծրագրը ձեր ամուսնու կամ մեկ այլ աղոթքի զույգընկերոջ հետ: Սկսեք 40-օրյակի առաջին գրքից՝ Դենիս Սմիթ. «40 օր՝ Աղոթքներ և նվիրվածություն՝ երկրորդ գալուստին նախապատրաստվելու համար»: Հնարավորության դեպքում՝ հետագայում օգտագործեք 40-օրյակի երկրորդ գիրքը՝ «40 օր. Աղոթքներ և նվիրվածություն՝ Աստծո հետ ձեր փորձառությունը վերակենդանացնելու համար»: Երբ ամուսնական զույգը միասին երկրպագություն է ունենում, դա շատ շահավետ է և նպաստում է փոխադարձ ջերմության: Բնականաբար, դուք կարող եք նաև երկրպագել մեկ ուրիշի հետ միասին: Գերազանց է, եթե դա լինեն անձնական հանդիպումներ, բայց կարելի է նաև կապվել հեռախոսով, skype- ով կամ այլ միջոցներով: Երկու հոգուց բաղկացած երկրպագության խմբերը ունենում են շատ մեծ ազդեցություն: Աստծո խոսքը խորհուրդ է տալիս աղոթել երկուսով (Մատթ. 18:19) և աշխատել երկուսով (Ղուկաս 10:1): Երկրպագության այս եղանակը ուրիշներին ոգեշնչելու լավագույն նախապայմանն է:

2. Ներկայացրե՛ք կամ կիսվեք գրականությամբ: Օրինակ՝
«Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գրքույկը (հասանելի է անվճար կամ ցածր գնով՝ թարգմանված բոլոր լեզուներով): Ընթերցողների ավելի քան 80 վկայություններ և հարյուրավոր ընթերցողների արձագանքներ ցույց են տվել, որ այս գրքույկը գնահատվում է հատկապես հետևյալի համար.

* նա բացում է աչքերը մարդու հոգեւոր վիճակի վրա (ավելի մանրամասն տե՛ս Գլուխ 2-ը)
* Տեսանելի է դարձնում դեպի հոգևոր կյանք տանող քայլերը.
  Ամեն օր հանձնվել Քրիստոսին՝ խնդրելով Սուրբ Հոգի: [DA 676.2]
  Մնացած անձնական քայլերը Սուրբ Հոգին բացում է յուրաքանչյուր մարդուն առանձնահատուկ (ավելի մանրամասն տե՛ս Գլուխ 3-ը):
  * Աղոթելով աստվածաշնչյան խոստումներով՝ նրանք վստահություն ունեին, որ ստացել են Սուրբ Հոգին (ավելի մանրամասն տե՛ս Գլուխ 5-ը)
* Վերածննդի մեծ ուրախությունը դրդում է մարդուն վկայել և տարածել գրքույկները:

Շատերի անձնական փորձառություններից մենք եկել ենք այն եզրակացության, որ «Քայլեր դեպի անձնական վերածնունդ»-ի օգտագործումը 40-օրյակի 1-ի և 2-րդ գրքերի հետ միասին՝ հրաշալի արդյունքներ է բերում: «Քայլեր դեպի անձնական վերածնունդ»-ը բացում է աչքերը և հիանալի աջակցություն է ցուցաբերում Աստծո հետ նոր կյանքի ճանապարհին: 40-օրյակի գրքերը ընդլայնում և օգնում են ամրապնդել հոգևոր կյանքը: Ավելին, դրանք խրախուսում են առավոտյան անձնական երկրպագություն ունենալ և ընթերցողները ստանում են իրենց շատ աղոթքների պատասխանը:

3. Կարճ ընթերցումներ Երկրպագության ծառայության ընթացքում. Ժամանակ առ ժամանակ քարոզից առաջ կարող եք ընթերցվել փոքր հատվածներ Սուրբ Հոգու հետ կյանքի վերաբերյալ (հինգից՝ տաս րոպե): Դրա համար առաջարկվող գրականությունը ներկայացված է հաջորդ կետում: Որոշ ժամանակ անց մարդկանց կարելի է խրախուսել կազմել զույգերով խմբեր, կամ մասնակցել 40-օրյակի ծրագրին (տե՛ս կետ 12):

4. Հատվածներ մեր գրականությունից. որոնք կարելի է տպագրվել եկեղեցու տեղեկագրում կամ կարդալ հայտարարությունների ժամանակ:
* «Դարերի փափագը», գլ. 73՝ «Ձեր սրտերը թող չխռովվեն»
* «The Acts of the Apostles», գլ. 5՝ «Հոգու պարգևը»
* «Քրիստոսի առակները», գլ. 12՝ «Խնդրել՝ այլոց տալու համար»
* «Testimony Treasures», հատոր 3, «Հոգու խոստումը», էջ 209-215
* Մտորումներ մեկ օրվա ընթացքում՝ է. Ուայթի «Դուք կընդունեք զորություն» առավոտյան ընթերցումներից (հասանելի է ձեր տեղական ադվենտիստական գրքերի կենտրոնում):

5. Կիսվեք փորձառություններով. Երկրպագության ընթացքում հնարավորինս հաճախ կիսվեք հոգևոր փորձառություններով: Կարելի է կիսվել եկեղեցու այլ անդամների կամ ձեր անձնական փորձառություններով: Դուք կարող եք գտնել բազմաթիվ փորձառություններ՝ սեղմելով «Վկայություններ» https://steps-to-personal-revival.info/testimonies/ կայքում

6. Իմպուլս-շաբաթօրյակի չորս մասից սեմինար. Սա, թերևս, առավել արդյունավետ մեթոդմ է՝ եկեղեցում արագ հետաքրքրություն առաջացնելու համար: Այս մեթոդը ներառում է 3-4 ներկայացում. ուրբաթ երեկոյան, շաբաթօևյա առավոտյան ծառայության և կրկին երեկոյան ծառայության: Հնարավոր ընդհանուր թեման կարող է լինել «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» ծրագիրը. Տե՛ս www.steps-to-personalrevival.info :

* Ուրբաթ երեկոն՝ շաբաթվա ամենահարմար ժամանակն է փորձառություններով կիսելու համար՝ ընտրեք նրանցից ամենահուզիչները: Հնարավորության դեպքում դա պետք է լինի խոսողի անձնական փորձառությունը: Մեկ այլ հնարավորությունն է՝ խոսել «Հանձնվել Հիսուսին» թեմայով: Դրա համար մտքեր կարող եք գտնել «Հարատեվիր՛ Հիսուսում» գրքույկում՝ «Հանձնվել Հիսուսին» գլխում:

* Շաբաթօրյա ծառայության ժամանակ խորհուրդ է տրվում քարոզել առանցքային մտքերը «Քայլեր դեպի անձնական վեևածնունդ» գրքից: Ավելի ճշգրիտ լինելու համար՝ կիսվեք Սուրբ Հոգու բացակայության մասին նախաբանից 2-3 մեջբերումներով: Շարունակեք 1-ին գլխի՝ «Ի՞նչ Հիսուսն ուսուցանում Սուրբ Հոգու մասին» և 2-րդ գլխի՝ «Ո՞րն է մեր խնդիրների հիմքը» հիմնական մտքերը (կարելի է բաժանել դրանք երկու առանձին ժամերի):
* Առաջին կեսօրվա հանդիպման ընթացքում կիսվեք 3-րդ գլխի՝ «Մեր խնդիրները՝ Հնարավո՞ր է արդյոք գտնել դրանց լուծումը: Ինչպե՞ս» հիմնական մտքերը:
* Երկրորդ հանդիպման ընթացքում կիսվեք «Գործնական փորձի բանալին» 5-րդ գլխի հիմնական մտքերից:

Այն եկեղեցիներում, որտեղ արդեն անցկացվել է «Քայլեր դեպի անձնական վերածնունդ»-ի առաջին սեմինարը, կարելի է անցկացնել շաբաթօրյա այլ սեմինար՝ օգտագործելով «Մնալ Հիսուսի մեջ» գրքույկի թեմաները: Որպես սեմինարների չորս թեմաներ կարելի է օգտագործել չորս առանձին գլուխներ:

Իմպուլս-շաբաթօրյակին նախապատրաստվելիս օգտակար կլինի նախապես բաժանել համապատասխան գրականությունը՝ առաջարկելով այն ուշադիր ուսումնասիրել: Ավելի լավ է սկսել 40-օրվա աղոթքի ծրագիրը իմպուլս-շաբաթից հետո հաջորդ շաբաթավերջին (տե՛ս 12-րդ կետը) կամ «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գրքի համատեղ ընթերցմանը զուգահեռ (տե՛ս 7-րդ կետը):

7. Համակարգված ընթերցում. շաբաթական մեկ գլուխ. Պարզ և հաջող հնարավորություն է՝ ամեն շաբաթ կարդալ մեկ գլուխ «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» կամ «Մնալ Հիսուսի մեջ» կամ 40-օրյակի գրքերի մեկից (նույնիսկ ավելի լավ է այդ գլուխը կարդալ մեկից ավելի անգամ): Ծրագիրը սկսելու օրը կարող է ընտրել խումբը կամ ամբողջ եկեղեցին: Դա կարելի է անել կամ չորս մասից բաղկացած սեմինարի նախապատրաստման ընթացքում (տե՛ս կետ 6), կամ իմպուլս-շաբաթօրյակից հետո: Յուրաքանչյուր անհատ կարող է որոշել՝ արդյոք նա ցանկանում է կարդալ այն միայնակ, մեկ այլ անձի հետ, թե խմբով: Շաբաթ օրը լավ կլինի մոտ 5 րոպե կարդալ համապատասխան գլխի հիմնական մտքերը, ապա հրավիրել մարդկանց կիսվել իրենց անձնական վկայություններով: Եթե չկան անձնական վկայություններ, դուք կարող եք կարդալ այլ մարդկանց վկայությունները (նախապատրաստեք նախօրոք՝ «Վկայություններ» բաժնից): Դրանից հետո հայտնեք, թե որ գլուխն է ընթերցվելու հաջորդ շաբաթվա ընթացքում: 40-օրյակի գրքերը կարող եք պատվիրել www.spiritbaptism.org կայքում

8. **Քարոզեք** Սուրբ Հոգու հետ ապրելու մասին, կամ խրախուսեք և խնդրեք մեկ ուրիշին դա անել: Դուայթ Նելսոնի հիանալի քարոզների հավաքածու կա. «Հիմք զրո և նոր բարեփոխում. ինչպե՞ս մկրտվել Սուրբ Հոգով» ընդհանուր վերնագրի տակ: Սեպտեմբերի 2-ից սկսվող քարոզները և օգոստոսի 30-ի և սեպտեմբերի 13-ի նրա բլոգերը գտնվում են հետեւյալ հասցեով. www.pmchurch.tv/sermons

9. **Կատարեք աստվածաշնչյան ուսումնասիրություններ** Սուրբ Հոգու հետ ապրելու մասին, կամ բարձրաձայն կարդացեք դրանք:

10. **Փոքր խմբերը կամ աղոթքի խմբերը** կարող են կարդալ և քննարկել առաջարկվող գրականությունը և միասին աղոթել: Բացի այդ, անհրաժեշտ է խրախուսել, որ «40-օր»-յակի ծրագիրն անցնող մարդկիկ ստեղծեն երկու հոգանոց խմբեր, և ապա շաբաթը մեկ անգամ ամբողջ խումբը հանդիպի քննարկման, փորձառությունների փոխանակման և համատեղ աղոթքի համար (տե՛ս կետ 12):

11. **Առաքելության շաբաթներ -** Քանի որ Սուրբ Հոգու հետ կյանքը մեզ միսիոներներ է դարձնում, լավ կլինի մշտական հիմունքներով կամ նույնիսկ որոշակի ժամանակահատվածում, վերականգնել առաքելության շաբաթները: Դա մեր պիոներների հիմնարար տարրն էր: Մեր նախորդները առաքելության շաբաթը անց էին կացնում յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթ օրը: Աղոթքի նախապատրաստման և իրականացման համար պետք է պատասխանատվություն կրի պատասխանատու անձը կամ փոքր խմբի ղեկավարը: Եթե դա զուգակցվում է վերը նշված հնարավորություններից մի քանիսի հետ, դա կարող է նպաստել, որ շաբաթ օրվա ժամերը լինեն կառուցողական եւ երջանիկ: Բացի այդ, դա կարող է արթնացնել եկեղեցու առաքելության ոգին:

12. **Ուսումնասիրեք և քննարկեք «40-օր»-յակի հայեցակարգը:** Այս հայեցակարգը ներկայացված է «40-օր»-յակի առաջին, երկրորդ եւ երրորդ գրքերում՝ «Ներածություն և ակնարկ» բաժնում: Հետևաբար, դուք կարող եք այն քննարկել՝ եկեղեցու խորհրդի, միության խորհրդի կամ կոնֆերենցիայի խորհրդի ժամանակ: Այս հայեցակարգը կարելի է ներկայացնել նաև հովվական ժողովներում, երեցների ժողովներում, միսիոներական և երիտասարդական հանդիպումներում, առողջարաններում կամ ուսումնական հաստատություններում: Այս հայեցակարգը օգնում է հետևյալ ոլորտներում.

* Օգնում է ավելի սերտ հարաբերություններ ունենալ Հիսուսի հետ Սուրբ Հոգու միջոցով:
* Օգնում է ամրապնդել աղոթքի կյանքը (միայնակ, զույգերով կամ խմբերով):
* Օգնում է մեր անձնական հարաբերությունները դարձնել ավելի խորը:
* Օգնում է ամրապնդել հոգևոր կյանքը՝ Սուրբ Հոգու համար 40-օրյա աղոթքների միջոցով:
* խրախուսում է ընկերակցության աղոթքներ անել՝ հեռացած և անհավատ մարդկանց համար և կապ հաստատել նրանց հետ:
* Աջակցում է ավետարանչությանը, միսիոներական ծառայությանը և աստվածաշնչյան ուսումնասիրություններին:

Սա իրականացվում է երեք հոգևոր քայլերով.

* Անձնական հոգևոր վերածնունդ 40-օրյա զույգերով աղոտքների միջոցով: (Գրքերում ներառված են «Քննարկման հարցեր» և ամենօրյա աղոթքներ Սուրբ Հոգու մասին):
* Հոգով լցված ընկերակցության աղոթքները, և յուրաքանչյուր անձ կապ է հաստատում հինգ անհավատ կամ եկեղեցուց հեռացած մարդկանց հետ:
* Ավետարանական միջոցառումներ (շնորհանդեսներ/սեմինարներ, միսիոներական խնամքի խմբեր, Աստվածաշնչի ուսումնասիրություն, փոքր կամ միջին ցուցահանդեսներ՝ ինչպիսիք են առողջության, ստեղծման կամ մարգարեությունների մասին ցուցահանդեսները):

Նրանց համար, ովքեր ներգրավված կլինեն «40 օր» ծրագրի կազմակերպման մեջ, ստեղծվել է հատուկ ուղեցույց, որը կարելի է ներբեռնել հետևյալ հղումով. http://spiritbaptism.org/documents/40_Days_Instruction_Manual.pdf. Այն պարունակում է բոլոր անհրաժեշտ քայլերը, որոնք կոգնեն «40 օր» ծրագիրը հաջող անցկացնել: Առաջարկվող հոգևոր ուղեցույց նախատեսված ավետարանական շարքի լավագույն նախապատրաստությունն է: Այսպիսով, եկեղեցու ղեկավարներն ու անդամները հոգևորապես պատրաստված են: Իսկ շնորհիվ նրա, որ յուրաքանչյուր անձ կապվում է հինգ անհավատ մարդկանց հետ և իրենց համար ընկերակցության աղոթքներ անում՝ պատրաստվում է ավետարանական դաշտը: Կարող են օգտագործվել ավետարանչության տարբեր տեսակներ: «40 օր» ծրագրի Դենիս Սմիթի գրքերը կարող եք պատվիրել՝ կապվելով մեզ հետ՝ www.spiritbaptism.org միջոցով:

13. Բաժանեք "40 օր" ծրագրի **տեղեկատվական թերթիկները** եկեղեցու բոլոր անդամներին: Բացի այդ, խորհուրդ է տրվում հրավիրատոմսեր անել ձեր եկեղեցում «40-օր» ծրագրի մեկնարկի օրվա համար:

14. Հրապարակել **համապատասխան հոդվածներ** տեղական եկեղեցու, միության, կոնֆերենցիաի տեղեկագրերում, եկեղեցու հրատարակություններում, վեբ կայքում:

15. **Հարցում.** Սուրբ Հոգու թեմայով շնորհանդեսից հետո կարելի է թերթիկներ բաժանել անանուն կարճ հարցման համար.

- Եթե դուք աղոթում է Սուրբ Հոգու համար հաճախ կամ ամեն օր՝ դրե՛ք մեկ նիշ:
- Եթե դուք աղոթում է Սուրբ Հոգու խոստումներով՝ դրե՛ք երկու նիշ:

Սա լավ միջոց է որոշելու, թե որն է ձեր եկեղեցու ներկայիս կարգավիճակը:

Վերը նշված բոլոր նախաձեռնությունների ժամանակ շատ կարևոր է **աղոթքի նախապատրաստումը և աղոթքը**: Առավել արժեքավոր կլինի, եթե խնդրեք առանձին անհատներին, աղոթքի խմբերին կամ նույնիսկ ամբողջ եկեղեցուն աղոթել որոշակի գաղափարների համար՝ դրանց իրականացման և հաջողության հասնելու համար:

ԻՆՉՊԵՍ ՏԱՐԱԾԵԼ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նպատակը.
Մի եղբայր ասել էր. «Այս ուղերձը պետք է հասնի յուրաքանչյուր ադվենտիստական ընտանիքին՝ ամբողջ աշխարհում: Ես կանեմ այն ամենը, ինչ կախված է ինձնից», և նա դա ակտիվորեն անում է: Մի քույր գրել է. «Այս գրքույկը պետք է թարգմանվի բոլոր հիմնական լեզուների, իսկ ավելի լավ է՝ բոլոր լեզուների»: Նա ստացավ իր կոնֆերենցիաի աջակցությունը և այժմ քարոզում է այս թեման իր ամբողջ տարածքում: Ավելին՝ Աստծո ղեկավարության շնորհիվ նա հազարավոր գրքույկներ է բերել հարևան երկիր, որտեղ նախկինում չէին ընդունում քրիստոնեական հավատքը:

Զարգացում և ֆինանսներ.
Աստծո ղեկավարության շնորհիվ՝ «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» գրքույկը կփոխանցվի բոլոր ադվենտիստական ընտանիքներին իրենց մայրենի լեզվով՝ անվճար կամ նվազագույն գնով: Հովիվների օգնությամբ բազմաթիվ կոնֆերենցիաներ և միություններ արդեն անվճար օրինակներ են փոխանցել իրենց տարածքներում գտնվող ընտանիքներին: Այս հարցում առաջամարտիկներն էին Շվեյցարիայի շվեյցարա-գերմանական կոնֆերենցիան, Ավստրիայում Ավստրիական միությունը և Գերմանիայում Բադեն-Վյուրտեմբերգի կոնֆերենցիան:

Այս նախագիծը զարգանում է Աստծո հատուկ ազդեցության ներքո: Աստծո առաջնորդությամբ և Նրա շնորհով մինչև 2017 թվականը տարածվել է ավելի քան 600.000 օրինակ: Մենք հրավիրում ենք ձեզ աղոթել, որ Տերը շարունակի առաջնորդել մեզ և անհրաժեշտ միջոցներ տրամադրել ծրագրի հետագա իրականացման համար: Սովորաբար մենք միջոցներ ենք հայցում ուժեղ ֆինանսական բյուջե ունեցող կոնֆերենցիաներից կամ միություններից՝ տպագրական ծախսերը հոգալու համար: Ուրիշների համար, հատկապես միսիաների, մենք, Աստծո օգնությամբ, ցանկանում ենք ֆինանսավորել ամեն ինչ ինքներս: Բայց վերջնական ընթերցողը միշտ պետք է ստանա նյութը անվճար կամ ցածր գնով, նույնիսկ մեծ քանակությամբ.

Համառ անձնական ցանկություն

Մենք ցանկանում ենք, որ դուք կարողանաք օգնեք ուրիշներին, որպեսզի բարի լուրը հասնի նրանց: Այն մարդը, ով ցանկանում է ինչ-որ բան կիսել ուրիշների հետ, պետք է ինքն անձնապես օրհնված լինի այս ուղերձով և զգա Քրիստոսին իր սրտում՝ ամեն օր ստանալով Սուրբ Հոգին: Կարդացեք «Դարերի փափագ» գրքի, 676 էջը, որտեղ պարունակվում է Հովհ. 15:4-ում գրված Հիսուսի խոսքերի մեկնաբանությունը :

«Կացեք Ինձանուն և Ես ձեզանուն»: Սա նշանակում է երկու բան.

* Նրա հոգին մշտապես ստանալը
* Նրա ծառայությանը անվերապահ նվիրումով լի կյանք
* Ինչո՞ւ Հիսուսը տվեց այս ակնարկը: «Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ իմ ուրախութիւնը (Հիսուսի ուրախությունը՝ Սուրբ Հոգու պտուղն է Գաղ. 5:22) ձեզանում մնայ, եւ ձեր ուրախութիւնը լցուած լինի»: (Հովհ. 15:11)

Տարածման հնարավորություններ:

Աղոթք.
Կարևոր է, որ մարդկանց հետ Ավետարանով կիսվելը նախապատրաստվի ընկերակցության աղոթքով: «Evangelism» գրքում էջ. 341 է. Գ. Ուայթն գրում է. «Դուք պետք է աշխատեք հոգիների համար շատ աղոթքների միջոցով, քանի որ միայն այս կերպ կարող եք հասնել իրենց սրտերին»:

Գրքույկների տարածում
Դուք կարող եք տարածել գրքույկը՝ մարդկանց հետ կիսելով ձեր փորձառությունները և տպավորությունները: Դրանք կարող են լինել ընկերներ, ղեկավարներ և մարդիկ, ովքեր զբաղեցնում են առանցքային պաշտոններ եկեղեցիներում, կոնֆերենցիաներում և միություններում, տպագրություններում, միսիոներական նախագծերում և այլ հաստատություններում: Դուք կարող եք նաև կազմակերպիչների թույլտվությամբ կազմակերպել գրքույկների զանգվածային հանրային բաժանում որևէ ընդհանուր ժողովի ընթացքում: Հիշեք, որ այս գրքույկը պետք է ստանա յուրաքանչյուր ադվենտիստական ընտանիք՝ անվճար կամ ցածր գնով: Գրքույկը կարելի է նաև ուղարկել փոստով կամ փոխանցել այն մարդկանց միջոցով, ովքեր անձամբ հանդիպելու են ստացողներին:

Տարածում ինտերնետի միջոցով

Լուրը տարածելու ամենաժամանակակից եղանակը՝ էլեկտրոնային փոստի միջոցովն է: Հաղորդագրությունը ուղարկվել է Ավստրալիա, իսկ այնտեղից փոխանցվել է Հնդկաստանի Միզորամ քաղաք: Այն նաև Բրազիլիայի տարածքով հասավ Պակիստան: Հաղորդագրությունը կարող եք կարդալ www.schritte-zur-persцnlichenerweckung.info կայքում: Կարող եք այն տպել և/կամ փոխանցել մեկ կամ բոլոր լեզուներով թարգմանված հղումը: Դուք կարող եք նաև տեղեկացնել մարդկանց, որ կայքը հասանելի է անգլերեն՝ www.steps-to-personal-revival.info հասցեով: Շուտով, Աստծո կամքով և նվիրված թարգմանիչների աջակցությամբ, այս հաղորդագրությունը հասանելի կլինի 20 լեզուներով, իսկ մի փոքր ուշ՝ և-ս 8 լեզվով: Աստծո օգնությամբ, անշուշտ, այս գործը առաջնթաց կունենա:

Գրքի էլեկտրոնային տարբերակի տարածում: Անվճար էլեկտրոնային գիրքը այս կայքում հասանելի է «epub» և «mobi» ձևաչափերով: Կարող եք նաև պատվիրել էլեկտրոնային գիրքը Amazon-ի միջոցով 1,00 եվրոյով:

Տարածում սոցիալական ցանցերի միջոցով

Շատ արդյունավետ է կիսել կայքի կամ գրքերի PDF-ների հղումները ընկերների և ծանոթների հետ՝ Facebook-ի, Google+-ի, Twitter-ի կամ WhatsApp-ի նման սոցիալական ցանցերի միջոցով: Հղումներ տարածելով և կայք հրավիրելով՝ դուք կարող եք կապ հաստատել ձեր կոնտակտների հետ, ինչպես նաև այլ մարդկանց հետ՝ տարբեր երկրներում և մայրցամաքներում:

Տարածում քարոզների և սեմինարների միջոցով

Բոլոր հովիվներն ու քարոզիչները հրաշալի հնարավորություն ունեն կիսվել այս լուրը եկեղեցու հետ մեկ կամ մի քանի քարոզների միջոցով: Դուք կարող եք դա անել ձեր սեփական ուսումնասիրությունների հիման վրա, կամ օգտագործելով գրքույկից ստացված նյութերը: «Ես երբեք չեմ քարոզել մի թեմա, որը եկեղեցին նախկինում արդեն լսել կամ կարդացել է: Մանկավարժական հետազոտությունների շնորհիվ ես այսօր գիտեմ, որ բացարձակապես անհրաժեշտ է կարդալ կամ լսել այս կարևոր թեման 6-10 անգամ» (եղբոր Հելմուտ Հաուբեյլի անձնական փորձառությունները և խորհուրդները): Հիմա, իմանալով այդ գաղափարը, ես այլևս խնդիր չունեմ քարոզելու այն բանը, ինչի մասին մարդիկ արդեն կարդացել կամ լսել են նախկինում: Եթե ցանկանում եք, կարող եք նշել, որ հիմնական մտքերն ու մեջբերումները քաղել եք գրքույկից:

Եթե դուք չեք քարոզում, կարող եք խնդրել ուրիշներին օգտագործել այս թեման իրենց քարոզներում:

Շաբաթօրյա սեմինարը՝ «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» ընդհանուր թեմայով պետք է պարունակի առնվազն երեք թեմա.

109

Քարոզ.

Ո՞րն է մեր խնդիրների առանցքը:

Արդյո՞ք մեր խնդիրները ունեն հոգևոր հիմք:

Մեզ պակասո՞ւմ է Սուրբ Հոգի:

Ինչպե՞ս ես կարող եմ ինքնուրույն ախտորոշել իմ հոգևոր կյանքը:

(Սրանք ներածության, ինչպես նաև 1 և 2 գլուխների հիմնական մտքերն են):

1. Կեսօրվա ծրագիր:

Մեր խնդիրները լուծելի են, բայց ինչպե՞ս:

* Ինչպե՞ս կարող ենք զարգացնել երջանիկ/ուրախ և հզոր քրիստոնեական կյանք: Ինչպե՞ս է Սուրբ Հոգին լցնում մեր կյանքը: Գաղտնի բառը «ամեն օր»-ն է:

(Սրանք 3-րդ գլխի հիմնական մտքերն են)

2. Ցերեկային կամ երեկոյան ծրագիր

Գործնական կիրառման հիմնական կետեր/Ինչպես կիրառել այն գործնականում (Գործնական փորձի բանալին):

* Ինչպե՞ս կարող եմ գործնականում կիրառել և զգալ Աստծո ծրագիրը իմ կյանքում:
* Ինչպե՞ս պետք է աղոթեմ, որպեսզի վստահ լինեմ, որ լցված եմ Սուրբ Հոգով:
* (Սրանք 5-րդ գլխի հիմնական մտքերն են):

Անձնական վկայություններ

Շատ արժեքավոր է կիսվել անձնական վկայություններով հետևյալ թեմաների վերաբերյալ.

* անձնական տպավորությունների և բացահայտումների, որոնք կատարվել են նյութերի ուսումնասիրության ժամանակ,
* այն ազդեցության, որն այս լուրը բերել է մեր կյանք:

Թարգմանությունը ձեր տեղական լեզվով

Եթե գրքույկը չի թարգմանվել ձեր մայրենի լեզվով, գուցե դուք կարող եք աղոթքի և Աստծո նախախնամության շնորհիվ գտնել մեկին, ով պատրաստ և ունակ է դա անել: Թարգմանիչը, որին անձամբ անդրադարձել է լուրը, մեծ առավելություն ունի: Մինչ այժմ թարգմանությունների մեծ մասը կատարվել է կամավոր, քանի որ թարգմանիչները նույնպես շատ հետաքրքրված էին այս լուրի տարածմամբ: Բայց երբեմն թարգմանությունները նախաձեռնվում էին՝ ապրելու միջոց վաստակելու համար: Այդ թարգմանիչներին «եղբայրական» աշխատավարձ էր վճարվում: Մենք շնորհակալ կլինենք, եթե դուք անձամբ կապվեք Հելմուտ Հաուբեյլի հետ թարգմանության հարցերով: Նա ունի մի քանի լավ խորհուրդներ, որոնցով նա կարող է կիսվել, և հետևում է, որ գրքույկը հասանելի լինի նույն ձևաչափով բոլոր լեզուներով :

ԵՁՐԱՓԱԿԻՉ ՄՏՔԵՐ

Սուրբ Հոգու միջոցով մենք հրաշալի առաջնորդ ունենք կյանքի բոլոր իրավիճակներում և ուժ՝ որը համարժեք են Նրա փառքի հարստության:

Այսպիսով, մեր բնավորությունը կարող է փոխվել, և մենք կարող ենք դառնալ Աստծո աշխատանքում արժեքավոր գործիքներ: Ամենօրյա նվիրումը և Սուրբ Հոգու մկրտությունը կհանգեցնի մեր կյանքում իրական առաջընթացի:

Տերը ուզում է պատրաստել մեզ համաշխարհային պատմության մեծագույն իրադարձություններին: Նա ցանկանում է, որ մեզանից յուրաքանչյուրն անձամբ պատրաստ լինի Իր գալուստին, որպեսզի Սուրբ Հոգու զորությամբ մենք միասին աշխատենք Ավետարանի գործն ավարտին հասցնելու համար: Նա ցանկանում է մեզ հաղթանակով անցկացնել դժվարին ժամանակներով:

Թող Աստված ձեզ տա անձնական զարթոնք և բարեփոխում՝ ամեն օր հանձնվելով Սուրբ Հոգուն և ամեն օր Սուրբ Հոգով մկրտվելով:

- Ուզում եմ ավարտել աստվածաշնչյան տեքստով և վերածննդի աղոթքով: «Եւ իմ ժողովուրդը, որի վերայ կոչուած է իմ անունը, խոնարհուին եւ աղօթք անեն եւ իմ երեսը խնդրեն եւ իրանց չար ճանապարհներիցը ետ դառնան, այն ժամանակ ես կ’լսեմ երկնքիցը եւ կ’ներեմ նորանց մեղքը եւ կ’բժշկեմ նորանց երկիրը»: (2 Մնաց. 7:14).

Աղոթք: Երկնային Հա՛յր, խնդրում ենք, տուր մեզ խոնարհություն (Միք. 6:8): Դիր մեր սրտերում աղոթելու և Քո դեմքը փնտրելու մեծ ցանկություն: Դարձրա մեզ պատրաստակամ և օգնիր մեզ շրջվել մեր չար ուղիներից: Լրացրա մեզանում բոլոր նախադրյալները և Քո խոստման համաձայն՝ տո՛ւր մեզ լսել Քո պատասխանը: Ներիր մեզ մեր մեղքերի համար և բուժիր մեզ մեր գաղջությունից և հավատուրացությունից: Խնդրում եմ, օգնիր մեզ ամեն օր հանձնվել Հիսուսին և հավատքով ստանալ Սուրբ Հոգին: Ամեն:

«Վերածնունդ կարելի է սպասել միայն ի պատասխան աղոթքի»: **132** «Սուրբ Հոգու մկրտությունը, ինչպես Պենտեկոստեի օրը, կհանգեցնի ճշմարիտ կրոնի վերածննդի և շատ հրաշալի գործերի իրականացման»: **133**

---

132 E.G. White, Selected Messages, Book 1 (1958), p. 121.1
133 E.G. White, Selected Messages, Book 2 (1958), p. 57.1

ՀԱՎԵԼՎԱԾ
Առաջարկություն հետագա ուսումնասիրության համար

Կարևոր առաջարկ. կարդացեք այս գրքույկը, հնարավորության դեպքում, ամեն օր վեց օրվա ընթացքում:

Կրթական հետազոտությունները ցույց են տվել, որ, որպեսզի մարդը կարողանա մանրակրկիտ հասկանա այսպիսի կենսական թեման, անհրաժեշտ է այն ընթերցել կամ լսել վեցից տաս անգամ: Արդյունքները կհամոզեն ձեզ:

Մի ուսուցիչ փորձել էր այդ. «Այս քաջալերող խոսքերը՝ «Փորձիր գոնե մեկ անգամ: Արդյունքը կհամոզի քեզ» գերեցին ինձ: Ես ուզում էի փորձել դա և երրորդ ընթերցումը գրավեց ինձ և ես մեծ սեր զգացի մեր Քավչի հանդեպ, ինչի մասին ես փափագում էի իմ ամբողջ կյանքը: Երկու ամսվա ընթացքում ես կարդացի գրքույկը վեց անգամ և արդյունքն արժեր դրան: Ասես ես կարող էի հասկանալ, թե ինչին է դա նման է, երբ Հիսուսը մոտենում է մեզ, և մենք կարող ենք նայել Նրա մաքուր, բարի և սիրող աչքերին: Այնսուհետև ես այլևս երբեք չէի ցանկանա ապրել առանց այս ուրախության իմ Փրկչիչով»: Ք.Պ.

Ես ստացել եմ շատ շնորհակալական ու խանդավառ վկայություններ Սուրբ Հոգով նոր կյանքի մասին: Գրեթե բոլորն էլ ինտենսիվորեն վերընթերցել են գրքույկը մի քանի անգամ:

40-ՕՐՅԱ ԾՐԱԳՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Դուք կարող եք գտնել բազմաթիվ օգտակար նյութեր «40 օր» ծրագրի և դրան հաջորդող ավետարանական ծրագրի կազմակերպման վերաբերյալ՝ Դենիս Սմիթի «40 օր» գրքի. www.SpiritBaptism.org կայքում:

Սուրբ Հոգու հետ ապրելու նոր փորձառություններ

- Մեր Տեր Հիսուսն ասաց. «Բայց դուք զօրութիւն կ’առնէք՝ երբոր Հոգին ձեզ վերայ կ’գայ, եւ իմ վկաները կ’լինիք …»: (Գործք 1:8)

Հատուկ խնդրանք. Եթե ձեր կյանքում Սուրբ Հոգու հետ անձնական հարաբերությունների կամ վկայության որևէ փորձառություն լինի, մենք շատ երախտապարտ կլինեինք, եթե դուք համառոտ նկարագրով ուղերձ ուղարկեիք Հելմուտ Հաուբեյլին, որպեսզի նա կարողանա կիսել այն Missionsbrief-ում (փոքր գերմանական տեղեկագիր՝ միսիոներական աշխատանքի մասին): Խնդրում եմ նշեք, եթե ցանկանում եք, միայն ձեր սկզբնատառերը կամ ձեր լրիվ անունն ու եկեղեցին, ուր հաճախում եք: Խնդրում ենք հիշել, որ ձեր փորձը կարող է ամրացնել ուրիշներին, որպեսզի նրանք աճեն իրենց Սուրբ Հոգու հետ ճանապարհորդելիս, կամ Սուրբ Հոգու հետ ճանապարհորդությունը սկսելու համար:

Կոնտակտային անձ՝ Հելմուտ Հաուբեյլ (Հասցեն՝ կազմի վրա)

Ներկա ժամանակում ես երկու եկեղեցու հովվում եմ Կալիֆոռնիայում: Առաջին անգամ ես հանդիպեցի ձեր նյութին, երբ լսում էի հովիվ Դուայթ Նելսոնին (տե՛ս ստորև)՝ նրա շաբաթական փոդքասթում: Դա անմիջապես ազդեց իմ հոգու վրա: Նախկինում ես շատ էմ լսել Սուրբ Հոգու մասին նյութեր, բայց խոստովանեմ, որ երբեք առանձնապես չեն հոգացել դրա համար: Ես միանշանակ հավատում եմ, որ ինչ-ինչ պատճառներով Աստված ընտրեց այս ներկա ժամանակը՝ Սուրբ Հոգով ավելի շատ մարդկանց հասնելու համար: Եվ շատ ուրախ եմ, որ գտա այն ձեր ջանքերի շնորհիվ:

Ես կարող եմ վկայել ձեզ մի բան. հենց առաջին գլխում մենք հանդիպում ենք պարզ ձևով շարադրված շատ հզոր ճշմարտությունների, որոնք կոչ են անում մեզ կանգ առնել և վերանայել մեր կյանքը: Բազմակի ընթերցանության առաջարկված գործընթացը շատ արդյունավետ է: Բոլոր նրանց համար, ում հետ ես խոսում եմ, քննարկում և քարոզում այս գրքի մասին, Սուրբ Հոգու թեման կրկին դառնում է ավելի ու ավելի գրավիչ: Կարծես առաջին անգամ ենք լսում այդ մասին: Ես կարող եմ տեսնել դա իմ վրա: Չէի կարող առաջին գլխից առաջ անցնել, առանց դրանում ընդգրկված թեմայի շուրջ առնվազն 3 քարոզ քարոզելը: Ես պարզապես չգիտեմ, թե ինչպես դա ավելի լավ բացատրել, բայց ես չէի կարող դադարել կարդալ գիրքը, և դրա արդյունքները զգացվում էին իմ եկեղեցիներում: Ես իրոք տարածում էի այդ լուրը, և անցյալ տարվա ընդացքում իմ շրջանում զգալի աճ է գրանցվել: Այդ ամենը ես վերագրում եմ Աստծուն և նրան, թե ինչպես Սուրբ Հոգին զորացրեց մեր անդամներին: Նոր տարում մենք ակնկալո՛ւմ ենք ավելի մեծ բաների:
D.R. 2018 թվ. հունվար (հատված)

Հովիվ Դվայթ Նելսոնը՝ Էնդրյուս համալսարանի «Պիոներների հիշատակի» եկեղեցու առաջատար հովիվն ասել է, որ այս փոքրիկ գիրքը («Քայլեր դեպի անձնական վերածնունդ») «Փոխել է ինձ ներսից: Ես ուզում եմ, որ նույնն անի քեզ համար»:

Նա քարոզել է՝ «Էպիկենտրոնը և Նոր Ռեֆորմացիան. Ինչպե՞ս մկրտվել Սուրբ Հոգով» երեք քարոզների շարքը:
Նա մեջբերումներ է արել «Քայլեր դեպի անձնական վերածնունդ» դրքից և խորհուրդ է տվել այն ուսումնասիրել: Դա հանգեցրեց գրքերի հազարավոր ներբեռնումների և պատվերների:
Նրա անձնական վկայությունները և երեք քարոզները գտնվում են www.steps-to-personal-revival.info կայքում:

Ցանկանո՞ւմ եք ունենալ երջանիկ և լիարժեք հավատքի ուրախ կյանք՝ լի հուզիչ փորձառություններով:

Եթե այո, ապա այս գիրքը հենց ձեզ համար է: Մարդիկ ինձ հետ կիսվել են ավելի քան 500 փորձառություններով, թե ինչպիսի դրական փոփոխություններ են նրանք ապրել իրենց հավատքի կյանքում՝ կարդալով այս գիրքը: Հետևաբար, այս նոր ստանդարտ հրատարակությանը լրացուցիչ նյութեր են ավելացվել: Նրանք ցույց են տալիս, թե ինչպես «Քայլեր դեպի անձնական վերածնունդ»-ը կարող է տանել մեզ դեպի.

❧ Ճանաչել Հիսուսի կողմից մեզ տրված բոլոր նվերներից ամենաթանկարժեքը՝ Սուրբ Հոգին

❧ Ճիշտ ինքնագնահատական տալ մեր հոգևոր կարգավիճակի վերաբերյալ

❧ Հասկանալ երկու պարզ քայլ, որոնք տանում են դեպի գրավիչ հոգևոր կյանք և փրկության մեջ վստահության ձեռքբերման:

❧ Իմանալ Սուրբ Հոգու զորությամբ և առաջնորդությամբ կյանքի մեծ առավելությունները և թե ինչ կորուստներ ենք կրում առանց Նրա:

❧ Գիտակցել, որ խոստումներով մեր աղոթքները բոլորովին այլ որակ ունեն: Ապա մենք կաղոթենք ավելի ուրախ, վստահությամբ և խորությամբ: Այդպիսի աղոթքից հետո կարող ենք վստահ լինել, որ ստացել ենք Սուրբ Հոգին:

❧ Նրանց մեծ ուրախությունը դրդում է նրանց դառնալ վկաներ և գրքի տարածողներ:

Աստված ցանկանում է մեծ փոփոխություններ կատարել ձեր կյանքում: Դա շատ կարեւոր է, թե արդյոք դուք աշխատում եք Աստծո *համար*, կամ թե մեր հիանալի Տերը կարող է աշխատել *ձեր միջոցով:* Հիսուսը փափագում է ձեզ հետ ունենալ մտերիմ հարաբերություններ: Նա նաև ուզում է ձեր միջոցով մտերմանալ ուրիշների հետ: Գրքի բազմակի վերընթերցումից ստանում ենք մեծ օրհնություններ ու ուրախություն: Ուսումնասիրեք և կիրառեք առաջարկությունները վեց շաբաթվա ընթացքում (3 x 14 օր) և կզարմանաք, թե ինչ փոփոխություններ կկատարի Աստված ձեր կյանքում: